



Հայաստան

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության 37

Հեռ.՝ +374 10 546 434

Էլ. փոստ՝ info@evconsulting.com

www.evconsulting.com

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ կողմից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ



**Օգոստոս, 2021
Երևան, Հայաստան**

Հապավումներ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԴԿՏՀ	Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԿԱԻ	Կրթության ազգային ինստիտուտ
ԿԶՆԱԿ	Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն
ԿԾԿ ԾԻԳ	«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԱԱՀ	Հայաստանի ազգային ագրարային համալսարան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿՑ	Հայաստանի կրթական ցանց
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԳԱԱ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ՀՀ ԿԳՄՄՆ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄԿԿՏՀ	Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
ՆՄՀ	Նորարարությունների մրցակցային հիմնադրամ
ՎԶԳ	Վաղ զարգացման գործակից
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՀՏ	Տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	6
3. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	21
ԲԱՂԱԴՐԻՉ 1. Հանրակրթության որակի բարելավում	21
Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում	21
Ենթաբաղադրիչ 1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը	31
Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման ԵՎ առաջընթացի մշտադիտարկման բարելավում	42
Ենթաբաղադրիչ 1.4. Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով.....	56
ԲԱՂԱԴՐԻՉ 2. Աջակցություն Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը	64
4. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	77
ՀԱՎԵԼՎԱԾ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	79

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կրթության բարելավում» վարկային ծրագրի արդյունքների վերջնական գնահատման հետազոտությունն ուսումնասիրում է Ծրագրի արդյունքներն ու նախապես սահմանված կատարողականի ցուցանիշների ապահովման մակարդակը, ամբողջական տեղեկություն տալիս Ծրագրի իրականացման մասին և քննության առումով շահառու կողմերի տեսակետներն իրականացված աշխատանքների ու արդյունքների վերաբերյալ: Հետազոտությունը նաև դիտարկում է Ծրագրի իրականացման փորձն ու բացահայտված խնդիրները ՀԲ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի իրագործման համատեքստում: Հետազոտությունն իրականացվել է «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ կողմից 2021 թվականի մայիսից-օգոստոս ժամանակահատվածում:

Հետազոտության իրականացման համար անհրաժեշտ բազմակողմանի և համապարփակ տեղեկատվության առկայությունն ապահովելու համար օգտագործվել է քանակական և որակական տվյալների երկու բազա՝ առկա երկրորդային տվյալներ և նոր հավաքագրված առաջնային տվյալներ:

Առկա տվյալների աղբյուրներն են՝

- ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի եռամսյակային հաշվետվությունները,
- «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրերի ամփոփիչ հաշվետվությունը,
- «Կրթության բարելավում» վարկային ծրագրի գործառնական ձեռնարկը,
- արտաքին խորհրդատվական կազմակերպությունների և փորձագետների՝ Ծրագրի շրջանակում ներկայացրած հաշվետվությունները,
- վարկային ծրագրի հետ առնչվող այլ փաստաթղթեր, նորմատիվ ակտեր, հաշվետվություններ և ձեռնարկներ:

Առաջնային տվյալների հավաքագրման աղբյուրներն են՝

- Ծրագիրն իրականացնող և Ծրագրի հետ առնչվող կառույցների ու շահառուների հետ մանրակրկիտ հարցազրույցները,
- Ծրագրի շահառուների հետ իրականացված ֆոկուս-խմբերը,
- Ծրագրի շահառուների շրջանում իրականացված քանակական հարցումները:

Երկրորդային և առաջնային քանակական և որակական տվյալների համադրման հիման վրա կատարվել են վերլուծություններ և հաշվարկվել են կատարողականի փաստացի ցուցանիշները: Որոշ ցուցանիշների հաշվարկման համար հիմք են ծառայել առկա համապատասխան կառույցների տրամադրած երկրորդային տվյալները, իսկ մյուսների համար օգտագործվել են հարցումների միջոցով հավաքագրված նոր, առաջնային տվյալները: Վերլուծությունների համար առկա քանակական տվյալները համադրվել են որակական տվյալների հետ, որոնք հավաքագրվել են հետազոտության շրջանակում: Առաջնային

տվյալների հավաքագրման ընթացքում ապահովվել է բոլոր հիմնական շահառուների մասնակցությունը: Նմանատիպ մոտեցման նպատակն է ապահովել փաստերի համակողմանի վերլուծությունը և տարբեր շահառուների տեսակետների ներկայացումը:

Ծրագրի վերջնական գնահատումը կատարվել է Ծրագրի նպատակային և ենթաբաղադրիչների միջանկյալ ցուցանիշների կատարման ամփոփման հիման վրա: Յուրաքանչյուր ենթաբաղադրիչի կատարման գնահատումը կատարվել է նախատեսված նպատակներին հասնելուն ուղղված գործողությունների և փաստացի արդյունքների վերլուծության հիման վրա: Ենթաբաղադրիչների գնահատման ընթացքում հաշվի են առնվել Ծրագրի արդյունքների և ազդեցության վրա արտաքին փոփոխությունների ներգործությունը, հաջողությունների և անհաջողությունների վրա ազդող հիմնական գործոնները և ենթաբաղադրիչի իրագործման հետ կապված տարբեր ռիսկերը:

Հետազոտությունը եզրափակվում է Ծրագրի արդյունքների հիման վրա կատարված հիմնական եզրակացություններով ու առաջարկություններով, որոնք ուղղված են Ծրագրի գործողությունների շարունակականության ապահովմանը և ինչպես Հայաստանի, այնպես էլ այլ երկրների կրթության ոլորտում Համաշխարհային բանկի նոր վարկային ծրագրի գործողությունների արդյունավետության բարձրացմանը:

2. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի (Ծրագիր) արդյունքների վերջնական գնահատման հետազոտության նպատակն է ուսումնասիրել Ծրագրի արդյունքների համապատասխանությունը նախապես սահմանված կատարողականի ցուցանիշներին և տրամադրել համապարփակ տեղեկություններ Ծրագրի իրականացման վերաբերյալ: Հետազոտության նպատակներից են նաև Ծրագրի իրականացման փորձի վերհանումը և խնդիրների բացահայտումը, որոնք հաշվի կառնվեն ծրագրի հետագա փուլերի իրականացման ժամանակ: Հետազոտությունն իրականացվել է Ի-Վի Քոնսալթինգ ընկերության կողմից 2021թ. ապրիլ-հուլիս ժամանակահատվածում, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի պատվերով:

Ծրագրի նկարագիրը

Ծրագիրն իրականացվել է 2015-2021 թթ. ընթացքում¹: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը կրթական համակարգի զարգացումն ուղղորդելու դեպի գիտելիքահեն տնտեսության պահանջները՝ ապահովելով հասարակության սոցիալ-տնտեսական պահանջներին համապատասխան հանրակրթության և բարձրագույն մասնագիտական կրթության որակի աճ:

Հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտում ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության իրականացման և բարեփոխումների շարունակականությունն ու ամբողջականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ էր ավարտին հասցնել առանցքային կարևորության մի շարք գործընթացներ: Ծրագիրն հաշվի է առել կրթական բարեփոխումների առաջնահերթությունները, ինչպես նաև ապահովել ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրով (2009-2015) իրականացված գործողությունների շարունակությունը և ընդլայնումը:

Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից, առաջին բաղադրիչը ներառում է 4 ենթաբաղադրիչ:

¹ Ծրագրի իրականացումը մեկնարկի պահին նախատեսված էր 2015-2019 թթ. համար: 2018 թ.-ին Ծրագրի ավարտը երկարաձգվել է մինչև 2021 թ. սեպտեմբերի 30:

**«Կրթության բարելավում»
վարկային ծրագիր**

Բաղադրիչ 1. «Հանրակրթության որակի բարելավում»
«Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում»
«Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը»
«Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում»
«Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով»

Բաղադրիչ 2. «Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը»

Ծրագրի իրականացման պետական լիազոր մարմինը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է, իսկ իրականացնողը՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակը: Ծրագրի իրականացման հիմնական գործընկեր կողմեր են Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, մարզպետարանների աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունները, դրամաշնորհային ծրագիր իրականացնող բուհերը, դպրոցներն ու նախակրթարանները և այլոք:

Ծրագրի իրականացման նպատակով ՀԲ-ի հատկացրած գումարը կազմում է 30 մլն ԱՄՆ դոլար՝ Ծրագրի 80%-ը: Ծրագրի ընդհանուր արժեքի 20%-ը կազմում է ՀՀ պետական համաֆինանսավորումը:

Հաշվի առնելով որոշ գործողությունների իրականացման համար լրացուցիչ ժամանակի անհրաժեշտությունը՝ 2018թ. հուլիսի 10-ին ՀՀ կառավարությունը հաստատել է ԿԳՄՍ-ի միջնորդությունը ծրագրի վերջնաժամկետը երկարաձգել 24 ամսով՝ մինչև 2021թ-ի սեպտեմբերի 30-ը:

«Կրթության բարելավում» վարկային ծրագիրը մեկնարկել է 2014թ.-ի նոյեմբերի 20-ին: Ծրագրի իրականացման ընթացքում ծրագրի ենթաբաղադրիչների որոշ գործողություններ էականորեն շեղվել են իրականացման ժամանակացույցից, ինչն էլ հանգեցրել է ընդհանուր ծրագրի իրականացման ժամկետների ուշացման: Մասնավորապես՝ ԿՏԱԿ-ի և ավագ

դպրոցների հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են էական ուշացումներով ստորև նշված պատճառներով.

- Առաջին փուլով հիմնանորոգվող հինգ ավագ դպրոցների տեխնիկական նախագծման աշխատանքներում նախատեսված չի եղել իրականացնել շենքի սեյսմիկ ամրացման աշխատանքների և ծախսերի նախահաշվարկ: Նշված գործողության իրականացման համար անհրաժեշտ է եղել լրացուցիչ 11 ամիս ժամանակ:
- ԿՏԱԿ-ի սեփականության գրանցման Կառավարության ընթացակարգերի արդյունքում գործողության իրականացման համար պահանջվել է լրացուցիչ 1 տարի ժամանակ:
- Երկրորդ փուլով հիմնանորոգվող 12 ավագ դպրոցների վերջնական նախահաշվի ընդհանուր գումարը (30.7 մլն ԱՄՆ դոլար) էականորեն գերազանցել է նախնական նախահաշվի ընդհանուր գումարը (11.7 մլն ԱՄՆ դոլար): Ստեղծված իրավիճակում սույն գործողությունը ժամանակավորապես դադարեցվել է, և միայն 2017թ-ի հունիսի 20-ին վարչապետի գրասենյակը որոշում է կայացրել հիմնանորոգվող դպրոցների քանակը 12-ից կրճատել 6-7-ի և մեկնարկել հիմնանորոգման աշխատանքները: Արդյունքում, երկրորդ փուլում Ծրագրում ներառվեց 8 դպրոց:
- ԿՏԱԿ-ի շենքի հիմնանորոգման վերջնական նախահաշվի ընդհանուր գումարը (\$900 հազ) էականորեն գերազանցել է կառավարության նախնական նախահաշվի ընդհանուր գումարը (\$270 հազ): 2017թ-ի հունիսի 20-ին վարչապետի գրասենյակը որոշում է կայացրել սկսել ԿՏԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքները համաձայն վերջնական նախահաշվի: Աշխատանքները մեկնարկել են միայն 2018թ.-ի ապրիլ ամսին:

Ծրագրի գործողությունների իրականացման ժամկետների ուշացման պատճառ է հանդիսացել նաև երկրում տնտեսական ճգնաժամը: Այսպես օրինակ՝ ավագ դպրոցների բնագիտական լաբորատոր սարքավորումների գնման գործընթացին նախորդող նախապատրաստական աշխատանքներն ավարտվել են 2016թ.-ին, սակայն 2017-2018թթ. երկրում տնտեսական և անկայուն քաղաքական իրավիճակով պայմանավորված կառավարությունը չի իրականացրել անհրաժեշտ հատկացումները գնումների գործընթաց սկսելու համար: Արդյունքում՝ նշված գործողությունը ժամանակավորապես դադարեցվել է, և միայն 2018թ.-ին որոշում է կայացվել բնագիտական լաբորատորիաների գծով (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն) սարքավորումներն ու կահույքը մատակարարել միայն առաջին փուլով հիմնանորոգված 99 ավագ դպրոցներին: Հիմնանորոգվող 8 ավագ դպրոցներում լաբորատոր գույքի և սարքավորումների մատակարարումն ամբողջությամբ կիրականացվի հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո՝ մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը:

Ծրագրով նախատեսված մի շարք այլ գործողություններ ևս ծրագրի իրականացման ժամանակահատվածում ժամանակավորապես դադարեցվել են՝ պայմանավորված Հայաստանում Թավշյա հեղափոխությամբ: Հեղափոխության արդյունքում ձևավորված նոր

կառավարությունը հետագայում ուսումնասիրել և որոշում է կայացրել շարունակել ծրագրով նախատեսված գործողությունները:

Ծրագրի իրագործման ժամանակահատվածում Հայաստանում տեղի են ունեցել նաև ինստիտուցիոնալ փոփոխություններ, որոնք որոշակի ազդեցություն են ունեցել ծրագրի առանձին ենթաբաղադրիչների իրականացման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ

	ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ (ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԾՐԱԳՐԻ ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ	ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ	ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1.	2019թ. ՀՀ կառավարության օպտիմալացման արդյունքում ԿԳՆ-ն միավորվել է մշակույթի և սպորտի և երիտասարդության նախարարությունների հետ, և վերանվանվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:	Բաղադրիչներ 1 և 2	Մեծ Միջին Ցածր Ազդեցություն չի ունեցել	Փոխվել են նախարարության՝ ծրագրի իրականացման գործում առանցքային նշանակություն ունեցող պաշտոններ զբաղեցնող անձինք՝ նախարար, փոխնախարարներ, հանրակրթության վարչության և բաժնի պետեր:
2.	2016թ. սկսվել է «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ լուծարման գործընթացը, որն ավարտվել է 2019թ.:	Ենթաաբաղադրիչ 1.1	Մեծ Միջին Ցածր Ազդեցություն չի ունեցել	Դրանով պայմանավորված դադարեցվել են ուսուցիչների նախաատեստավորման նպատակով իրականացվող վերապատրաստումները և ատեստավորման գործընթացները: Նախակրթարանների մասնագետների վերապատրաստումը հետագայում կազմակերպել է ԻՍ.Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարանը:
3.	2021թ. ստեղծվել է «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» (ԿԶՆԱԿ) հիմնադրամը:	Ենթաաբաղադրիչ 1.4	Մեծ Միջին Ցածր Ազդեցություն չի ունեցել	ԿԶՆԱԿ-ը շարունակելու է իրականացնել ԿԱԻ-ի որոշ գործառույթներ: Մասնավորապես՝ առարկայական չափորոշիչների փորձաքննության, կրթության քաղաքականության իրականացման մշտադիտարկման և վերահսկողության և այլ գործառույթներ:
4.	2015-2021թ.թ ընթացքում բուհերը հիմնականում վերակազմակերպվել են հիմնադրամների:	Բաղադրիչ 2	Մեծ Միջին Ցածր Ազդեցություն չի ունեցել	2017 թվականից հետո փոփոխության է ենթարկվել ռեկտորների և տարբեր ստորաբաժանումների ղեկավար, ինչպես նաև հոգաբարձուների խորհուրդների կազմը: Որոշ բուհեր (Շիրակի մանկավարժական պետական համալսարան, Երևանի պետական համալսարան) տևական ժամանակ ղեկավարում են ժամանակավոր պաշտոնակատարներ: Արդյունքում՝ բուհերում իրականացվող ծրագրերի ոչ բոլոր գործողություններն են իրականացվում, մասնավորապես ԵՊՀ-ի «Դեղերի մոնիտորինգի կենտրոն»-ում հոգաբարձուների խորհրդի բացակայության պատճառով հաստիքներ չի բացվում:

5.	<p>ՀՀ կառավարության 2019 N 1503-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորման նոր բանաձևը:</p>	<p>Բաղադրիչ 1</p>	<p>Մեծ Միջին Ցածր Ազդեցություն չի ունեցել</p>	<p>Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևում ներառվել է դպրոցի երեխաների թվաքանակի, տարբեր կրթական աստիճանների դասարանների թվով պայմանավորված, միջին հաշվով մեկ դասարանին ընկնող ուսուցչական դրույքների թվի բաղադրիչները:</p>
----	---	-------------------	--	---

Աղբյուր՝ Ի-Վի Քոնսալթինգ ընկերության հետազոտություն, 2021թ.

Ծրագրի արդյունքի և միջանկյալ արդյունքների ցուցանիշների կատարողականը

Բաղադրիչ 1-ով նախատեսված գործողությունները հիմնականում կատարվել են, և սահմանված արդյունքի 4 ցուցանիշներից 3-ն ապահովվել է, մեկը (Ծրագրի շահառու հանդիսացող ավագ դպրոցներ, որոնք համապատասխանում են Հայաստանի շինարարության և անվտանգության չափանիշներին և որոնք հագեցած են կրթական ժամանակակից ռեսուրսներով) կապահովվի մինչ ծրագրի վերջնաժամկետը՝ 2021թ.-ի սեպտեմբերի 30-ը:

Բաղադրիչ 2-ի համար սահմանված արդյունքային ցուցանիշը 14 ավարտված դրամաշնորհային ծրագրերի դեպքում 100%-ով կատարված է, իսկ ընթացիկ 6 ծրագրերի համար ավարտված կլինի մինչ ծրագրի վերջնաժամկետը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Ցուցանիշ	Ելակետային տվյալ	Փաստացի, 2021 Հուլիսի 31-ի դրությամբ
Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում		
1. Դրամաշնորհ ստացած նախադպրոցական հաստատությունների և դպրոցների սովորողների բարելավված ՎՁԳ միավորներ		
Թիրախային		Մասնակից խմբի երեխաների ՎՁԳ միավորները նշանակալիորեն բարձր են սպորտի խմբի երեխաների ՎՁԳ միավորներից:
Փաստացի	41.49 (2018)	Մասնակից խմբի երեխաների ՎՁԳ ցուցանիշը ուսումնական տարվա վերջին տարեսկզբի նկատմամբ բարելավվել է միջինում 35 տոկոսային կետով (2019թ.-ին՝ 76.82) և նաև գերազանցում է ստուգիչ խմբի երեխաների ցուցանիշը:
2. Ծրագրի շահառու հանդիսացող ավագ դպրոցների քանակի ավելացում, որոնք համապատասխանում են Հայաստանի շինարարության և անվտանգության չափանիշներին և որոնք հագեցած են կրթական ժամանակակից ռեսուրսներով		
Թիրախային		13 (2015)
Փաստացի	-	6 (2021թ.-ի հուլիս)
3. Կրթական համակարգում հաղորդակցության արդյունավետության բարձրացում SCS-ի միջոցով:		
Թիրախային		Այո (2015)
Փաստացի	-	Այո (2021)
4. Կրթության որակի բարձրացում կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով: Սովորողների գիտելիքների և հմտությունների բարելավում համաձայն արդի պահանջների:		
Թիրախային		9 (2015)
Փաստացի	-	6* (2021)
Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը		
5. Բարձրագույն կրթության որակի, համապատասխանության և մատչելիության բարելավում; կրթական և ենթակառուցվածքային կարողությունների բարելավում և արդիականացում:		
Թիրախային		Այո (2015)
Փաստացի		Այո (2021)

Ծանոթագրություն

Կատարվել է
Կատարվել է մասնակի
Չի կատարվել

* Հայաստանում ԵՄ-ն ի նպաստ նորարարության STEM փորձնական ծրագիրը STEM առարկաների մասով համադրվում է «Կրթության բարելավում» վարկային ծրագրի 1.4 ենթաբաղադրիչին, ուստի՝ թիրախավորված 9 առարկայական ոլորտների փոխարեն ծրագրի շրջանակում վերանայվել են 6 առարկայական ոլորտների չափորոշիչներ և ուսումնական ծրագրեր՝ բացառելով «STEM» առարկաները:

Ծրագրի համար սահմանված են 15 միջանկյալ արդյունքի ցուցանիշ: Բաղադրիչ 1-ի համար սահմանված արդյունքի 12 միջանկյալ ցուցանիշներից 6-ը սույն ուսումնասիրության մշակման պահին ամբողջությամբ կատարված են: Չորսը կատարված կլինեն մինչ ծրագրի ավարտը՝ 2021թ.-ի սեպտեմբերի 30-ը: Թիրախային արդյունքի երկու ցուցանիշ հետազոտության իրականացման պահի դրությամբ արդյունավետ չէր չափել, քանի որ ծրագրով իրականացված գործողությունների ազդեցությունը, որը պետք է հանգեցնի թիրախային ցուցանիշի կատարմանը, ի հայտ է գալու միայն 1-2 տարի անց:

ԾՐԱԳՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Ենթաբաղադրիչ	Ցուցանիշ	Թիրախ	Փաստացի, 2021 Հուլիսի 31-ի դրությամբ
1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում	1. Ծրագրի շրջանակում աջակցվող համայնքներում նախադպրոցական հաստատությունների քանակը	134	136
	2. Նախագծի աջակցությամբ 4-6 տարեկան երեխաների քանակը, որոնք ընդունվել են նախադպրոցական հաստատություններ	3,450	3,462
1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը	3. Ծրագրի ավարտին ավագ դպրոցների քանակ, որոնք համապատասխանում են Հայաստանի շինարարության և անվտանգության չափանիշներին	13	6
	4. Ծրագրի իրականացման արդյունքում հիմնանորոգված դասասենյակների քանակը	162	86
	5. Ծրագրի շրջանակներում տրամադրվող լաբորատորիաներով հագեցած ավագ դպրոցների քանակի ավելացում	107	99
	6. Ծրագրի շրջանակում հիմնանորոգված դպրոցներում սովորողների հաճախումների բարելավում	Այո	Տես՝ նշումը*
1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում	7. Հիմնական և բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ՝ ընդհանուր և բարձրագույն կրթության համար, ինտեգրված և գործող	Այո	Այո
	8. Հայկական դպրոցների սարքավորումային-տեխնիկական կարիքները գնահատված են, թիրախային դպրոցներում թարմացվել են, բացակայող թեմաների համար տրամադրվել են էլեկտրոնային ռեսուրսներ	Այո	Այո

Ենթաբաղադրիչ	Ցուցանիշ	Թիրախ	Փաստացի, 2021 Հուլիսի 31-ի դրությամբ
	9. Վարչական և մանկավարժական անձնակազմի քանակ, որը վերապատրաստվել է դասապրոցեսի ընթացքում ՏՀՏ գործիքների կիրառության համար:	4,000	~3,300
1.4. Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով	10. Հանրակրթության մասին ազգային ռազմավարական փաստաթուղթը վերանայված է և հաստատված կառավարության կողմից	Այո	Այո
	11. Առարկաների քանակ, որոնց չափորոշիչները և ուսումնական ծրագրերը վերանայվել և հաստատվել են կառավարության կողմից	9	6
2.Բաղադրիչ Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը	1. Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) աջակցությամբ պետական-մասնավոր հաստատությունների համագործակցությունների քանակ	5	7
	2.ՆՄՀ բաղադրիչի շահառու բուհերի քանակ	15	18
	3.ՆՄՀ-ի շրջանակում առկա դրամաշնորհների քանակ, որոնք իրականացրել են իրենց առջև դրված նպատակների առնվազն 80 տոկոսը:	18	14

Ծանոթագրություններ

	Կատարվել է
	Կատարվել է մասնակի
	Չի կատարվել

Նշում. Գործողության իրական ազդեցությունը որոշելու նպատակով արդյունավետ է չափել 1-2 տարի անց:

ԲԱՂԱԴՐԻՉ 1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 1-Ի ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

N		ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՓԱՍՏԱՑԻ, 2021 Հուլիսի 31-ի դրությամբ
1	Դրամաշնորհի ստացած նախադպրոցական հաստատությունների և դպրոցների սովորողների բարելավված ՎԶԳ միավորներ	Կատարված
2	Ծրագրի շրջանակում աջակցվող համայնքներում նախադպրոցական հաստատությունների քանակ,	Գերակատարված
3	Նախագծի աջակցությամբ 4-6 տարեկան երեխաների քանակը (3,450), որոնք ընդունվել են նախադպրոցական հաստատություններ	Գերակատարված
4	Ծրագրի ավարտին ավագ դպրոցների քանակ, որոնք համապատասխանում են Հայաստանի շինարարության և անվտանգության չափանիշներին (13)	Մասնակի կատարված, ընթացքում է
5	Ծրագրի իրականացման արդյունքում հիմնանորոգված դասասենյակների քանակը (162)	Մասնակի կատարված, ընթացքում է
6	Ծրագրի շրջանակներում տրամադրվող լաբորատորիաներով հագեցած ավագ դպրոցների քանակի ավելացում (107)	Մասնակի կատարված, ընթացքում է
7	Ծրագրի շրջանակում հիմնանորոգված դպրոցներում սովորողների հաճախումների բարելավում	Տես՝ նշումը**
8	Հիմնական և բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ՝ ընդհանուր և բարձրագույն կրթության համար, ինտեգրված և գործող	Կատարված
9	Հայկական դպրոցների սարքավորումային-տեխնիկական կարիքները գնահատված են, թիրախային դպրոցներում թարմացվել են, բացակայող թեմաների համար տրամադրվել են էլեկտրոնային ռեսուրսներ	Կատարված
10	Վարչական և մանկավարժական անձնակազմի քանակը (4,000), որը վերապատրաստվել է կրթության կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգերի օգտագործման համար	Մասնակի կատարված, ընթացքում է
11	Հանրակրթության մասին ազգային ռազմավարական փաստաթուղթը վերանայված է և հաստատված կառավարության կողմից	Կատարված է
12	Առարկայական ոլորտների քանակը (9), որոնց չափորոշիչները և ուսումնական ծրագրերը վերանայվել և հաստատվել են կառավարության կողմից	Կատարված*

*Նշում՝ Հայաստանում ԵՄ-ն ի նպաստ նորարարության STEM փորձնական ծրագիրը «STEM» առարկաների մասով համադրվում է «Կրթության բարելավում» վարկային ծրագրի 1.4 ենթաբաղադրիչին, ուստի՝ թիրախավորված 9 առարկայական ոլորտների փոխարեն ծրագրի շրջանակում վերանայվել են 6 առարկայական ոլորտների չափորոշիչներ:

Ենթաբաղադրիչ 1.1. Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված ծրագրերը նպաստել են ներգրավված նախակրթարանների սովորողների վաղ զարգացման գործակցի (ՎԶԳ) միավորների բարելավմանը: Մասնակից խմբի երեխաների ցուցանիշը ուսումնական տարվա վերջին տարեսկզբի նկատմամբ բարելավել է միջինում 35 տոկոսային կետով և նաև գերազանցում է ստուգիչ խմբի երեխաների ցուցանիշը: Ծրագրով նախատեսված 134 նախակրթարանների փոխարեն հիմնվել է 136-ը, որոնք ներկայումս գործում են Հայաստանի բոլոր մարզերում՝ բացառությամբ մեկի: «Երևանի Ա. Չեխովի անվան հ.55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ներկայումս լիցենզավորման փուլում է: 2015-2020թթ. ընթացքում ծրագրի շրջանակում հիմնված նախակրթարաններում միայն ստեղծման առաջին տարում ընդգրկված երեխաների թիվը կազմել է 3,462 երեխա՝ նախատեսված 3,450 երեխայի փոխարեն:

Ենթաբաղադրիչ 1.2. Իրականացված ծրագրի արդյունքում 6-ով ավելացել է շահառու ավագ դպրոցների քանակը, որոնց շենքային պայմանները համապատասխանում են ՀՀ շինարարական և անվտանգության չափանիշներին: Եվս 7 ավագ դպրոցներում հիմնանորոգման աշխատանքները հետազոտության իրականացման պահի դրությամբ ընթացքի մեջ են: Ըստ ենթաբաղադրիչի պատասխանատուի 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ իրականացվել են նախատեսված հիմնանորոգման աշխատանքների շուրջ 83%-ը: Վերջինները նախատեսվում է լիարժեք շահագործման հանձնել 2021թ -ի սեպտեմբերին (բացառությամբ Գորիսի N1 ավագ դպրոցից):

Ըստ Ծրագրի հիմնանորոգված դպրոցներում վերանորոգված դասասենյակների թիրախային ցուցանիշը 162 դասարան է: Հիմնանորոգված 6 դպրոցներում գործարկված է 106 դասարան, և ևս 176 ուսումնական նշանակության սենյակներ կգործարկվեն 7 հիմնանորոգվող ավագ դպրոցներում ծրագրով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո:

Նախատեսված 107 ավագ դպրոցներում բնագիտական առարկաներից լաբորատոր սարքավորումներով և գույքով վերազինվել է 99 ավագ դպրոց: Հետազոտության իրականացման պահի դրությամբ ցուցանիշը կատարվել է 92.5%-ով: Ցուցանիշը լիարժեք կատարված կլինի ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո, մասնավորապես մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը:

Ծրագրով ակնկալվում էր ենթաբաղադրիչով նախատեսված գործողություններն իրականացնելու արդյունքում ունենալ հիմնանորոգված դպրոցներում սովորողների հաճախումների բարելավված ցուցանիշ: Հիմնանորոգված 5² դպրոցների աշխատանքների ավարտին և դպրոցներում դասապրոցեսի վերսկսմանը հաջորդել է հանրապետությունում համավարակի բռնկումը, ինչով պայմանավորված անցում կատարվեց հեռավար եղանակով ուսուցման: Հեռավար ուսուցման ընթացքում աշակերտների բացակայությունների վերաբերյալ գրանցումներն իրականացվել են վերապահումներով, քանի որ աշակերտներից շատերը, հատկապես հեռավոր սահմանամերձ բնակավայրերում համակարգչային սարքավորումների և/կամ կապի բացակայության կամ խափանումներով աշխատելու պարագայում հնարավորություն չէին ունենում համընթաց կերպով մասնակցել դասերին: Նրանք

² Գյումրի քաղաքի հիմնանորոգված Ակադեմիական վարժարանում ուսումնական գործընթաց դեռևս չի իրականացվել:

հիմնականում հետևել են առցանց տիրույթում հասանելի տեսադասերին: Այդ իսկ պատճառով սույն իրողությունը հնարավորություն չի տալիս չափել գործողության իրական ազդեցությունը թիրախային ավագ դպրոցների աշակերտների հաճախումների ցուցանիշի վրա: Այն որոշելու նպատակով արդյունավետ է դիտարկել ցուցանիշը 1-2 տարի անց:

Ենթաբաղադրիչ 1.3. Հիմնական և բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգն ընդհանուր, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համար ամբողջությամբ ինտեգրված է և օգտագործվում է ՀՀ հանրակրթական դպրոցների և քոլեջների/ուսումնարանների կողմից: Բուհերը կսկսեն օգտագործել համակարգը ս.թ. սեպտեմբեր ամսից:

«Հանրակրթական դպրոցների սարքավորումային-տեխնիկական կարիքները գնահատված են, թիրախային դպրոցներում սարքավորումները թարմացվել են».: 2018թ-ին վերապատրաստում անցած հանրակրթական ուսումնական 387 հաստատություններում 2019թ-ին ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից իրականացվել է սարքավորումային-տեխնիկական կարիքի գնահատում, 42 հաստատությունների տրամադրվել է ինտերակտիվ պրոյեկտորներ, 63-ին՝ պրոյեկտորներ: Բացի այդ, 2020թ-ին ՀՀ մարզերի (բացառությամբ Տավուշի մարզի) 101 ուսումնական հաստատությունում տեխնիկապես կահավորվել է մեկական դասասենյակ, 107 ավագ դպրոցների տրամադրվել է կոնֆերանս տեսախցիկ՝ հեռավար դասընթացներ և բաց դասեր կազմակերպելու համար:

2021թ-ին նախատեսվում է 272 դպրոցի տրամադրել պրոյեկտորներ, որոնց մատակարարումն ընթացքում է: Այս դպրոցներից 259-ին նախատեսվել է տրամադրել նաև դյուրակիր համակարգիչ, որն արդեն իրականացվել է:

ՀՀ հիմնական և ավագ դպրոցներում դասավանդվող 4՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և երկրաչափություն առարկաների դասագրքերում բացակայող թեմաների համար մշակվել են կրթական էլեկտրոնային ռեսուրսներ (ընդհանուրը 125 թեմա), որոնք հասանելի են <http://esource.armedu.am/> հասցեով: 2020թ-ին յուրաքանչյուր առարկայի ենթաբաժին ունեցել է միջինում 200 հազար այցելություն, 2019թ.-ի 100 հազարի փոխարեն:

Նման զարգացումներում կարևոր ներդրում են ունեցել ուսուցիչների վերապատրաստումներն ու մասնագիտական զարգացումը, ուսումնական գործընթացում SՀS-ի շարունակական ինտեգրումը և ավագ դպրոցներում իրականացված բարեփոխումները, որոնք նպաստել են կրթության որակի բարելավմանը:

Ենթաբաղադրիչ 1.4. Հանրակրթության մասին ազգային ռազմավարական փաստաթուղթը վերանայվել և հաստատվել է կառավարության կողմից: Նախատեսված 9 առարկայական ոլորտների փոխարեն վերանայվել է 6 առարկայական ոլորտների չափորոշիչներ և ուսումնական ծրագրեր: STEM ուղղվածությամբ 3 առարկաների չափորոշիչներն ու ուսումնական պլանները վերանայվել են «Հայաստանում ԵՄ-ն ի նպաստ նորարարության» «STEM» փորձնական ծրագրի շրջանակում: 6 առարկայական ոլորտների գծով առարկայական չափորոշիչներ և ծրագրեր մշակող աշխատանքային խմբերն ու միջազգային փորձագետները փորձարկող 20 դպրոցների համար մշակել են ուսումնական նյութեր՝ ըստ առարկաների և փորձարկվող դասարանների: Փորձարկումներն իրականացվել են ս.թ. հունվար ամսից:

Փորձարկում իրականացրած ուսուցիչների կարծիքով նոր չափորոշիչներով ուսումնական ծրագրերը նպատակահարմար է ներդնել ՀՀ հանրակրթական դպրոցներում, եթե զուգահեռաբար ապահովվեն նաև փոփոխությունների իրականացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները (ուսուցիչների շրջանում վերապատրաստումներ, դպրոցներում տեխնիկա-սարքավորումային միջոցների ապահովում, ուսումնական համապատասխան միջավայր և այլն):

ԲԱՂԱԴՐԻՉ 2. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Բաղադրիչ 2-ի համար սահմանված արդյունքի երեք թիրախային ցուցանիշներից երկուսը սույն ուսումնասիրության մշակման պահին ամբողջությամբ կատարված են: Ներկայումս ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի միջև ընթանում են բանակցություններ շահառու բուհերի պայմանագրերի վերջնաժամկետը երկարացնելու վերաբերյալ: Քննարկումների դրական հանգուցալուծման պարագայում բուհերը հնարավորություն կստանան հատկացված լրացուցիչ ժամանակահատվածում ավարտին հասցնել պայմանագրով նախատեսված գործողությունները, այն է՝ բաղադրիչի բոլոր արդյունքային ցուցանիշները կլինեն կատարված:

ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 2-Ի ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

N	ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՓԱՍՏԱՑԻ, 2021 Հուլիսի 31-ի դրությամբ
1	Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) աջակցությամբ պետական-մասնավոր հաստատությունների համագործակցությունների քանակը (5)	Գերակատարված (7)
2	ՆՄՀ բաղադրիչի շահառու բուհերի քանակը (18)	Կատարված (18)
3	ՆՄՀ-ի շրջանակում առկա դրամաշնորհների քանակ, որոնք իրականացրել են իրենց առջև դրված նպատակների առնվազն 80 տոկոսը (18)	Կատարված (14), ընթացքում է (4)

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է ՆՄՀ դրամաշնորհների տրամադրման երեք շրջափուլ՝ առաջին (i), երկրորդ (հավելյալ) (ii) և երկրորդ (հիմնական) (iii)՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար վեց շահառու բուհերով՝ ընդհանուր թվով 18 ծրագիր: Նրանցից 7-ը պետական և մասնավոր հատվածի կառույցների հետ համատեղ կոնսորցիումային ծրագրեր են՝ թիրախավորված 5-ի փոխարեն: Ծրագրի առաջին (i), երկրորդ հավելյալ (ii) և երկրորդ (հիմնական) (iii) փուլերով իրականացված 14 ծրագրերն ամբողջությամբ ավարտված են, դրված նպատակների 100%-ը՝ իրականացված:

Իրականացված գործողությունները ներառում են.

- Առնվազն 16 նորարարական լաբորատորիաների/գերազանցության կենտրոնների հիմնում և համալրում նյութատեխնիկական բազայով,
- Նվազագույնը 16 մասնագիտական նոր ծրագրերի մշակում կամ լրամշակում,

- Տասնյակ տեղական և միջազգային ուսումնական հաստատությունների հետ ուսանողների՝ ուսումնական և պրակտիկայի ծրագրերի, գիտամանկավարժական անձնակազմի՝ փորձի փոխանակման և խորհրդատվական ծառայությունների իրականացում,
- Հայաստանում մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ համագործակցություն՝ ծրագրի շարունակականությունն ապահովելու համար լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ ներգրավելու նպատակով:

Ծրագրի երկրորդ հիմնական (iii) փուլով իրականացվող 6 ծրագրերից 3-ի մասով ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի միջև ընթանում են բանակցություններ պայմանագրերի վերջնաժամկետը երկարացնելու վերաբերյալ: Միջնորդության բավարման պարագայում մինչ սահմանված նոր վերջնաժամկետը բոլոր 6 դրամաշնորհային ծրագրերն ամբողջությամբ կլինեն ավարտված, դրված նպատակների 100%-ը՝ իրականացված:

Ամփոփում և եզրահանգումներ

Հանրակրթության ոլորտում իրականացված ծրագրերն էապես նպաստել են Հայաստանում դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացմանը և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովմանը՝ մասնավորապես մարզերում: Հանրակրթության ոլորտի ուսումնական գործընթացում S<S կիրառումն ընդլայնվել է և հասել որակական նոր մակարդակի: Հասանելիության առումով հեռավոր, սահմանամերձ բնակավայրերի դպրոցների միացումը համացանցին կրթական կիրառությունից բացի ունի նաև կարևոր սոցիալական նշանակություն տվյալ համայնքների համար, քանի որ մինչ այդ համայնքներում համացանցի հասանելիությունը շատ ցածր է եղել: Ավագ դպրոցների նյութատեխնիկական բազայի ընդլայնման, մանկավարժների կարողությունների բարձրացման և այլ զարգացումների արդյունքում համակարգը ձևավորման փուլից մտել է զարգացման փուլ, որը հնարավորություն կտա լիարժեք իրագործելու ավագ դպրոցի հիմնական առաքելությունը, այն է՝ նախապատրաստել սովորողներին ինքնուրույն կյանքի և հետագա մասնագիտական կրթություն ստանալու:

Բարձրագույն կրթության ոլորտում ձևավորվել և հաջողությամբ գործարկվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամը, որի տրամադրած դրամաշնորհները մեծապես նպաստել են բարձրագույն կրթության որակի, համապատասխանության և հասանելիության բարելավմանը:

Մարտահրավերներ

Ընդհանուր առմամբ՝ Ծրագրի իրականացված գործողությունների և ստացված արդյունքների նյութականացման ու պահպանման հիմնական ռիսկերն արտաքին են: Թեև Ծրագրով նախատեսված գործողությունները հիմնականում կատարվել են և սահմանված նպատակները՝ հիմնականում իրագործվել, Հայաստանի հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտներում առկա համակարգային խնդիրները կարող են սահմանափակել Ծրագրի լայնածավալ ազդեցությունը: Այս խնդիրների լուծումը կնպաստի Ծրագրով իրականացված գործողությունների արդյունավետության բարձրացմանը և շարունակականության ապահովմանը:

Հանրակրթության ոլորտում դպրոցների կրթական ենթակառուցվածքները, գույքը, տեխնոլոգիաները, ուսումնական նյութերը և մյուս կրթական ռեսուրսներն ունեն թարմացման և բարելավման կարիք: Վերապատրաստումների ներկայիս մոդելը կարիք ունի բարելավման՝ ամբողջապես բավարարելու մանկավարժների գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացման պահանջները: Հայաստանում դեռևս կա նախադպրոցական կրթության հասանելիության բաց, հատկապես՝ մարզերում:

Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման ձևավորված համակարգը կրթական նոր երևույթ է Հայաստանում: Որպեսզի այն լիովին կայանա և դառնա բուհական կրթության մշակույթի լիարժեք մաս, անհրաժեշտ է հետևողական աշխատանք ու ջանքերի ներդնում բոլոր շահառուների կողմից:

Կրթական կարիքների, առաջնայնությունների և տեխնոլոգիաների մերօրյա արագընթաց զարգացման պայմաններում ուսումնական ռեսուրսների և կրթական միջավայրի շարունակական բարելավումը կրթության որակի բարելավման հրամայական է: Այս նպատակով անհրաժեշտ են պետական քաղաքականության, Համաշխարհային բանկի և ներգրավված այլ միջազգային կազմակերպությունների ծրագրերի միասնական օրակարգ և շարունակական ներդաշնակեցում, ինչը կբերի ավելի մեծ փոխազդեցության և արդյունքների բարելավման:

ՀԲ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի իրականացումը Հայաստանի կրթության ոլորտում շոշափելի արդյունքներ է արձանագրել և դրական ազդեցություն ունեցել: Իրականացված ծրագրերը լավ հիմք են ստեղծել հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտների զարգացման նախաձեռնությունների համար:

3. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԲԱՂԱԴՐԻՉ 1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ 1.1. ԴՊՐՈՑԻՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ և ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿԸ

Ենթաբաղադրիչի նպատակն է երեխաներին (ներառյալ խոցելի խմբերից, աղքատ համայնքներից, հեռավոր (սահմանամերձ) և լեռնային շրջաններից) տարրական կրթությանը արդյունավետ նախապատրաստելը՝ վերջիններիս համար ապահովելով հավասար մեկնարկային պայմաններ շարունակելու ուսումը տարրական դպրոցում:

ԱՄՓՈՓԻՉ ԱՎՆԱՐԿ

«Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաբաղադրիչը նախադպրոցական կրթության մեջ ՀԲ վարկային առաջին ծրագրով մշակված և փորձարկված միկրոծրագրերի մասշտաբայնացում էր:

Ենթաբաղադրիչ 1.1-ով պլանավորված էր նախադպրոցական կրթության ծրագրի իրականացումը, որը ներառում է նախակրթարանների համար նախատեսված տարածքների վերանորոգումը, ուսումնական և ուսուցողական նյութերի, անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռք բերումը, մանկավարժների վերապատրաստումը: Ծրագրով նախատեսված 134 նախակրթարանի փոխարեն հիմնվել է 136-ը, որոնք ներկայումս գործում են Հայաստանի բոլոր մարզերում՝ բացառությամբ մեկ նախակրթարանի: «Երևանի Ա. Չեխովի անվան 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ներկայումս լիցենզավորման փուլում է:

Ծրագրում ընդգրկված երեխաների խմբերում արձանագրվել են ՎԶԳ ավելի բարձր միավորներ ուսումնական տարվա վերջում, քան նախադպրոցական հաստատություններ չհաճախող երեխաների խմբերում³:

Ընդհանուր առմամբ՝ Ծրագիրն էապես նպաստել է Հայաստանում դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացմանը և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովմանը, հատկապես մարզերում: 2015-2019թթ. Հայաստանում նախադպրոցական հաստատությունների քանակն աճել է 717-ից 906 (հիմնականում գյուղերում՝ 286-ից 439)⁴: 2015-2020 թթ. ընթացքում Ծրագրի շրջանակում շուրջ 13.6 հազար երեխա ստացել է նախադպրոցական կրթություն, որոնց կշիռը հանրակրթական դպրոցների 1-ին դասարան գնացած աշակերտների մեջ յուրաքանչյուր տարի կազմում է 5-6 տոկոս:

³ Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի գնահատման և դրա վրա ազդող գործոնների հետազոտություն, վերջնական հաշվետվություն, 2019թ.

⁴ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2020. «Կրթություն և մշակույթ» բաժին:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.1.1. ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽԱԾ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԿՇԻՈՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴԴՐՈՑՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ ԳՆԱՑԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵՋ

	2015/2016 ՈՒՍ. ՏԱՐԻ	2016/2017 ՈՒՍ. ՏԱՐԻ	2017/2018 ՈՒՍ. ՏԱՐԻ	2018/2019 ՈՒՍ. ՏԱՐԻ	2019/2020 ՈՒՍ. ՏԱՐԻ
Աշակերտների թվաքանակը 1-ին դասարանում, մարդ	40,219	25,804	39,187	38,674	38,847
Նախակրթարան հաճախած երեխաների թվաքանակը, մարդ	1,180	1,917	2,157	2,460	2,742
Նախակրթարան հաճախած երեխաների կշիռը 1-ին դասարան գնացածների մեջ		5%	5%	6%	6%

Աղբյուր՝ ՀՀ ԱԿԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2020. «Կրթություն և մշակույթ» բաժին:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ԱՂՅՈՒՍԱԿ 1.1.2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՍՏԱՑԱԾ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԴԴՐՈՑՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎԿԱԾ ՎՋԳ ՄԻԱՎՈՐՆԵՐ

ՑՈՒՑԱՆԻՇ	ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼ	ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ			
	2015	2016	2017	2018	2019
Թիրախային	-	-	-	-	Մասնակից խմբի երեխաների ՎՋԳ միավորները նշանակալիորեն բարձր են ստուգիչ խմբի երեխաների ՎՋԳ միավորներից
Փաստացի	-	Մասնակից խմբի երեխաների ՎՋԳ միավորները ուս. տարվա վերջին տարեսկզբի նկատմամբ բարելավվել են 18.34%-ով, ինչպես նաև գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների միավորները:	Մասնակից խմբի երեխաների ՎՋԳ միավորները 21.48%-ով բարելավվել են, ինչպես նաև գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների միավորները:	Մասնակից խմբի երեխաների ՎՋԳ միավորները դիտարկվող կրթական ուղղություններով մոտ 17 տոկոսային կետով գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների միավորները:	Մասնակից խմբի երեխաների ՎՋԳ միավորներն ուս. տարվա վերջին տարեսկզբի նկատմամբ բարելավվել են միջինում 35.33%-ով, և նաև գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների միավորները:

Աղբյուր՝ Բեյքեր Թիլլի Արմենիա, 2015-2019 Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների հետազոտություն, վերջնական հաշվետվություն, 2019թ.

2015-2019 թթ. «Բեյքեր Թիլլի Արմենիա» ընկերությունն իրականացրել է հետազոտություն՝ ենթաբաղադրիչ 1.1-ի շրջանակում իրականացված ծրագրի ազդեցության գնահատման նպատակով: Հետազոտությունը կատարվել է ըստ մարզերի:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.1.3. ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԵԹՎԵՐԻ և ՄԱՐԶԵՐԻ

N	ՏԱՐԵԹԻՎ	ՄԱՐԶ
1.	2015-2016թթ.	Շիրակ, Գեղարքունիք և Կոտայք
2.	2016-2017թթ.	Արմավիր, Տավուշ և Լոռի
3.	2017-2018թթ.	Արարատ, Արագածոտն և Սյունիք
4.	2018-2019թթ.	Գեղարքունիք, Վայոց Ձոր, Լոռի և Երևան

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են երեխաների զարգացման դինամիկան մեկ տարվա կտրվածքով և նախակրթարանների գործունեությունը:

Հետազոտությունը դիտարկել է հիմնված նախակրթարաններում ընդգրկված երեխաների (մասնակից խումբ) և ծրագրում չընդգրկված երեխաների (ստուգիչ խումբ) ՎԶԳ միավորների դինամիկան հետևյալ հիմնական ուղղություններով՝

- տարրական մաթեմատիկական գիտելիքներ,
- տրամաբանություն և մտածողություն,
- բանավոր խոսքի ընկալում,
- վաղ գրաճանաչություն,
- մանր /նուրբ/ շարժողական ոլորտ:

Ստուգիչ խմբում ընդգրկվել են տվյալ կամ մոտակա համայնքի նախադպրոցական հաստատություն չհաճախող երեխաները:


Ընդհանուր առմամբ՝ հետազոտությունն ընդգրկել է մասնակից խմբի 599 և ստուգիչ խմբի 364 երեխա, որոնցից վերաթեստավորվել են համապատասխանաբար 506 և 294 երեխաներ: Նաև անցկացվել են հարցազրույցներ հաստատությունների տնօրենների, մանկավարժների և մասնակից խմբի երեխաների ծնողների հետ:

Մասնակից խմբի երեխաների հետ իրականացված կրկնակի թեստավորման արդյունքները ցույց են տալիս, որ նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների խմբերում արձանագրվել են ՎԶԳ ավելի բարձր միավորներ, քան ստուգիչ խմբերում: Մասնակից խմբի երեխաների շրջանում նաև արձանագրվել է զարգացման նկատելի դինամիկա նախադպրոցական հաստատություն հաճախելու ժամանակահատվածում: Երեխաների առաջընթացը հատկապես մեծ է տարրական մաթեմատիկական գիտելիքների, տրամաբանության և մտածողության, ինչպես նաև վաղ գրաճանաչության ուղղություններով:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հետանկախացման ժամանակահատվածում (1991 թ.-ից սկսած) Հայաստանի նախադպրոցական կրթության ոլորտում հիմնախնդիր է երեխաների՝ նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության ցածր մակարդակը, հատկապես գյուղական բնակավայրերում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.1.1. ՀՀ-ՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ՈՒ ԴՐԱՆՑՈՒՄ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2020. «Կրթություն և մշակույթ» բաժին:

Ծրագրի մեկնարկից առաջ դեռ 2009թ-ն Հայաստանի համայնքների շուրջ 47%-ում չկային մանկապարտեզի համապատասխան շենքեր, իսկ 170 համայնքներում դրանք չէին գործում: Սա պայմանավորված էր նաև 1996 թ. ՀՀ վարչատարածքային կառավարման նոր համակարգի ձևավորմամբ, որի արդյունքում նախադպրոցական հաստատություններն անցան համայնքային ենթակայության («ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» օրենքի համաձայն): Պետական ֆինանսավորման բացակայությունը հանգեցրեց նախադպրոցական հաստատությունների ցանցի համար խիստ բացասական հետևանքների. զգալիորեն նվազեց գործող մանկապարտեզների քանակը, վատթարացան դրանց շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան: Գործող մանկապարտեզների պարագայում խնդրահարույց էր մատուցվող նախադպրոցական կրթության որակը (ուսումնական ծրագրեր, մանկավարժական մոտեցումներ) և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար մատչելիությունը: Այս համատեքստում ՀՀ կառավարությունը 2008 թ. հաստատել էր «ՀՀ նախադպրոցական կրթական բարեփոխումների 2008-2015 թթ. ռազմավարական և փորձնական ծրագրերը»՝ թիրախավորելով նախադպրոցական կրթական ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը: Առանձնակի կարևորություն էր տրվել նախադպրոցական ավագ տարիքային խմբի (5-6 տարեկան) երեխաներին տարրական կրթության արդյունավետ նախապատրաստելուն: Ծրագրերը նախատեսվել էր իրականացնել ինչպես գործող նախադպրոցական հաստատությունների ծանրաբեռնվածության մեծացման հաշվին, այնպես էլ այլընտրանքային և քիչ ծախսատար կրթական ծառայությունների շնորհիվ:

Ռազմավարական ծրագրի փորձնական փուլն իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի և Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանների համայնքներում: 2008 թ. ՀՀ «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին վարկային ծրագրի շրջանակում իրականացվել է 22 միկրոծրագիր Լոռու և Շիրակի մարզերում (20 դպրոցներում և 2 նախադպրոցական հաստատություններում)՝ ընդգրկելով նախադպրոցական ավագ տարիքային խմբի շուրջ 530 երեխա: 2015-2020 թթ. ընթացքում ՀՀ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի

շրջանակում հիմնվել են 136 նախակրթարաններ ՀՀ բոլոր մարզերում և Երևանում՝ ընդգրկելով 4-6 տարեկան շուրջ 13,580 երեխա:

Այս ենթաբաղադրիչով պլանավորված գործողությունների հաջող իրականացումը նպաստել է Ծրագրի «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաբաղադրիչի իրականացմանը:

ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ 1.1 ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախակրթարանների հիմնում

2015-2020 թթ. Ծրագրի շրջանակում հիմնվել է 136 նախակրթարան՝ բոլոր մարզերում և Երևանում: Ստեղծված նախակրթարանների մեծ մասը՝ 128-ը, գործում է դպրոցների հիմքի վրա, իսկ 8-ը՝ մանկապարտեզներում: Նախակրթարանների 93% գտնվում են մարզերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.1.4. ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾՄԱՆ ՏԱՐԵԹՎԻ

ՄԱՐԶ/ՏԱՐԵԹՎ	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	ԸՆԴԱՄԵՆԸ
Արագածոտն			8			2	10
Արարատ			9			5	14
Արմավիր		12			2	6	20
Գեղարքունիք	8		3	1	5	5	22
Լոռի		6		4	1		11
Կոտայք	13				2		15
Շիրակ	12				4		16
Սյունիք			3		2	3	8
Վայոց ձոր				3	1		4
Տավուշ		6			1		7
Երևան				9			9
ԸՆԴԱՄԵՆԸ	33	24	23	17	18	21	136

Ենթաբաղադրիչի գործողությունների իրականացման շրջանակում ԾԻԳ-ը մարզային կրթության վարչությունների օժանդակությամբ ապահովել է շահառուների իրազեկվածությունը: Կազմակերպվել են մարզերի նախադպրոցական հաստատությունների, համայնքների ղեկավարների և դպրոցների տնօրենների հավաքներ, որոնց ընթացքում ներկայացվել է ծրագրի նպատակը, հայտի ներկայացման ձևը, պահանջները և այլն:

Հայտատուների ներկայացրած հայտերը քննարկվել և գնահատվել են ըստ ծրագրի նպատակահարմարության, համայնքի և ծնողների շահագրգռվածության, պահանջվող ներդրումների ապահովման, համապատասխան կադրերի առկայության և ծրագրի շարունակականության ապահովման գործոնների: Գնահատման նախնական արդյունքները քննարկվել են մարզային կրթության վարչությունների հետ, իսկ վերջնական արդյունքները հաստատվել են նախադպրոցական կրթական միկրոծրագրերի կառավարման հանձնաժողովի կողմից:

Հայտերի մերժման հիմնական պատճառներն են եղել տարածքային անհամապատասխանությունը, համաֆինանսավորման հետ կապված խնդիրները և համայնքում նախադպրոցական տարիքի երեխաների ոչ բավարար քանակը: Վերջինը,

սակայն, մերժման պատճառ չի հանդիսացել հեռավոր (սահմանամերձ) և լեռնային շրջաններում:

Համայնքին ներկայացվող միկրոծրագրի համաֆինանսավորման պահանջը ծրագրի ամբողջ արժեքի առնվազն 25%-ն է: Այն հիմնականում ապահովվել է շինարարական աշխատանքների և դաստիարակի աշխատավարձի տեսքով: Մեկ նախակրթարանի հաշվով՝ Ծրագրի ֆինանսավորումը կազմել է միջինում 10-12 հազ. ԱՄՆ դոլարիին համարժեք ՀՀ դրամ (Առավելագույն թույլատրելի սահմանաչափը կազմում է 22 հազ. դոլարին համարժեք ՀՀ դրամ):

Իրականացված ծրագիրը թիրախավորել է նախադպրոցական ավագ տարիքային խմբի (5-6 տարեկան) երեխաներին: Մանկապարտեզներում ստեղծված նախակրթարանները գործում են առավոտյան 09-10-ից մինչև 16-17-ը, իսկ դպրոցներում նախակրթարանները գործում են օրական մոտ 4 ժամ՝ հիմնականում 9.00-13.00:

Մանկապարտեզների հենքի վրա ստեղծված նախակրթարանների հետագա գործունեությունը ապահովվում է ՏԻՄ-երի կողմից: Դպրոցում հիմնված նախակրթարանների ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեից՝ ըստ աշակերտների թվի:

Մանկապարտեզներում ներդրված ծրագրի դեպքում տօրենների նախաձեռնությամբ բացի հիմնական մանկավարժից ներգրավվում են նաև մանկապարտեզի ֆիզդաստիարակը, երաժշտության, օտար լեզուների դաստիարակները՝ կրթական ծրագիրը դարձնելով ավելի բազմակողմանի: Բացի այդ մանկապարտեզներում երեխաներն ավելի երկար են մնում, որը կարևոր հանգամանք է աշխատող ծնողների պարագայում: Մյուս կողմից սակայն, դպրոցների հենքի վրա հիմնված նախակրթարանների առավելություններից է, որ ավելի հեշտ է տեղի ունենում երեխաների ինտեգրումը դպրոցին, քանի որ երեխաներն արդեն ծանոթ են լինում դպրոցի կարգուկանոնին անցուդարձին, մասնակցում են տարրական դասարանների միջոցառումներին:

Ստեղծված նախակրթարանների գործունեությանը ակտիվ մասնակցություն են բերում ծնողները՝ գործուն ներդրում ունենալով նախադպրոցական հաստատությունների կյանքում:

Նախակրթարանների հիմնում, ուսումնական և ուսուցողական նյութերով, գույքով և սարքավորումներով ապահովում

Նախակրթարանների համար նախատեսված տարածքները ծրագրի շրջանակում վերանորոգվել են, համալրվել անհրաժեշտ գույքով և սարքավորումներով, ձեռք է բերվել ուսումնամեթոդական գրականություն, գրենական պիտույքներ, խաղալիքներ և այլն:

Մանկավարժների վերապատրաստում

Ծրագրում ներգրավված մանկավարժները մարզերում հիմնականում նույն համայնքից են: Մեծամասնությունն ունի բարձրագույն մասնագիտական կրթություն (հիմնականում Երևանի և մարզերի մանկավարժական բուհերի):

Ծրագրերի շրջանակում նախակրթարանների մանկավարժներն անցել են վերապատրաստում: Ծրագրի մեկնարկից մինչև 2019թ-ի հունիս ամիսը նախակրթարանների մանկավարժների վերապատրաստման գործառույթն իրականացվել է «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից: Մանկավարժների գոհունակության մակարդակը վերապատրաստումներից բարձր է. նշվում է, որ վերապատրաստման դասընթացները եղել են ուսումնական նյութերով հարուստ և արդյունավետ: 2019թ-ի հունիս ամսին «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի լուծարումից հետո «Կրթության բարելավում» վարկային ծրագրի նախադպրոցական կրթության միկրոծրագրերի կառավարման հանձնաժողովը

2020թ-ի մայիսի 12-ին կայացած նիստում հավանություն է տվել «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից ենթաբաղադրիչի շահառուների ցանկում ընդգրկված հաստատությունների դաստիարակների վերապատրաստման առաջարկին և 2020-2021թթ ուս. տարում ստեղծված նախակրթարաններում ընդգրկված դաստիարակների վերապատրաստումների գործառույթն իրականացվել է «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից: Համաճարակով պայմանավորված՝ վերջինս դասընթացներն իրականացրել է առցանց եղանակով, որոնցից ևս մասնակիցների գոհունակության մակարդակը բարձր է:

Նախակրթարանների դաստիարակների ընտրության հարցում նախադպրոցական մանկավարժական կրթության առկայությունը եղել է պարտադիր նախապայման: Սակայն մարզերում, հատկապես փոքր համայնքներում, մասնագետների պակասի կամ բացակայության պատճառով ընտրվել են մանկավարժներ, որոնց կրթությունն ամենամոտն է եղել նախադպրոցական կրթության մասնագիտացմանը: Սակայն, ինչպես նշել են վերապատրաստողները, վերապատրաստված մասնագետների մեծամասնության շրջանում նախադպրոցական մանկավարժական կրթության առկայությունն է՛լ ավելի արդյունավետ է դարձրել վերապատրաստումների գործընթացը:

Ծրագրի ազդեցության վերաբերյալ հետազոտությունը, փորձագիտական զրույցները և նախադպրոցական հաստատությունների տնօրենների և դաստիարակների հետ ֆոկուս խմբային քննարկումները⁵ վկայում են, որ դաստիարակները մեծապես գոհ են իրականացրած վերապատրաստումներից, որոնք հաղորդել են մանկավարժական նոր գիտելիքներ և նախադպրոցական տարիքի երեխաների հետ արդյունավետ աշխատելու հմտություններ:

Վերապատրաստված դաստիարակների մեծ մասը կցանկանար կրկին և պարբերաբար մասնակցել նախադպրոցական կրթությանը վերաբերող տարբեր վերապատրաստումների: Նրանք հատկապես դրական են գնահատել դասընթացների անմիջականությունը և մասնագետների բարձր պրոֆեսիոնալիզմը: Առցանց եղանակով վերապատրաստումներ անցած դաստիարակները ցանկություն էին արտահայտում, որ հնարավոր հաջորդ դասընթացները կազմակերպվեին առկա եղանակով, որի ընթացքում հնարավորություն կընձեռնվի ունենալ անմիջական շփում և հաղորդակցում ինչպես վերապատրաստողների, այնպես էլ վերապատրաստումների այլ մասնակիցների հետ՝ դասընթացներից դուրս քննարկումների միջոցով փորձի փոխանակման նպատակով:

2015-2021 թթ. ընթացքում իրականացված վերապատրաստումների ֆինանսավորումը հատկացվել է Ծրագրով:

Երեխաների ՎՁԳ միավորների ամփոփ վերլուծություն

Վերլուծությունն իրականացվել է ըստ 5 ոլորտների, որում ներկայացված են թիրախային խմբի թեստավորման (ԹԹ), վերաթեստավորման (ԹՎ), ստուգիչ խմբի թեստավորման (ՍԹ), վերաթեստավորման (ՍՎ) արդյունքներն ըստ տարիների և ոլորտների:

⁵ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության կողմից 2021 թ. մայիս-հունիս ամիսներին Ծրագրի վերջնական գնահատման հետազոտության շրջանակում մարզպետարանների աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետերի հետ խորքային հարցազրույցներ, նախակրթարանների տնօրենների ու դաստիարակների հետ ֆոկուս խմբային քննարկումներ (տե՛ս Հավելվածներ):

ԱՂՅՈՒՍԱԿ 1.1.5. ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ (2015-2019ԹԹ.)

ՏԱՐԵԹԻՎ/ՄԱՐԶ	ԿԱՏԵԳՈՐԻԱ	ՈԼՈՐՏՆԵՐ					
		1. Տարրական մաթեմատիկական գիտելիքներ	2. Տրամաբանություն և մտածողություն	3. Բանավոր խոսքի ընկալում	4. Վաղ գրաճանաչություն	5. Մանր/նուրբ շարժողական ոլորտ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋԻՆ
2015-2016 (Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք)	ԹԹ	53.02	59.12	87.51	34.51	51.56	57.15
	ՍԹ	44.08	36.49	77.04	26.18	43.41	45.44
	ԹՎ	76.95	82.07	95.45	64.49	58.50	75.49
	ՍՎ	53.44	47.97	69.05	37.72	39.82	49.60
2016-2017 (Արմավիր, Տավուշ, Լոռի)	ԹԹ	48.43	46.64	73.00	32.08	47.05	49.44
	ՍԹ	39.67	32.40	56.94	24.83	39.39	38.65
	ԹՎ	69.98	78.27	95.63	55.21	55.53	70.92
	ՍՎ	48.87	46.38	68.86	32.65	42.26	47.80
2017-2018 (Արարատ, Արագածոտն, Սյունիք)	ԹԹ	37.51	46.31	82.52	32.47	24.22	44.61
	ՍԹ	30.13	23.34	54.02	16.44	22.14	29.21
	ԹՎ	64.37	67.12	96.97	66.24	54.81	69.90
	ՍՎ	45.23	24.49	59.04	27.60	32.40	37.75
2018-2019 (Վայոց ձոր, Լոռի, Գեղարքունիք, Երևան)	ԹԹ	45.40	30.85	74.93	23.81	32.45	41.49
	ՍԹ	38.10	33.53	47.63	12.62	33.75	33.12
	ԹՎ	76.37	85.47	96.63	66.21	59.41	76.82
	ՍՎ	58.83	72.70	77.11	34.37	47.40	58.08

Աղբյուր՝ Բեյքեր Թիլլի Արմենիա, 2015-2019 Նախադպրոցական կրթական միկրոձրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների հետազոտություն, վերջնական հաշվետվություն, 2019թ.

2015-2016թթ. նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները բոլոր ոլորտերով գերազանցում են ստուգիչ խմբի երեխաների նույն արդյունքներին: Առավելապես գերազանցում են (2) *տրամաբանություն և մտածողություն* (22.64%) և *բանավոր խոսքի ընկալում* (10.47%) ոլորտները: Համեմատելով 2015-2016թթ. նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել ստուգիչ խմբի երեխաներից:

Առավելապես տարբերվում են (2) *տրամաբանություն և մտածողություն* (34.10%), (4) *վաղ գրաճանաչություն* (26.78%) ոլորտները:

2016-2017թթ.-ին թեստավորման մասով թիրախային խմբի արդյունքները բոլոր ոլորտների մասով գերազանցում են ստուգիչ խմբի նույն արդյունքներին: Առավելապես տարբերվում են (2) *տրամաբանություն և մտածողություն* (14.24%) և *բանավոր խոսքի ընկալում* (16.06%) ոլորտները: Համեմատելով 2016-2017թթ. նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել, քան ստուգիչ խմբի երեխաները: Առավելապես տարբերվում են կրկին (2) *տրամաբանություն և մտածողություն* (31.89%), (3) *բանավոր խոսքի ընկալում* (26.77%) ոլորտները:

2017-2018թթ.-ին նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները ևս գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին: Առավելապես մեծ է տարբերությունը (2) *տրամաբանություն և մտածողություն* (22.97%) և (3) *բանավոր խոսքի ընկալում* (28.51%) ոլորտների դեպքում: Համեմատելով 2017-2018թթ. նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել տարեվերջում, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում են (2) *տրամաբանություն և մտածողություն* (42.62%), (4) *վաղ գրաճանաչություն* (38.64%) ոլորտները:

2018-2019թթ.-ին նախակրթարան հաճախող երեխաների թեստավորման արդյունքները գերազանցում են նախակրթարան չհաճախող երեխաների թեստավորման արդյունքներին՝ բացառությամբ (2) *տրամաբանություն և մտածողություն* (2.68%) և (5) *մանր/նուրբ շարժողական ոլորտ* (1.29%) ոլորտների: Առավելապես տարբերվում է (3) *բանավոր խոսքի ընկալում* (27.3%) ոլորտը: Համեմատելով 2018-2019թթ. նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների վերաթեստավորման արդյունքները՝ տեսնում ենք, որ նախակրթարան հաճախող երեխաներն ավելի բարձր արդյունք են ապահովել ուսումնական տարվա վերջում, քան չհաճախողները: Առավելապես տարբերվում են (3) *բանավոր խոսքի ընկալում* (19.52%), (4) *վաղ գրաճանաչություն* (31.84%) ոլորտները:

Բոլոր չորս տարիների ընթացքում երեխաների թեստավորման արդյունքներից առավել հաճախ ցածր արդյունք է ստացվել (4) *վաղ գրաճանաչություն* ոլորտների դեպքում, իսկ առավել հաճախ բարձր՝ (3) *բանավոր խոսքի ընկալում* ոլորտի դեպքում:

Նաև նույն ձևով կարելի է ասել, որ բոլոր չորս տարիների ընթացքում երեխաների վերաթեստավորման արդյունքներից առավել հաճախ ցածր արդյունք ստացվել է (4) *վաղ գրաճանաչություն* և (5) *մանր/նուրբ շարժողական ոլորտի դեպքում*, իսկ առավել հաճախ բարձր՝ (3) *բանավոր խոսքի ընկալում* ոլորտի դեպքում:

Բեյքեր Թիլլի ընկերության կողմից իրականացվել է նաև ՎԶԳ ցուցանիշների վերլուծություն նախակրթարան հաճախող և չհաճախող երեխաների շրջանում: Սակայն քանի որ տղաների և աղջիկների ցուցանիշներն անկանոն են տարբերվում իրարից ըստ երեխաների խմբերի, ուսումնական տարվա ժամանակահատվածի, ապա սեռով պայմանավորված գիտելիքային առավելության վերաբերյալ մեկնաբանություն անել հնարավոր չէ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաբաղադրիչով նախատեսված գործողություններն ամբողջությամբ իրականացվել են: Փորձարկված մոդելի արդյունավետությունը բարձր է գնահատվել նախարարության կողմից և ներառվել նախարարության ծրագրերում: Նախադպրոցական կրթության այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրման կարգը հաստատվել է 2021 թվականի հունվարի 26-ին, իսկ 2021 թվականի պետական բյուջեում այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների ապահովման համար նախատեսվել է շուրջ 154 մլն ՀՀ դրամ:

Մյուս կողմից, սակայն, Հայաստանի նախադպրոցական կրթության ոլորտում առկա են մի շարք մարտահրավերներ, որոնց լուծումը կոժանդակի ենթաբաղադրիչ 1.1-ի իրականացված միջոցառումների արդյունավետության բարելավմանը և շարունակականության ապահովմանը:

Ծրագրի «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաբաղադրիչի իրականացրած գործողությունների և ստացված արդյունքների շարունակականության համար անհրաժեշտ է կայուն ֆինանսավորում, մասնավորապես հետևյալ ուղղություններով:

Ծրագրերով հիմնված շարք նախակրթարաններում առկա է ենթակառուցվածքների ընդարձակման կարիք՝ նոր երեխաների ընդգրկման նպատակով:

Ծրագրերով հիմնված նախակրթարաններում ընդգրկվել ցանկացող երեխաների թիվն աճում է՝ ստեղծելով առկա ենթակառուցվածքների և պահանջվող ռեսուրսների (մարդկային, նյութատեխնիկական) ընդլայնման կարիք: Շատ նախակրթարաններում երեխաների խմբերը մեծ են՝ տատանվելով 25-35 երեխայի սահմաններում: Մասնավորապես աճում է միջին տարիքային խմբի պահանջարկը, որը ենթաբաղադրիչ 1.1-ի շրջանակից և ներդրված միկրոծրագրերի թիրախից դուրս է: Մյուս կողմից, սակայն, նշված խնդիրը կարևոր է նախադպրոցական կրթության ամբողջական ցիկլն ապահովելու առումով:

Նախակրթարաններն ունեն գույքի, ուսումնական նյութերի բարելավման կարիք

Հիմնված նախակրթարաններն ունեն կահույքի, ուսումնական և ուսուցողական նյութերի և ընդհանուր ենթակառուցվածքների շարունակական թարմացման և բարելավման կարիք: Մասնավորապես առկա է ուսուցողական նյութերի և ինտելեկտուալ խաղերի պակաս, մանկապարտեզների բակային տարածքներն ունեն բարեկարգման կարիք, իսկ դպրոցներում հիմնականում բացակայում են նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված համապատասխան բակային տարածքները:

Այլ առաջարկություններ

- Սույն ծրագրի շրջանակներում սննդի ապահովում նախատեսված չէ, քանի որ այն կարճաժամկետ և ծախսախնայող մոդել է: Նախակրթարաններում սնունդն ապահովում են ծնողները, ինչի արդյունքում այն խմբերում լինում է տարատեսակ: Ուստի՝ առաջարկվում է փորձել նույնականացնել սննդի ապահովման մոտեցումը բոլոր նախակրթարաններում, որպեսզի բոլոր երեխաների համար ապահովված լինեն միևնույն պայմանները:
- Հնարավորության դեպքում ծրագրի հաջորդ փուլերում աջակցել նախակրթարաններին՝
 - Բացօթյա խաղահրապարակների ստեղծման և համալրման հարցում,

- Տրամադրվող ֆինանսական միջոցների ավելացում, հնարավորություն ընձեռելով ավելացնելու խմբաքանակներն այն նախակրթարաններում, որտեղ արձանագրվել են երեխաների թվաքանակի/կամ պահանջարկի աճ,
- Ծրագրի այս մոդելով նախակրթարաններում քնի կազմակերպում նախատեսված չէ: Սակայն հատկապես մանկապարտեզների հիմքի վրա հիմնված նախակրթարաններում, որտեղ երեխաներն անցկացնում են համեմատաբար ավելի երկար ժամանակ, քան դպրոցի հիմքի վրա հիմնված նախակրթարաններում, նկատվել է երեխաների քնի կազմակերպման անհրաժեշտություն: Ուստի՝ առաջարկվում է օրվա ռեժիմի և երեխաների քնի կազմակերպման հարցում աջակցել այն նախակրթարաններին, որտեղ նկատվել է վերջիններիս անհրաժեշտությունը, և առկա են վերջիններիս ապահովման համար հնարավորություններ,
- Նախակրթարաններում նկատվել է դաստիարակի օգնականի հաստիքի անհրաժեշտություն, քանի որ դաստիարակներն իրենց զբաղվածության պայմաններում չեն հասցնում պատշաճ կերպով հետևել երեխաների հիգիենային:
 - Փորձը ցույց է տվել, որ միայն մեկանգամյա վերապատրաստումը բավարար տեսական և գործնական գիտելիքներ և հմտություններ չի ձևավորում դաստիարակների շրջանում, և վերապատրաստողների կողմից անհրաժեշտ է իրականացնել մշտադիտարկումներ, անհրաժեշտության պարագայում՝ նաև լրացուցիչ վերապատրաստում:
 - Վերապատրաստողների կողմից նշվել է անհրաժեշտություն, որ դաստիարակի պաշտոնը զբաղեցնող անձը պետք է ունենա բազային ոլորտային մասնագիտական կրթություն: Եթե մարզերում, հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում համեմատաբար դժվար է գտնել բազային գիտելիքներով մասնագետի, մայրաքաղաքում նշված խնդիրը առկա չէ:
 - Մշտապես իրականացնել նախակրթարանի գործունեության վերաբերյալ լուսաբանման աշխատանքներ:
 - Պարբերաբար իրականացնել հեռավար հանդիպումներ նախակրթարանների տնօրենների մասնակցությամբ՝ լսելու և փորձելու արձագանքել նրանց շրջանում առկա խնդիրներին ու մարտահրավերներին նախակրթարանների ընթացիկ գործունեությունն ապահովելու հարցում:

ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ 1.2. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

ՆՊԱՏԱԿ

Աջակցել հանրակրթական դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը՝ շենքային պայմանների բարելավման և կրթական համապատասխան ռեսուրսների համալրման միջոցով: Մասնավորաբար՝ իրականացնել ավագ դպրոցների հիմնանորոգումներ և վերազինել բնագիտական առարկաների լաբորատորիաները:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ՑՈՒՑԱՆԻՇ	ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼ	ՓԱՍՏԱՑԻ, 2021 Հուլիսի 31-ի դրությամբ
Իրականացվող ծրագրերի շահառու հիմնանորոգված ավագ դպրոցների քանակի ավելացում, որոնց շենքային պայմանները համապատասխանում են ՀՀ շինարարական ու անվտանգության չափանիշներին և ապահովված են կրթական ժամանակակից ռեսուրսներով:		
Թիրախային		
Փաստացի	-	Մասնակի կատարված, ընթացքում է

Ենթաբաղադրիչի հիմնական արդյունքի ցուցանիշը բարելավված ֆիզիկական պայմաններին և վերազինված կրթական ռեսուրսներին համապատասխան հիմնանորոգված ավագ դպրոցների քանակի ավելացումն է, որի ամբողջությամբ իրականացման աշխատանքները շարունակվում են:

Այն դպրոցները, որտեղ հիմնանորոգումներն ավարտվել են, բարձրացել է սեյսմակայունությունը, ավարտվել են ներքին հարդարման աշխատանքները, բարելավվել են հարակից տարածքների պայմանները: Բնագիտական առարկաների հիմնված լաբորատորիաներում իրականացվել են տեխնիկական աշխատանքներ, տրամադրվել են արդի պահանջներին համապատասխան ուսումնադիդակտիկ նյութեր, լաբորատոր սարքավորումներ, կահույք:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ	ՑՈՒՑԱՆԻՇ	ԹԻՐԱՆ, 2021	ՓԱՍՏԱՑԻ, 2021 Հուլիսի 31-ի դրությամբ
1.2 Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը	Ծրագրի ավարտին շինարարության և անվտանգության պայմանների չափանիշներին համապատասխան շենքային պայմաններ ունեցող ավագ դպրոցների թվի ավելացում	13	6
	Ծրագրի իրականացման արդյունքում հիմնանորոգված դասասենյակների քանակը	162	106 ⁶
	Ծրագրի շրջանակներում տրամադրվող լաբորատորիաներով հագեցած ավագ դպրոցների թվաքանակի ավելացում	107	99
	Ծրագրի շրջանակում հիմնանորոգված դպրոցներում սովորողների հաճախումների բարելավում – թիրախային ավագ դպրոցներում աշակերտների հաճախելիությունը բարելավվել է՝ համաձայն դպրոցներում առկա դինամիկ տվյալների և թիրախային խմբի կարծիքների		

⁶ Ըստ տնօրենների հետ անցկացրած հարցազրույցների:

Ըստ ենթաբաղադրիչի նպատակների 2021թ.-ի ավարտին նախատեսված է հիմնանորոգել 13 ավագ դպրոց: Հետազոտության պահին 6 ավագ դպրոցներում հիմնանորոգման աշխատանքներն ավարտված էին, իսկ ևս 7 ավագ դպրոցներում աշխատանքներն իրագործված են շուրջ 83%-ով: Վերջիններս նախատեսվում է ամբողջությամբ շահագործման հանձնել 2021 թվականի սեպտեմբերին (բացառությամբ Գորիսի N1 ավագ դպրոցից): Շինարարական աշխատանքների ավարտման ժամկետների շեղումները հիմնականում պայմանավորված են համավարակով և պատերազմական դրությամբ:

Թիրախային 162 ցուցանիշից 106 դասասենյակները գործարկված են հիմնանորոգված 6 դպրոցներում: Ակնկալվում է, որ այս ցուցանիշը կավելանա ևս 176 ուսումնական նշանակության սենյակներով ⁷, հիմնանորոգվող 7 դպրոցների շինարարական աշխատանքների ավարտին: Ծրագրի ավարտին հիմնանորոգված 13 դպրոցները՝ 282 ⁸ դասասենյակով, ժամանակակից կրթական ենթակառուցվածքներ կապահովեն 5800 աշակերտների համար (աշակերտների առավելագույն թիվը ըստ գործող լիցենզիայի), որը կազմում է ավագ դպրոցներում սովորողների մոտ 20%:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է նաև ավագ դպրոցները հագեցնել բնագիտական առարկաների գծով (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն) լաբորատորիաներով: Հետազոտության պահին թիրախային 107 ավագ դպրոցներից վերագինվել է 99-ը: Ցուցանիշը լիարժեք կկատարվի 8 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո, մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը:

Հիմնանորոգված որոշ դպրոցների բարելավված շենքային պայմաններն այս կամ այն չափով նպաստել է սովորողների հաճախումների բարելավմանը, սակայն որոշ դպրոցներում այս ցուցանիշն անկանոն է, իսկ տրամաբանական կապերը՝ խզված: Այնուամենայնիվ, հիմնանորոգված դպրոցներում ակնկալվում է, որ սովորողների քանակը կավելանա նաև շրջակա բնակավայրերից սովորողների հաշվին:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ավագ դպրոցների ձևավորումը իրականացվել է 2008-2011թթ.: ՀՀ կառավարության 2008 թ. որոշմամբ հաստատվել է ավագ դպրոցների համակարգի ռազմավարական ծագիրը, որի համաձայն սահմանվել է ծրագրի փորձարկման փուլը՝ հանրապետության երեսուն միջնակարգ դպրոցներ վերակազմավորելով ավագ դպրոցների: Ըստ բարեփոխումների ծրագրի 2009-2010թթ. ուսումնական տարվանից նախատեսվել է եռամյա ավագ դպրոցի ներդրումը, որի նպատակը հանրակրթության երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում, կրթության որակի և արդյունավետության բարձրացումն ու արդիականացումն է, մասնավորապես՝

- բարձրացնել ավագ դպրոցում կրթության որակը,
- ստեղծել սովորողների համար նախընտրելի հոսքային ուղղություններ, այդ թվում, նախնական մասնագիտական կրթության ընտրության հնարավորություն: Այդ նպատակով ավագ դպրոցի կրթական ծրագիրը դարձնել ճկուն՝ հնարավորություն ստեղծելով արձագանքել աշակերտների կրթական պահանջունքներին և նախասիրություններին:

⁷ Ներառում է՝ լսարաններ, կաբինետներ, աներ: Կաբինետների թվում ընդգրկված են լսարանային գործառույթ ունեցող, ինչպես նաև օժանդակող միավորները:

⁸ Դասասենյակների թիվը հիմնանորոգման ընթացքում կարող է որոշակի փոփոխվել:

- կատարելագործել ավագ դպրոցների ինստիտուցիոնալ համակարգը՝ նպաստելով հանրակրթության արդյունավետության բարձրացմանը:

Ավագ դպրոցներին աջակցություն ցուցաբերվել է նաև «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին վարկային ծրագրի շրջանակներում և ընդլայնվել է երկրորդ վարկային ծրագրի ընթացքում:

Դպրոցներից շատերը կառուցվել են Խորհրդային միության ժամանակ և ունեն ենթակառուցվածքային թերություններ՝ ներառելով ոչ լիարժեք ջեռուցման համակարգեր, սեյսմիկ ամրության, ներքին հարդարման նվազագույն անհրաժեշտ պայմանների բացակայության և այլ խնդիրներ: Բնագիտական առարկաների լաբորատորիաները ևս վերազինվել են Խորհրդային միության ժամանակ, իսկ նոր պարագաներ դպրոցները ձեռք են բերել անհատական նախաձեռնությամբ և կապերով:

ԵՆԹԱԲԱՂԱԴԻԻՉ 1.2-Ի ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցների հիմնանորոգում

Առաջին փուլի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են 2016 թվականին ՀՀ հինգ մարզերի հինգ ավագ դպրոցներում, որոնք շահագործման են հանձնվել 2018 թվականին: Երկրորդ փուլով նախատեսված է 8 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ: Հուլիսի 31-ի դրությամբ ավարտվել է Գյումրու Ակադեմիական վարժարանի հիմնանորոգումը: Ներկայումս ընթանում են 7 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտվել 2021 թվականի սեպտեմբերին (բացառությամբ Գորիսի N1 ավագ դպրոցի):

Դպրոցների ընտրությունը կատարվել է չորս չափանիշների հիման վրա՝

- դպրոցի շենքի տեխնիկական պայմաններ (կառուցվածք, հիմք, տանիք, ջեռուցում, կոմունալ ծառայությունների հնարավորություն և այլն),
- դպրոցի կառուցման տարի,
- դպրոցի գործունեության սահմաններ (սպասարկում է միայն մեկ մարզ կամ ավելի քան մեկ մարզ)
- դպրոցում սովորողների թիվ:

ԱՅՈՒՄԱԿ 1.2.1. ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐ

	ՄԱՐԶ	ԴՊՐՈՑ	ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿ-ԱՎԱՐՏ
1	Արմավիր	Մեծամորի N 2 ա/դ	2016 2-րդ եռամսյակ-2018 3-րդ եռամսյակ
2	Արարատ	Արարատի ա/դ	2016 2-րդ եռամսյակ-2018 3-րդ եռամսյակ
3	Տավուշ	Նոյեմբերյանի ա/դ	2016 2-րդ եռամսյակ-2018 3-րդ եռամսյակ
4	Կոտայք	Հրազդանի N 1 ա/դ	2016 2-րդ եռամսյակ-2018 3-րդ եռամսյակ
5	Գեղարքունիք	Մարտունու ա/դ	2016թ. 2-րդ եռամսյակ-2018թ.4-րդ եռամսյակ
6	Շիրակ	Գյումրի քաղաքի Ակադեմիական վարժարան	2019թ. 3-րդ եռամսյակ-2021թ. 2-րդ եռամսյակ

7	Արմավիր	Վաղարշապատի N 5 ա/դ	2019թ. 4-րդ եռամսյակ-2021թ. 3-րդ եռամսյակ
8	Շիրակ	Արթիկ քաղաքի թիվ 3 ավագ դպրոց	2019թ. 3-րդ եռամսյակ-2021թ. 3-րդ եռամսյակ
9	Գեղարքունիք	Սևան քաղաքի Խ.Աբովյանի անվան ավագ դպրոց	2019թ. 3-րդ եռամսյակ-2021թ. 3-րդ եռամսյակ
10	Սյունիք	Գորիսի N 1 ա/դ	2019թ. 3-րդ եռամսյակ-2021 թ. 3-րդ եռամսյակ
11	Երևան	N 42 ա/դ	2019թ. 3-րդ եռամսյակ-2021թ. 3-րդ եռամսյակ
12	Երևան	N 142 ա/դ	2019թ. 3-րդ եռամսյակ-2021թ. 3-րդ եռամսյակ
13	Երևան	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հենակետային /ավագ դպրոց /վարժարան	2019թ. 3-րդ եռամսյակ-2021թ. 3-րդ եռամսյակ

Հիմնանորոգման արդյունքում դպրոցների շենքային պայմաններն ամբողջությամբ բարելավվել են: Հիմնանորոգման արդյունքում դպրոցներում հիմնական պատերի և հիմքի ամրացման աշխատանքներ են իրականացվել, բարձրացել է սեյսմակայունությունը: Շինարարական աշխատանքները հարթ են ընթացել, ծրագրով նախատեսված բոլոր գործողություններն իրագործվել են:

Ըստ սովորողների շրջանում իրականացված հարցումների ⁹ սովորողների շրջանում նկատվում է ընդհանուր գոհունակություն, նրանց 83.7%-ը նշել է, որ դպրոցը համապատասխանում է իրենց պատկերացրած լավագույն դպրոցի չափանիշներին: Բոլոր սովորողները միակարծիք են, որ շենքային պայմանների բարելավումը դրական է ազդում ուսման նկատմամբ վերաբերմունքի վրա, մասնավորապես՝ նրանց 58.1%-ը կարծում է որ այդ հանգամանքը մեծապես է ազդում, իսկ 41.9%-ը՝ որոշ չափով:

Շենքային պայմանների բարելավումը մեծապես դրական է ազդել և փոխել է դպրոցի կյանքն ու մթնոլորտը, մասնավորապես Մարտունու ավագ դպրոցում սոցիալական նոր մշակույթ են ներդրել՝ դպրոց մուտք գործելիս փոխում են կոշիկները, այս մշակույթն իր մեջ ներառում է և՛ դաստիարակչական բաղադրիչ, և՛ ներդրվել է շենքի պահպանման նկատառումներից ելնելով: Շենքային պայմանները նաև բարձրացրել են դպրոցների կարգապահությունը, հեղինակությունը, դիմորդների հետաքրքրությունը (նույնիսկ հարակից բնակավայրերից են հաճախում), ուսուցիչների դասը վարելու արդյունավետությունը:

Ըստ ուսուցիչների շրջանում իրականացված հարցումների 47.1%-ը համարում է, որ դպրոցը լիովին բարկարգված է և կահավորված: Այնուամենայնիվ, 35.3%-ը կարծում է, որ դասասենյակներն ունեն տեխնիկական վերազինման կարիք, իսկ 11.8%-ը՝ գույքի բարելավման կարիք:

Հիմնանորոգման արդյունքում ավելացել են դպրոցների ընթացիկ և պահպանման ծախսերը, հիմնականում ջեռուցման և տնտեսական միջոցների մասով: Չնայած որոշ դպրոցներում ջերմամեկուսացման շնորհիվ ջեռուցման ծախսը որոշ չափով կրճատվել է, կան նաև

⁹ Ավագ դպրոցների ուսուցիչների և աշակերտների հարցում:

դպրոցներ, որ կաթսաների տեխնիկական հնարավորություններով, լեռնային դիրքով և կրթական գործընթացի երկու հերթափոխով պայմանավորված ջեռուցման ծախսերն ավելացել են, կամ կանխատեսվում է աճ: Ընդհանուր առմամբ դպրոցների ֆինանսական միջոցները սուղ են, և հատկացումներն իրականացվում են ըստ խիստ անհրաժեշտության և առաջնահերթության:

Չնայած ավագ դպրոցներում շենքային պայմանների և տեխնիկական վերագինմանը՝ դպրոցների զարգացման հիմնական խնդիրները պայմանավորված են կրթական միջավայրով, մասնավորապես՝ դպրոցներում որակյալ մասնագետների պակասի, կրկնուսուցների մոտ հաճախումների գերակայության, ուսուցիչների՝ նոր տեխնոլոգիաների կիրառման ոչ բավարար հմտություններ ունենալու, դասավանդման ընթացքում սովորողներին հիմնականում միայն գիտելիքներ փոխանցելու մոտեցումներին՝ նախապատվություն տալու, ինչպես նաև ուսուցիչների ցածր վարձատրության հանգամանքներով:

Աշակերտների հաճախելիությունը

Հիմնանորոգված ավագ դպրոցներն ըստ լիցենզիայի նախատեսված են 300-400 աշակերտի համար, հետազոտության պահին սովորողների փաստացի քանակը դիտարկված դպրոցներում տատանվել է 140-250 աշակերտի շրջանակում: Միջինում դպրոցները գործում են պլանային հզորության մոտ 60%-ի չափով, որը զգալիորեն բարձր է նախկին ժամանակահատվածում գրանցված ցուցանիշից:

Ըստ հիմնանորոգված դպրոցների ուսուցիչների շրջանում իրականացված հարցման արդյունքների՝ 52.9%-ը կարծում է, որ հիմնանորոգումը հիմնականում նպաստել է սովորողների հաճախելիության բարձրացմանը, իսկ 41.2%-ի կարծիքով՝ այն չի փոխվել: Ըստ հարցված աշակերտների 76.7%-ի նոր շենքային պայմանները բարելավել են հաճախելիությունը: Ուսումնական գործընթացից բացակայելու հիմնական պատճառը առողջական խնդիրներն են (97.7%):

ԱՂՅՈՒՍԱԿ 1.2.2. ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԱԾ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐԶ	ԴՊՐՈՑ	ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԸ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄԻՑ ԱՌԱՋ ԵՎ ԸՆԹԱՑՔՈՒՄ	ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԸ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄԻՑ ՀԵՏՈՒ
Արմավիր	Մեծամորի N2 ա/ դ	Հիմնանորոգման աշխատանքներից առաջ, մեկ աշակերտի հաշվարկով միջինում կազմում է 18 ժամ, իսկ վերանորոգման աշխատանքների ընթացքում գրանցվել է բացակայությունների աճ մինչև 21 ժամ:	Միջինում մեկ աշակերտի բացակայությունների ցուցանիշը 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում կազմել է 40 ժամ:
Արարատ	Արարատի ա/դ	Վերանորոգման աշխատանքների մեկնարկի դրությամբ, միջինում մեկ աշակերտի բացակայությունները կազմել է 30 ժամ, որը հիմնանորոգման ընթացքում աճել է մինչև 46 ժամ:	Հիմնանորոգման աշխատանքների ավարտին 2018-2019 ուսումնական տարվա ավարտին միջինում մեկ աշակերտի բացակայած ժամերը նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել է 7.3%-ով, իսկ 2019-2020 ուսումնական տարվա և նախորդող ուսումնական տարվա համեմատ նվազել է 55.1%-ով:

Տավուշ	Նոյեմբերյանի ա/դ	Միջինում մեկ աշակերտի բացակայությունների թիվը 2014-2015 ուսումնական տարվա ընթացքում 59 ժամ է, 2016-2017 ուսումնական տարվա համեմատ նվազել է 6.8%-ով:	2018-2019 ուսումնական տարվա ավարտին միջինում մեկ աշակերտի բացակայած ժամերը 2016-2017 ուսումնական տարվա համեմատ նվազել է 44.4%-ով, միջինում մեկ աշակերտի բացակայությունները կազմելով 30 ժամ:
Կոտայք	Հրազդանի N1 ա/դ	Վերանորոգման աշխատանքների մեկնարկի դրությամբ, միջինում մեկ աշակերտի բացակայությունները կազմել են 18 ժամ, որը հիմնանորոգման ընթացքում աճել է մինչև 41 ժամ:	Հիմնանորոգման աշխատանքների ավարտին 2018-2019 ուսումնական տարվա ավարտին միջինում մեկ աշակերտի բացակայած ժամերը նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել է 47.8%-ով, իսկ 2019-2020 ուսումնական տարվա ավարտին նախորդող ուսումնական տարվա համեմատ նվազել է 49.5%-ով:
Գեղարքունիք	Մարտունու ա/դ	Միջինում մեկ աշակերտի բացակայությունների թիվը հիմնանորոգումից առաջ 37 ժամ է, որը հիմնանորոգման աշխատանքների ընթացքում աճել է մինչև 45 ժամ:	2020-2021 ուսումնական տարվա ավարտին միջինում մեկ աշակերտի բացակայած ժամերը 2019-2020 ուսումնական տարվա համեմատ նվազել է 26.2%-ով՝ կազմելով 32 ժամ:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ

Լաբորատորիաները վերազինման ընթացքը

Լաբորատորիաների վերազինման աշխատանքներում յուրաքանչյուր առարկայի համար ներգրավված են եղել փորձագետներ, ովքեր հաշվի առնելով առարկայական ծրագիրը (ուսումնական տարվա ընթացքում նախատեսել շուրջ 4-10 գործնական աշխատանք), մասնագիտական փորձառությունն ու միջազգային լավագույն փորձը կազմել են անհրաժեշտ սարքավորումների և պարագաների ցանկն ու դրանց տեխնիկական նկարագրերը: Ցանկը ներառել է առաջնային և նվազագույն անհրաժեշտության բոլոր սարքավորումներն ու պարագաները. միակ սահմանափակումը պայմանավորված է եղել ծրագրի բյուջեով:

Փորձագետները գնման գործընթացի ավարտին ստուգել են մատակարարված սարքավորումներն ու պարագաները, դրանց տեխնիկական նկարագրերի համապատասխանությունը, որի արդյունքում շեղումներ չեն արձանագրվել. միայն եզակի դետալների արտաքին տեսքի շուրջ նկատվել են անհամապատասխանություններ, ինչը փորձարկման արդյունքերով էական ազդեցություն չեն ունեցել ակնկալվող վերջնարդյունքի վրա: Տեխնիկական անձնագրերն ու ուղեցույցներն առկա են եղել միայն որոշ սարքավորումների պարագայում, այն էլ օտար լեզուներով:

Սարքավորումների և պարագաների քանակները կազմվել են ըստ անհրաժեշտության, կիրառման հաճախականության՝ հաշվի առնելով աշակերտների թիվը, եթե նրանք աշխատեն զույգերով (մինչինում 10-15 զույգի հաշվարկով):

Սարքավորումների օգտագործման ուղեցույցների, անհրաժեշտ նյութերի ցանկի կազմման և մատակարարման աշխատանքներ ծրագրով նախատեսված չեն եղել:

Լաբորատորիաները վերազինումից հետո

Մինչ լաբորատորիաների վերազինումը դպրոցներում հիմնականում առկա են եղել առարկայական լաբորատորիաներ, սակայն գործնական աշխատանքները հիմնականում չեն իրականացվել կամ իրականացվել են մասամբ և ոչ արդյունավետ, որի պատճառը անհրաժեշտ սարքավորումների նյութերի բացակայությունն է եղել, իսկ երբեմն ուսումնական փորձերը զուգորդվել են համացանցից տեսողական նյութերի ցուցադրությամբ: Որոշ դպրոցներում, մինչ լաբորատորիաների վերազինումը, ուսուցիչների կամ տնօրինության ակտիվ նախաձեռնությամբ առարկաների գործնական հատվածը լիարժեք իրականացվել է:


Հարցվածների մեծամասնությունը (81.2%) նշում է, որ լաբորատորիաները կահավորված են անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով, սակայն ըստ 47.5%-ի լաբորատորիաների օգտագործման հետ կապված եղել են որոշ սահմանափակումներ: Լաբորատորիաների չգործածման հիմնական պատճառներն են եղել անհրաժեշտ նյութերի բացակայությունը (53.1%), սարքավորումներին օժանդակող ուղեցույցի բացակայությունը կամ վերջինիս օտար լեզվով լինելը (30.6%), հոսանքի և ջրամատակարարման խնդիրները (16.3%), տեղադրման տեխնիկական խոչընդոտները (10.2%) մասնավորապես՝ քարշիչ պահարանի օդափոխության համակարգի միացման հետ կապված խնդիրները: Լաբորատորիաների լիարժեք գործարկմանը խոչընդոտել է նաև համավարակը, որի պայմաններում գործել է սովորողների միմյանց մոտ նստելու սահմանափակումը:

Վերազինման աշխատանքներում դպրոցների մասնակցությունը եղել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի ապահովման, գույքի տեղադրման և պահեստավորման աշխատանքների կազմակերպման մասով: Իսկ գործունեության շարունակականությունը ապահովելու համար, չնայած դպրոցների ֆինանսական միջոցների սղությանը, տնօրենները պատրաստակամ են նյութերի և սարքավորումների պահպանման և սպասարկման համար հատկացնել ֆինանսական միջոցներ, թեպետ մինչև վերազինումն եղել են համեստ հատկացումներ կամ ընդհանրապես բացակայել են:

Ըստ ուսուցիչների շրջանում իրականացված հարցումների արդյունքների մեծամասնությունը (58.4%) նշել է, որ վերազինումից հետո լաբորատորիան մեծամասամբ հնարավորություն է տալիս իրականացնել առարկայական ծրագրով նախատեսված բոլոր գործնական աշխատանքները, այնինչ նրանց ավելի փոքր (26.7%) մասն է կարծում, որ վերազինումը լիովին է հնարավորություն տալիս իրականացնել բոլոր գործնական աշխատանքները: Լաբորատոր սարքավորումների ցանկը կազմած փորձագետները սակայն պնդում են, որ եթե կիրառվի ստացված սարքավորումներն ու պարագաները ամբողջությամբ, ապա առարկաների ծրագրով նախատեսված բոլոր գործնական աշխատանքները լիարժեք իրագործելի են: Լաբորատոր գույքի ամբողջականության և գործնական աշխատանքի լիարժեք իրագործման շուրջ ուսուցիչների վերապահումով գնահատումը կարելի է մեկնաբանել, ստացած սարքավորումների և պարագաների կիրառության ու դրանց նշանակության շուրջ իրազեկության և կարողությունների զարգացման բացով:

Հարցված ուսուցիչների մեծամասնությունը (54.5%) ընդունում է, որ բնագիտական առարկաների գործնական հատվածը դասավանդելու համար այս կամ այն չափով ունի վերապատրաստման կարիք, վերջինիս շուրջ նկատվում է մասնակցության մեծ պատրաստակամություն: Նրանց 68.3%-ը տվյալ առարկայի գործնական պարապմունքների իրականացման նպատակով մասնագիտական վերապատրաստումների չի մասնակցել, իսկ 12.9%-ը վերապատրաստվել է վերջին մեկ տարվա ընթացքում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.2.1. ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԿԱՐԻՔ



Աղբյուր՝ Հարցում ավագ դպրոցների ընտրված առարկաների գծով ուսուցիչների շրջանում, հունիս 2021թ. Պատասխանողների թիվը՝ 101

Լաբորատորիաների ազդեցությունն առաջադիմությանն ու մասնագիտական կողմնորոշմանը

Ընդհանուր առմամբ, հարցված ուսուցիչներն ու աշակերտները միակարծիք են, որ վերազինված լաբորատորիաներում բնագիտական առարկաների գործնական աշխատանքների իրականացումը դրականորեն է ազդել սովորողների հետաքրքրվածության և առաջադիմության վրա:


Հարցված ուսուցիչների 93%-ի կարծիքով գործնական հատվածի ուժեղացումը այս կամ այն չափով բարելավել է սովորողների առաջադիմությունը: Նրանց 65.3%-ը նույնիսկ փաստում է զգալի բարելավում:

Սովորողների շրջանում առավելապես բարձրացնել է ոգևորությունն ու հետաքրքրությունը առարկայի նկատմամբ: Նոր լաբորատորիաները բացի առարկան տպավորիչ դարձնելուց նաև օլիմպիադաներին մասնակցելու նոր հնարավորություններ են ստեղծում: Նաև որոշ դպրոցներում լաբորատորիաների վերազինմամբ պայմանավորված աշակերտները հումանիտար հոսքից տեղափոխվել են բնագիտական հոսք:

Բնագիտական առարկաների գործնական աշխատանքները դրական են ազդել դասընթացի յուրացմանը, նրանց 76.9%-ը կարծում է, ոչ վերջինս զգալիորեն է հեշտացրել ուսումնական նյութի յուրացումը, 19.7%-ը նշել է որոշ դրական ազդեցության հանգամանքը:

Ընդհանուր առմամբ ծրագրի արդյունքում մեծացել է բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրությունը: Հարցվածների մասնագիտական ոլորտների ընտրության պատկերը ցույց է տալիս, որ ապագա դիմորդների մեծամասնությունն ընտրում են գիտական առարկաների հենքով մասնագիտություններ, ինչն ընդգծում է լաբորատորիաների կարևորությունը և՛ գործնական գիտելիքների ստեղծման, և՛ մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության բարձրացման գործընթացում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.2.2. ԲՈՒՆԵՐ ԴԻՄԵՆՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՐՑՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ



Աղբյուր՝ Հարցում ավագ դպրոցների աշակերտների շրջանում, հունիս 2021թ. Պատասխանողների թիվը՝ 350

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցների հիմնանորոգում

- Արտաքին գործոնները (հատկապես համավարակը) ամենամեծ ազդեցությունն է ունեցել այս ենթաբաղադրիչի իրականացման ժամկետների վրա: Պլանավորված 13 դպրոցներից հիմնանորոգման աշխատանքներն լիովին ավարտվել են միայն 6-ում:
- Հիմնանորոգման արդյունքում դպրոցների շենքային պայմաններն ամբողջությամբ բարելավել են, բարձրացել է սեյսմակայությունը, ներքին հարդարումը, կահավորումը: Հիմնանորոգված դպրոցների վերաբերյալ գոհունակությունը բարձր է՝ ուսանողների, և՛ ուսուցիչների շրջանում:
- Հաշվի առնելով հիմնանորոգումից հետո դպրոցների գործունեության կարճ ժամանակահատվածը, 2020 թվականի իրադարձությունները և բացակայությունների փաստագրման թերի իրականացումը՝ անհնար է օբյեկտիվորեն գնահատել հաճախելիության իրական փոփոխությունները: Այնուամենայնիվ, ուսուցիչների և սովորողների զգալի մասը հավաստում են, որ այն բարելավվել է:
- Լիցենզիայով նախատեսված աշակերտների և փաստացի սովորողների թվաքանակի միջև առկա է բավականին մեծ ճեղքվածք, ինչն ավելի է վատթարացնում դպրոցների ֆինանսական սուղ միջոցների հասանելիությունը, քանի որ դպրոցների ֆինանսավորումը հատկացվում է աշակերտների թվաքանակի հիման վրա: Առաջարկվում է հիմնական դպրոցներում իրականացնել տեղեկատվական բնույթի այցեր, լուսաբանել և ներկայացնել դպրոցի հաջողությունները, կյանքը, իրականացվող միջոցառումները, կազմակերպել բաց դռների օր, կատարել շրջայցեր և հնարավորինս ներգրավել նոր աշակերտների: Արդեն իսկ նկատվում է շրջակա բնակավայրերից սովորողների տեղափոխում հիմնանորոգված ավագ դպրոցներ, որը, ըստ դպրոցների տնօրենների, աճի միտում կունենա:

Լաբորատորիաների վերազինում

- Լաբորատորիաների հիմնումը կամ վերազինումը դրականորեն է ազդել այդ առարկաների ուսումնառության որակի վրա: Դասերը դարձել են ավելի հետաքրքիր, իսկ գործնական աշխատանքները նպաստել են նյութի յուրացմանը:
- Ծրագրի շրջանակներում 84 քիմիայի և 84 կենսաբանության առարկաներից լաբորատորիաների հիմնման համար դպրոցներում իրականացվել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մոնտաժային աշխատանքներ, տեղադրվել է անհրաժեշտ գույքը:
- Ծրագրի շրջանակներում դպրոցներին տրամադրվող լաբորատոր գույքի և սարքավորումների համար նյութերի մատակարարում ծրագրով նախատեսված չի եղել, սակայն գրեթե բոլոր դպրոցները բարձրաձայնում են նյութերի բացակայության մասին և նշում, որ իրազեկված չեն նաև, թե ինչպես կարող են այն ձեռք բերել: Հատկանշական է, որ այն դպրոցները, որոնք ցուցաբերել են նախաձեռնություն, կապ են հաստատել լաբորատոր գույքի ցանկը կազմած փորձագետների հետ, այլ դպրոցների իրենց գործընկերների հետ և ստացել ուղղորդում: Ի լրումն, գործնական աշխատանքներն արդյունավետ իրագործելու համար առանցքային է ուսուցիչների ստեղծարարությունը, որտեղ առօրյայում հասանելի նյութերից կարելի է իրականացնել բովանդակալից գործնական դասեր: Ծրագրի իրականացնող կողմից առաջարկվում է ստեղծել լաբորատոր նյութերի մատակարարների բազա և հասանելի դարձնել ավագ դպրոցներին:
- Ըստ հետազոտության արդյունքների՝ հարցված ուսուցիչների 68.3%-ն իրենց առարկայի գործնական հատվածի դասավանդման շուրջ երբեք չի վերապատրաստվել, իսկ նրանց 54.5%-ը նշել է, որ ունի վերապատրաստման կարիք: Գործնական աշխատանքները կազմակերպելու համար վերապատրաստման անհարժեշտությամբ է պայմանավորված նաև սարքերի հնարավորությունների շուրջ չիրազեկվածությունը, դրանց ոչ արդյունավետ և սահմանափակ կիրառումը: Լաբորատորիաների արդյունավետ գործարկումը կնպաստի ուսուցիչների տեսականը գործնականում կիրառելու կարողությունների զարգացմանը:
- Մատակարարված որոշ սարքերի օգտագործմանը օժանդակել են դրանց տեխնիկական անձնագրերը (օտար լեզուներով), սակայն կարիք կա կազմել լաբորատոր գույքի կիրառման ձեռնարկ, որը կհամարի ուսուցչի դասավանդման ձեռնարկին և կուղղորդի ստացված գույքի պատշաճ կիրառումը, տարեկան սպասարկումն ու խնամքի հաճախականությունը:

Համացանցում հասանելի են բազմաթիվ լաբորատոր փորձերի տեսագրություններ և ուսուցիչների նախաձեռնությամբ դրանք կարող են հանդիսանալ դասավանդմանն ուղղորդող գործոններ: Սակայն կարիք կա դպրոցների միջև այս ուղղությամբ ստեղծել համագործակցության հարթակ, որտեղ ուսուցիչները հաջողված փորձով կկիսվեն միմյանց հետ, այն կմոտիվացնի լաբորատորիաները գործարկել առավել արդյունավետ և լինել ստեղծարար:

ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ 1.3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿԸ

Ենթաբաղադրիչի հիմնական նպատակն է բարձրացնել կրթության համակարգում հաղորդակցության արդյունավետությունը՝ ՏՀՏ-ի միջոցով և աջակցել սովորողների գիտելիքների ձեռքբերումների մշտադիտարկմանը և գնահատմանը:

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ենթաբաղադրիչը հանրակրթության մեջ ՏՀՏ-ի ներդրման՝ երկրորդ վարկային ծրագրի մաս կազմող ենթածրագրի զարգացումն է:

Ենթաբաղադրիչ 1.3-ով նախատեսված գործողությունները՝ ԿՏԱԿ-ի գրասենյակային տարածքի հիմնանորոգումն ու բարեկարգումը, դպրոցների վերազինման նպատակով համակարգչային տեխնիկայի և ծրագրերի տրամադրումն ու կառավարման տեղեկատվական համակարգի ներդրումը, ուսուցիչների և վարչական անձնակազմի վերապատրաստումը ՏՀՏ բնագավառում և էլեկտրոնային ռեսուրսների ստեղծումը, հիմնականում կատարվել են:

Ենթաբաղադրիչի միջանկյալ արդյունքի թիրախային ցուցանիշները՝

- «Հիմնական և բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ՝ հիմնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համար». դիտարկվող ժամանակահատվածի վերջին տարում ամբողջությամբ ինտեգրված է և գործում է ընդհանուր կրթական հաստատությունների կողմից, բարձրագույն կրթական հաստատությունները կգործարկեն համակարգը 2021թ-ի սեպտեմբեր ամսից:
- «Հանրակրթական դպրոցների սարքավորումային-տեխնիկական կարիքները գնահատված են, թիրախային դպրոցներում սարքավորումները թարմացվել են». 2018թ-ին վերապատրաստում անցած հանրակրթական ուսումնական 387 հաստատություններում 2019թ-ին ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից իրականացվել է սարքավորումային-տեխնիկական կարիքի գնահատում, 42 հաստատությունների տրամադրվել է ինտերակտիվ պրոյեկտորներ, 63-ին՝ պրոյեկտորներ: Բացի այդ, 2020թ-ին ՀՀ մարզերի (բացառությամբ Տավուշի մարզի) 101 ուսումնական հաստատությունում տեխնիկապես կահավորվել է մեկական դասասենյակ, 107 ավագ դպրոցների տրամադրվել է կոնֆերանս տեսախցիկ՝ հեռավար դասընթացներ և բաց դասեր կազմակերպելու համար:
- 2021թ-ին նախատեսվում է 272 դպրոցի տրամադրել պրոյեկտորներ, որոնց մատակարարումն ընթացքում է: Այս դպրոցներից 259-ին նախատեսվել է տրամադրել նաև դյուրակիր համակարգիչ, որն արդեն իրականացվել է:
- «Ավագ և հիմնական դպրոցներում դասավանդվող մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների ուղղությամբ բացակայող թեմաների համար տրամադրվել են էլեկտրոնային ռեսուրսներ». 2017թ.-ին իրականացվել է «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրից բաց մնացած ֆիզիկա,

քիմիա և կենսաբանություն առարկաների 50%-ի ուղղությամբ էլեկտրոնային կրթական նյութերի մշակումը, որոնք հասանելի են <http://esource.armedu.am/> հասցեով:

- «Դասապրոցեսի ընթացքում SCS գործիքների կիրառման խթանման նպատակով վերապատրաստվել է 4,000 ուսուցիչ և վարչական աշխատող»։ վերապատրաստումներ իրականացնելու նպատակով կանադական «Ագենս Յունիվերսարի դե Լա Ֆրանկոֆոն» կազմակերպության կողմից 2017թ.-ին իրականացվել է SCS վերապատրաստումների 7 մոդուլների մշակման և Երևանից ու մարզերից 30 վերապատրաստողների վերապատրաստման աշխատանքներ: 2018թ-ին ՀՀ բոլոր մարզերից և Երևանից վերապատրաստվել են 584, 2019թ-ին՝ 1,510, 2020թ-ին՝ 1,197 ուսուցիչ և վարչական անձնակազմի անդամներ, որոնց ավարտական թեստը հանձնելուց հետո տրվել է հավաստագիր:
- Այսպիսով՝ հետազոտության պահի դրությամբ վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել ընդհանուրը 3,291 ուսուցչի և վարչական աշխատողների համար: 2021 թվականին նախատեսվում է իրականացնել ևս 1,000 ուսուցչի և վարչական անձնակազմի վերապատրաստում, որի պարագայում միջանկյալ թիրախային ցուցանիշը կկատարվի 100%-ով:

Ենթաբաղադրիչի իրականացումը նպաստել է Հայաստանի հանրակրթության ոլորտում SCS ներդրման ընդլայնմանը, հատկապես դպրոցի ուսումնական գործընթացում SCS կիրառման զարգացմանը: Հանրակրթական և մասնագիտական ինտեգրված կառավարման տեղեկատվական համակարգն ապահովում է Հայաստանի բոլոր կրթական հաստատություններից տվյալների հավաքագրումն ու վիճակագրական վերլուծությունների կատարման և հանրությանը համակարգված մատուցման հասանելիությունը:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՐԴՅՈՒՆՔ		
	Ավարտի ժամկետ	Կարգավիճակ
Անխափան գործող հիմնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ:	2017թ.	Իրականացված է
Սարքավորումային-տեխնիկական հագեցվածությամբ հանրակրթական դպրոցներ:	2021թ.	Իրականացված է
Մշակված էլեկտրոնային կրթական նյութեր առարկայական դասագրքերում բացակայող թեմաները լրացնելու նպատակով:	2017թ.	Իրականացված է
Արդիական SCS-ների կիրառման ուղղությամբ վերապատրաստված 4,000 ուսուցիչներ և վարչական աշխատողներ՝ ներառյալ էլկտրոնային կրթական նյութերի օգտագործման ուղղությամբ:	2021թ.	Մասնակի կատարված, ընթացքում է*

* Նշում. Հետազոտությունն իրականացվելու պահին միջանկյալ թիրախային ցուցանիշը կատարված է 82.3% տոկոսով: 2021թ-ին պլանավորված վերապատրաստումների արդյունքում ցուցանիշը անբողջությամբ կկատարվի:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սույն վարկային ծրագրին նախորդող «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակում նշանակալի ներդրում է արվել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում ներդնելու և օգտագործելու ուղղությամբ: ՏՀՏ-ների կիրառմամբ ուսուցումը դարձրել ենք ավելի արագ և բուհերում էապես նպաստում է կրթության որակի ու մատչելիության բարձրացմանը: Հայաստանում ՏՀՏ-ի կիրառումը կրթական գործընթացներում ևս շարունակում է զարգանալ: Վարկային ծրագրի շրջանակներում ստեղծվել և գործում են հանրակրթության, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգեր: Անհրաժեշտություն է դարձել ապահովել կրթության համակարգում տվյալների միասնական հավաքագրումը, վերլուծությունը և մշտադիտարկումը, ինչպես նաև կրթության բնագավառում իրականացվող միասնական ՏՀՏ քաղաքականության, ծրագրերի իրականացումը:

ՏՀՏ-ի կիրառումը կրթական գործընթացներում շարունակվել է «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի ընթացքում, որը արձանագրել է հետևյալ դրական արդյունքները.

- ՀՀ բոլոր դպրոցները համալրվել են համակարգչային սարքավորումներով և ծրագրերով:
- 1,420 դպրոցներ ընդգրկվել են դպրոցական ցանցի մեջ և միացվել համացանցին:
- ՀՀ բոլոր դպրոցներից մոտ 1,400 ներկայացուցիչներ (դպրոցի տնօրեններ, ուսուցիչներ, գրադարանավարներ) վերապատրաստվել են դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:
- Ստեղծվել և գործում է բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգը:

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը» (ԿՏԱԿ), որը ստեղծվել է «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին վարկային ծրագրի շրջանակներում, ներկայումս պատասխանատու է Հայաստանում կրթության բնագավառում իրականացվող ՏՀՏ քաղաքականության և ծրագրերի համար: Ի սկզբանե ԿՏԱԿ-ի գործունեության ոլորտը և նպատակները գլխավորապես երկու ուղղություն ունեին՝ գոյություն ունեցող դպրոցական ցանցի պահպանում և դրա ընդլայնում: Բացի այդ, ԿՏԱԿ-ը պատասխանատու է նաև կրթության ու դրա կառավարման գործընթացներում առկա տեխնոլոգիաների ներդրման համար: Սկսած 2013թ. ԿՏԱԿ-ը ծառայություններ է մատուցել ՀՀ բոլոր կրթական հաստատություններում՝ ներառյալ նախնական և միջին մասնագիտական ու բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Մինչ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի մեկնարկը մշակվել էին կառավարման տեղեկատվական առանձին համակարգեր հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատությունների համար, ինչը ենթադրում էր, որ օգտատերերն ստիպված էին լինելու օգտվել տվյալների բազայի 2 տարբեր աղբյուրներից ՀՀ կրթության ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալներ և որոշակի վերլուծություններ ստանալու նպատակով:

Վարկային երկրորդ ծրագրի շրջանակում իրականացված ուսումնասիրությունը բացահայտել է հանրակրթական և մասնագիտական կրթական տեղեկատվական համակարգերի

ինտեգրման և տարածման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ ուսուցիչների ՏՀՏ հմտությունների և դպրոցներում ՏՀՏ արդյունավետ ինտեգրման հավելյալ կարիքները:

ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ 1.3-Ի ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿՏԱԿ-ի գրասենյակային տարածքի հիմնանորոգում և բարեկարգում

«Կրթության բարելավում» վարկային ծրագրով 2018թ-ի ապրիլից մեկնարկել էին ԿՏԱԿ-ի նոր տարածքի հիմնանորոգման աշխատանքները: Մինչ այդ ԿՏԱԿ-ը գործունեություն էր ծավալում Ս. Վրացյան 73 հասցեում գտնվող շենքի չորս սենյակներում, սերվերների համար նախատեսված տարածքները համապատասխան չէին անհրաժեշտ չափանիշներին:

Մոտ մեկուկես տարվա ընթացքում հիմնանորոգվել է ողջ տարածքը, որը ներառել է շինության սեյսմիկ ամրացման աշխատանքները, ԿՏԱԿ-ի տեխնիկական կարողությունների հզորացման համար նախատեսված «Տվյալների մշակման նոր կենտրոնի» նախագծում ու տեղադրում: Հիմնվել է դահլիճ, խորհրդակցությունների և վերապատրաստումների սրահներ՝ մինչև 50 մասնակցի համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԿՏԱԿ-ը պատասխանատու է ինչպես հանրակրթության, այնպես էլ միջին և բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի գործունեության համար, ենթաբաղադրիչի շրջանակում նախատեսվել և ձեռք է բերվել ժամանակակից համակարգչային սարքավորումներ և ծրագրեր:

Ենթաբաղադրիչի շրջանակներում ֆինանսական միջոցներ են տրամադրվել ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերման և էլեկտրոնային ուսումնական նյութերի մշակման նպատակով ՀՀ-ի բոլոր դպրոցներում կիրառելու նպատակով: 2019թ-ի հոկտեմբերի 30-ին տեղի է ունեցել ԿՏԱԿ-ի նոր շենքի բացման արարողությունը նոր հասցեում (Բուռնազյան 37, թից 16 ավագ դպրոցի հարևանությամբ):

ԿՏԱԿ-ը շարունակական տեխնիկական աջակցություն է տրամադրում 1,420 կրթական ուսումնական հաստատություններ ընդգրկող Հայաստանի կրթական ցանցին (ՀԿՑ)՝ տեխնիկական մասնագետների ընդարձակ կազմի միջոցով: Այս աջակցությունը ներառում է դպրոցական ցանցի տեխնիկական սպասարկումը, տեխնիկական սարքավորումների տրամադրումը, վերանորոգումն ու թարմացումը, մարզային հանգույցների սպասարկումը, ցանցի անվտանգության ապահովումը՝ ներառյալ հաքերային հարձակումների կանխումն ու պաշտպանությունն անցանկալի բովանդակությունից: Այսպիսով՝ ԿՏԱԿ-ը շարունակականորեն ապահովում է Հայաստանի կրթական ցանցի անխափան գործունեությունը:

Բացի այդ, ԿՏԱԿ-ը պատասխանատու է նաև կրթության ու դրա կառավարման գործընթացներում առկա տեխնոլոգիաների ներդրման համար: Կենտրոնը էլեկտրոնային փոստի աշխատանքային հասցեներ բացելու հնարավորություն է ապահովում www.schools.am միջավայրում, իր սերվերի վրա ընդունում դպրոցների պաշտոնական կայքեր, մշակում և թարմացնում է «Հայկական կրթական միջավայր» պորտալը (www.armedu.am), որը ներառում է կրթական ֆորում, էլեկտրոնային ուսուցման հարթակ, էլեկտրոնային կրթական նյութերի

շտեմարան: Այն շարունակում է աջակցություն ցուցաբերել նաև դպրոցների համակարգչային կենտրոններում օգտագործվող ծրագրերը թարմացնելու գործում:

Կենտրոնացված հեռավար ուսուցման կազմակերպման նպատակով 2019թ-ին ԿՏԱԿ-ում ստեղծվել է «Հեռավար ուսուցման կազմակերպում» կենտրոնը տնային/հեռավար ուսուցման անհրաժեշտություն ունեցող երեխաների համար: Ձևավորվել է ուսուցիչների, մենթորների, ավագ ուսուցիչների և նկարահանող խմբից բաղկացած անձնակազմ, որը 2019-2021թթ-ին հեռավար ուսուցման նպատակով նկարահանել է 2,000-ից ավել տեսադաս: Կենտրոնացված հեռավար ուսուցման գործընթացի շրջանակներում 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսումնական առարկաների հեռավար դասընթացներին մասնակցել են 1-ից 12-րդ դասարանների շուրջ 5,000 աշակերտներ (ներառյալ ավագ դպրոցի առկա հոսքերը), կրթական բովանդակությունն աշակերտներին մատուցվել է տեսադասերի, վեբինար հանդիպումների և էլեկտրոնային նյութերի միջոցով, շահառու խմբերին (աշակերտ, ծնող, ուսուցիչ) ցուցաբերվել է խորհրդատվական աջակցություն:

ԿՏԱԿ-ը պատասխանատու է կրթության կառավարման համակարգի միջոցով ՀՀ կրթական բոլոր հաստատություններից տվյալների հավաքագրման և վիճակագրական վերլուծությունների կատարման և հանրությանը համակարգված ձևով մատուցման համար: ԴԿՏՀ-ը լիովին և անխափան գործում է՝ հնարավորություն ընձեռելով ստանալ վիճակագրական տվյալներ դպրոցական ուսումնական հաստատությունների, սովորողների և ուսուցիչների վերաբերյալ օգտատիրոջ նախընտրած ֆիլտրերով և վերլուծական գործիքների միջոցով: Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ) ինտեգրման ենթահամակարգի ստեղծման աշխատանքներն ավարտվել են, միջին մասնագիտական հաստատություններն ինտեգրվել և օգտագործում են համակարգը, բուհերը կինտեգրվեն 2021թ-ի սեպտեմբերից¹⁰:

Նոր նախագծված տվյալների մշակման կենտրոնում հաշվի է առնվել ներկայումս պահանջվող տեխնիկական հզորությունը: Պայմանավորված այն հանգամանքով, որ տվյալների մշակման նոր կենտրոնում ամբողջությամբ թվային եղանակով նախատեսվում է պահպանել ՀՀ հանրակրթական հաստատություններում ստեղծվող փաստաթղթերից 5-ը 5-10 տարի պարտադիր պահպանման ժամկետով՝ հավանական է, որ ապագայում ԿՏԱԿ-ը ֆիզիկական սերվերների կարողությունների հզորացման անհրաժեշտություն ունենա:

ՀՀ-ի կրթական համակարգի բոլոր մակարդակներում ՏՀՏ-ի կիրառման նպատակով համակարգչային սարքավորումների և ծրագրերի ձեռքբերում

2018 թվականին վերապատրաստում անցած հանրակրթական ուսումնական 387 հաստատություններում 2019թ-ին ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից արված հարցումների միջոցով իրականացվել է կարիքների գնահատում՝ դպրոցներում ինտերակտիվ պրոյեկտորի, ինտերակտիվ գրատախտակի և դյուրակիր համակարգիչների առկայությունները պարզելու նպատակով: Կարիքների գնահատման արդյունքների հիման վրա հանրակրթական

¹⁰ Աղբյուրը՝ ԿՏԱԿ-ի գործունեության ամփոփ հաշվետվություններ, ԿԾԿ ԾԻԳ-ի եռամսյակային հաշվետվություններ, Ի-Կի Քոնսալթինգ ընկերության հետազոտություն:

ուսումնական 42 հաստատությունների տրամադրվել են ինտերակտիվ գրատախտակներ, իսկ ուսումնական 63 հաստատությունների՝ պրոյեկտորներ:

Կարիքների գնահատման հիման վրա 2020թ. գնումների պլանով նախատեսված էր ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգչային սարքավորումներով վերազինում: Այդ նպատակով ԿԳՄՍ նախարարության և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրած տեղեկատվության հիման վրա, ԿԾԿ ԾԻԳ-ը իրականացրել է վերլուծություն՝ հեռավար ուսուցման կարիք ունեցող ուսումնական հաստատությունների ընտրության և այդ հաստատություններում հեռավար ուսուցումը կազմակերպելու համար անհրաժեշտ համակարգչային սարքավորումների առկայությունը որոշելու նպատակով:

Առանձնացվել են բոլոր այն ուսումնական հաստատությունները, որտեղ որևէ առարկա չի դասավանդվում ուսուցչի բացակայության պատճառով կամ դասավանդվում է հինգ տարուց պակաս այդ առարկան դասավանդող, մասնագիտական կրթություն չունեցող ուսուցչի կողմից: Արդյունքում, ընտրվել են ՀՀ մարզերի (բացառությամբ Տավուշի մարզի) 101 ուսումնական հաստատություններ՝ հեռավար ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով վերազինման նպատակով: Այսպիսով, հեռավար դասընթացներ անցկացնելու նպատակով 101 ուսումնական հաստատություններում տեխնիկապես կահավորվել է մեկական դասասենյակ՝ համակարգիչ, բազմաֆունկցիոնալ տպիչ, պրոյեկտոր, վեբ տեսախցիկ, անխափան սնուցման սարք, պրոյեկտորի էկրան, բարձրախոս, 107 ավագ դպրոցների տրամադրվել է կոնֆերանս տեսախցիկ՝ հեռավար դասընթացներ, բաց դասեր կազմակերպելու համար:

Կարիքների գնահատման հետազոտության արդյունքների հիմնավորմամբ 2021թ-ին 259 դպրոցների տրամադրվել է դյուրակիր համակարգիչ՝ դպրոցների դասապրոցեսներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

Ավագ և հիմնական դպրոցներում դասավանդվող մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների ուղղությամբ բացակայող թեմաների համար էլեկտրոնային կրթական ռեսուրսների մշակում

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակում ենթաբաղադրիչ 1.3-ով սկզբնապես նախատեսվում էր բաց կրթական հարթակի ստեղծում, սակայն 2011 թ. ՀՀ կառավարության որոշմամբ այն կասեցվեց՝ պայմանավորված կրթական ուղղվածության արդեն իսկ գոյություն ունեցող պորտալի (www.armedu.am) զարգացման նպատակահարմարությամբ: Արդյունքում վերոնշյալ բաց կրթական հարթակի փոխարեն որոշվել էր ստեղծել էլեկտրոնային կրթական ռեսուրսների պաշարներ: Էլեկտրոնային կրթական բովանդակության և նյութերի վերաբերյալ կարիքների գնահատման արդյունքների հիման վրա 2015 թ. հոկտեմբերից սկսվեցին ավագ և հիմնական դպրոցներում դասավանդվող մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների համար էլեկտրոնային կրթական ռեսուրսներ մշակման աշխատանքները «Մակադամիան Առ» ՓԲԸ-ի կողմից: Երկրորդ վարկային ծրագրի ավարտին արդեն մշակվել էին էլեկտրոնային կրթական նյութերի

որը ծավալի 50%-ը: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են 2017թ.-ին: Էլեկտրոնային կրթական նյութերը հասանելի են <http://esource.armedu.am/> հասցեով:


Մշակված էլեկտրոնային նյութերի շահառուներ են հանդիսանում տվյալ առարկան դասավանդող ուսուցիչ, աշակերտներ ու ծնողներ: Ռեսուրսները հասանելի են նաև հանրության համար: Չորս առարկաներից յուրաքանչյուրի ուղղվածությամբ նյութերի փաթեթը ներառում է դասի տեսական նյութը, տեսական նյութը ամրապնդելու համար ինտերակտիվ նյութեր՝ գործնական աշխատանքների համար, լաբորատոր աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են խորացնելու և ամրապնդելու աշակերտների տեսական գիտելիքները, ինչպես նաև ցուցադրություններ՝ դասի վերաբերյալ տեսանյութեր:

Ֆիզիկա առարկայից մշակվել է 7-12 դասարանների համար ընդհանուրը 32 թեմա, երկրաչափություն առարկայից՝ 16 թեմա, քիմիա առարկայից՝ 36 թեմա, և կենսաբանություն առարկայից՝ 41 թեմա:

Նյութերը հասանելի են շահառուներին առցանց, ինչպես նաև անցանց ձևաչափով՝ շահառուների համակարգիչների վրա:

Կայքի այցելությունների վերաբերյալ վիճակագրական տվյալները փաստում են, որ տարեցտարի ավելանում են կայք այցելող և նյութերից օգտվող շահառուների քանակը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.3.1. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՅՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ, ՀԱՋԱՐ ՄԱՐԴ




Աղբյուր՝ ԾԻԳ-ից ստացված վիճակագրական տվյալներ Էլեկտրոնային կրթական նյութերի կայք էջ այցելությունների վերաբերյալ, 2021թ.

Առավել բարձր է կայքի այցելությունների քանակը ֆիզիկա և կենսաբանություն առարկաների ենթաբաժիններ: Նյութերի կայքէջ այցելությունների քանակը կտրուկ աճել է քիմիա, կենսաբանություն և ֆիզիկա առարկաների ենթաբաժիններ հատկապես 2020թ-ին, ինչը, հավանաբար, բացատրվում է այն հանգամանքով, որ 2020-ի մարտ ամսից ՀՀ դպրոցներն ամբողջովին անցան հեռավար կրթության ձևաչափի: Դասերն իրականացվում էին խմբային տեսազանգերի միջոցով, ուսուցիչները մեծապես օգտվում և օգտագործում էին էլեկտրոնային

ռեսուրսները դասապրոցեսում: Բացակայող աշակերտներն ուղղորդվում էին համապատասխան կայքէջ՝ բաց թողած թեմաները լրացնելու էլեկտրոնային ռեսուրսների միջոցով:

Ուսուցիչների շրջանում էլեկտրոնային կրթական նյութերի վերաբերյալ տեղեկացվածության և գոհունակության մակարդակի բացահայտման նպատակով նշված առարկաների ուսուցիչների շրջանում իրականացվել է քանակական հետազոտություն էլեկտրոնային եղանակով՝ EMIS համակարգի «էլեկտրոնային մատյան» հարթակի միջոցով: Հետազոտության վերջնաժամկետին ստացվել է 2,264 պատասխան: Ստացված տվյալների ժողովրդագրական վերլուծությունը ներկայացված է ստորև:


ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.3.2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԸՆՏՐԱՆՔԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ




Աղբյուր՝ 4 առարկաների ուսուցիչների շրջանում իրականացված քանակական հետազոտություն, Ի-Վի Քոնսալթինգ, 2021թ.

Ըստ հարցումների արդյունքի՝ մեծամասնությունը էլեկտրոնային կրթական նյութերի մասին տեղեկացել է անձնական որոնումների արդյունքում (հարցվածների 53%-ը): ԿՏԱԿ-ից նյութերի հասանելիության մասին տեղեկացել են 37%-ը, դպրոցի տնօրինությունից՝ 34%-ը, իսկ 28%-ը նյութերի մասին տեղեկացել է ԾԻԳ-ից:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.3.3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՕԳՏՎԵԼԸ



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.3.4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԶՕԳՏՎԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ



Աղբյուր՝ 4 առարկաների ուսուցիչների շրջանում իրականացված քանակական հետազոտություն, Ի-Վի Քոնսալթինգ, 2021թ.

Պատասխանողների յուրաքանչյուր 5-ից 4-ն օգտվում է էլեկտրոնային կրթական նյութերից: Զօգտվելու հիմնական պատճառը պատասխանողների մեծամասնության շրջանում հանդիսանում է դասարանում համակարգչային տեխնիկայի և ինտերնետ կապի բացակայությունը: Որպես այլ պատճառներ պատասխանողների կողմից նշվել է կայքից օգտվելու դժվարությունը և մշակված նյութի ոչ բավարար որակը:


Հարցվածների մոտ 70%-ն օգտվում է էլեկտրոնային ռեսուրսներից բավականին բարձր հաճախականությամբ: Առավել հաճախ օգտվում են կենսաբանություն և ֆիզիկա առարկաներ դասավանդող ուսուցիչները, պատասխանողների մոտ 66% և 77%-ը համապատասխանաբար: Երկրաչափություն առարկան դասավանդող ուսուցիչներն օգտվում են համեմատաբար ավելի ցածր հաճախականությամբ՝ պատասխանողների մոտ 63%-ը: Վերջիններիս կողմից ավելի ցածր հաճախականությամբ էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու փաստը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ երկրաչափություն առարկայից մշակվել են թվով

ամենաքիչ քանակի թեմաները՝ 16 թեմա, այն դեպքում, երբ օրինակ՝ կենսաբանություն առարկայից մշակվել է 41 թեմա, ֆիզիկայից՝ 32 թեմա, քիմիայից՝ 36 թեմա:

Երևանում և մարզերում բնակվող պատասխանողները էլեկտրոնային ռեսուրսներից օգտվում են գրեթե հավասար հաճախականությամբ: Ինչ վերաբերում է տարանջատմանն ըստ պատասխանողների տարիքային խմբերի, ապա առավել հաճախ նյութերից օգտվում են մինչև 27 և 36-50 տարիքային խմբերում գտնվող մասնագետները, համեմատաբար ավելի հազվադեպ՝ 51-ից ավելի բարձր տարիքային խմբում գտնվող պատասխանողները:

Պատասխանողների միայն յուրաքանչյուր երկրորդն է նշում, որ մշակված նյութերը միանշանակ նպաստում են աշակերտների կողմից նյութի յուրացմանը: Մյուս մասը նշել է, որ մշակված նյութերը միայն որոշ չափով են նպաստում նյութի յուրացմանը: Միայն յուրաքանչյուր երրորդն է պատասխանել, որ մշակված էլեկտրոնային կրթական նյութերն ամբողջությամբ լրացնում են 4 առարկաների դասագրքերի թեմաների բացերը: Պատասխանողների մեծամասնությունը կարծում է, որ դրանք միայն որոշ չափով են լրացնում դասագրքերի թեմաների բացերը (պատասխանողների մոտ 52%-ը):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.3.5. ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐԻ ԳՈՒՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ*



Աղբյուր՝ 4 առարկաների ուսուցիչների շրջանում իրականացված քանակական հետազոտություն, Ի-Վի Քոնսալթինգ, 2021թ.

*Պատասխանողներն իրենց գոհունակության մակարդակն ըստ գործոնների գնահատել են 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է, որ ընդհանրապես գոհ չեն, 5-ը՝ շատ գոհ են:

Պատասխանողներն առավել բարձր գոհունակության մակարդակ են արտահայտել էլեկտրոնային ռեսուրսների ընդհանուր օգտակարությունից, առավել ցածր՝ լաբորատոր և գործնական աշխատանքների բաղադրիչների որակից: Նյութի ընդհանուր օգտակարությունից առավել բարձր գոհունակություն են արտահայտել ֆիզիկա, իսկ համեմատաբար ավելի ցածր՝ երկրաչափություն առարկաների մասնագետներ՝, 4.56 և 4.38 համապատասխանաբար:

Առհասարակ պատասխանողները նշում են, որ բարձր են գնահատում մշակված էլեկտրոնային նյութերի օգտակարությունը և առաջարկում են շարունակականորեն ընդլայնել ընտրված առարկաներից մշակվող թեմաների ցանկը:

Առարկաների դասավանդման և ուսումնական հաստատությունների վարչարարության ընթացքում SCS կիրառման ուղղությամբ ուսուցիչների և վարչական անձնակազմի վերապատրաստումներ


2017թ.-ին ծրագրի շրջանակում «Ազենս Յունիվերսարի դե Լա Ֆրանկոֆոն» կազմակերպությունը մշակել է SCS վերապատրաստումների 7 մոդուլներ և վերապատրաստել Երևանից ու մարզերից 30 վերապատրաստողներ:

2018 թվականին 29 տեղական վերապատրաստողներ՝ նախօրոք կազմված ժամանակացույցի համաձայն (ըստ հաստատությունների և մարզերի՝ 10 խումբ Երևանում և 20 խումբ մարզերում) իրականացրել են ՀՀ բոլոր մարզերից և Երևանից 584 ուսուցչի և վարչական աշխատողների հասցեական վերապատրաստումներ՝ առարկաների դասավանդման և ուսումնական հաստատությունների վարչարարության ընթացքում SCS կիրառման ուղղությամբ: 2019թ.-ին նույն կարգով իրականացվել է 1,510 ուսուցչի վերապատրաստում: 2020թ.-ի ընթացքում համաճարակով պայմանավորված առցանց ձևաչափով ընդհանուր առմամբ վերապատրաստվել են 1,197 ուսուցիչ և վարչական անձնակազմ, որոնց, ավարտական թեստը հանձնելուց հետո, բոլորին շնորհվել է համապատասխան հավաստագիր:

Սույն զեկույցի մշակման դրությամբ՝ նախատեսված դպրոցներում ուսուցիչների և վարչական անձնակազմի շրջանում վերապատրաստման աշխատանքները դեռ շարունակվում են: Ընդհանուր առմամբ, 2021թ.-ին նախատեսվում է իրականացնել ևս 1,000 շահառուների շրջանում վերապատրաստումներ:

Իրականացված վերապատրաստումների արդյունավետության վերաբերյալ շահառուների գոհունակության մակարդակը բացահայտելու նպատակով վերջիններիս շրջանում իրականացվել է քանակական հետազոտություն ս.թ.հունիս ամսին: Հարցմանը մասնակցել են 463 ուսուցիչ և վարչական անձնակազմի ներկայացուցիչ Երևանից և ՀՀ մարզերից: Հարցման մասնակիցների ժողովրդագրությունը ներկայացված է ստորև՝ գծապատկերում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.3.6. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԸՆՏՐԱՆՔԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



Աղբյուր՝ վերապատրաստման մասնակիցների շրջանում իրականացված քանակական հետազոտություն, Ի-Վի Քոնսալթինգ, 2021թ.

Վերապատրաստման մասնակիցները հիմնականում մաթեմատիկա, ինֆորմատիկա և բնական գիտությունների ոլորտի մասնագետներ են: Վերապատրաստումներին մասնակցել են նաև հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ, տեխնոլոգիա, ֆիզիկական կրթության առարկաների ուսուցիչներ, ինչպես նաև դասվարներ:

Հարցվածների մոտ 84%-ը բարձր է գնահատում SCS ներդրման նպատակով իրականացված վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը: Մասնակիցների կողմից որպես դժգոհության պատճառ նշվել է այն հանգամանքը, որ վերապատրաստման նյութը եղել է շատ ծավալուն, իսկ վերապատրաստման համար հատկացված ժամանակը բավարար չի եղել այն լիովին յուրացնելու համար: Դժգոհության այլ պատճառներ են եղել գործնական աշխատանքների ոչ բավարար քանակը, վերապատրաստման նյութի մատչելի չլինելը, ներկայացված գործիքների կիրառելի և օգտակար չլինելը, նյութը մատուցելու անարդյունավետ մեթոդները:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցելուց հետո ուսուցիչներն առավել հաճախ դասապրոցեսում օգտագործում են ուսումնական էլեկտրոնային տիրույթները՝ Moodle, Padlet և էլեկտրոնային ռեսուրսներ կազմելու գործիքները՝ Screencast-O-Matic, Quizizz (հարցվածների մոտ 52%-ը յուրաքանչյուրի դեպքում): Աշակերտների առաջընթացի գնահատման գործիքներն ու դասի պլանավորման և էլ. նյութերի պաշարման տիրույթներն ուսուցիչների կողմից օգտագործվում են համեմատաբար ավելի հազվադեպ:

Ուսուցիչների կողմից վերոնշյալ գործիքների ոչ շատ հաճախ օգտագործման հիմնական պատճառներ են հանդիսանում դասարանում և ուսուցիչների ու աշակերտների տանը համապատասխան տեխնիկական միջոցների բացակայությունը, դպրոցում ինտերնետային կապի հաճախակի խափանումները, ներկայացված գործիքների՝ գործնականում օգտագործելու անհարմարությունը:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.3.7. ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

1	Աշակերտներն ավելի մեծ հետաքրքրությամբ են մասնակցում դասին	74.2%
2	Դասապրոցեսը դարձել է ավելի ինտերակտիվ և համագործակցային	57.6%
3	Աշակերտների գնահատման գործընթացը դարձել է ավելի դյուրին և թափանցիկ	36.5%
4	Ուսուցչի համար ավելի հեշտ է պատրաստվել դասին և վարել այն	35.5%
5	Ընդհանուր առմամբ փոփոխություն տեղի չի ունեցել	4.1%

Աղբյուր՝ 4 առարկաների ուսուցիչների շրջանում իրականացված քանակական հետազոտություն, Ի-Վի Քոնսալթինգ, 2021թ

Այն ուսուցիչներն, ովքեր կիրառում են ՏՀՏ գործիքները դասապրոցեսում, փաստում են, որ դրանց կիրառման արդյունքում դասերը դարձել են ավելի ինտերակտիվ և համագործակցային և աշակերտներն ավելի մեծ հետաքրքրությամբ են մասնակցում դասերին: Գործիքները կիրառող մասնագետների միայն 4%-ի կարծիքով գործիքների կիրառման արդյունքում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել դասապրոցեսում:

Որպես ՏՀՏ գործիքների օգտագործման արդյունավետությունը բարելավելու առաջարկ հարցման մասնակիցները նշել են, որ դպրոցներում անհրաժեշտ է ավելացնել համակարգիչների և այլ տեխնիկական միջոցների քանակը, բարելավել ինտերնետային կապի որակը և իրականացնել պարբերական և ավելի երկար տևողությամբ վերապատրաստումներ:

Մինչ վերապատրաստումներին մասնակցելը, ըստ հարցման մասնակիցների մեծամասնության պնդման, իրենց ՏՀՏ հմտությունների տիրապետումը և դրանց դասավանդման գործընթացում օգտագործումը եղել է միջին մակարդակի վրա: Սակայն վերապատրաստման դասընթացներն անցնելուց հետո նրանցից յուրաքանչյուր երկրորդը նշել է, որ լիովին տիրապետում է և կարող է կիրառել գործիքները դասապրոցեսում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի «Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում» ենթաբաղադրիչով նախատեսված գործողությունները մեծամասամբ իրականացվել են:

Ենթաբաղադրիչով իրականացված գործողությունների և ձեռք բերված արդյունքների նյութականացման ու պահպանման դիսկերը հիմնականում արտաքին են:

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տվյալների մշակման նոր կենտրոնում նախատեսվում է ամբողջությամբ թվային եղանակով պահպանել ՀՀ հանրակրթական հաստատություններում ստեղծվող փաստաթղթերից 5-ը 5-10 տարի պարտադիր պահպանման ժամկետով: Աշխատանքների շարունակականության ապահովման և անվտանգության տեսանկյունից հնարավոր է ԿՏԱԿ-ն ապագայում ֆիզիկական սերվերների կարողությունների հզորացման անհրաժեշտություն ունենա:
- Հիմնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգն ընդհանուր և մասնագիտական կրթության համար, ամբողջությամբ ինտեգրված է և գործում է: Համակարգն օգտագործվում և տվյալները պարբերաբար թարմացվում են ՀՀ բոլոր դպրոցների, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից: Համակարգում տվյալները չեն մուտքագրվում միայն բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից: Վերջիններս օրենքի պահանջին համապատասխան կսկսեն կիրառել համակարգը ս.թ. սեպտեմբեր ամսից սկսած:
- Հիմնական և ավագ դպրոցների ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և երկրաչափություն առարկաների դասագրքերում բացակայող թեմաների համար մշակվել են էլեկտրոնային կրթական նյութեր: Նյութերի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը շահառուների շրջանում տարեցտարի մեծանում է, կայքի այցելությունների ընդհանուր քանակը՝ էականորեն աճում: Նյութերը, ըստ շահառուների կարծիքի, որոշ չափով լրացնում են առարկաների դասագրքերի բաց թեմաները, սակայն նյութերի լրամշակման անհրաժեշտություն կա:
- Դասապրոցեսում ՏՀՏ գործիքների կիրառման ուղղությամբ ՀՀ բոլոր մարզերից վերապատրաստվել է ավելի քան 3,000 ուսուցիչ և վարչական աշխատող: Վերապատրաստման մասնակիցները բարձր են գնահատում վերապատրաստման արդյունավետությունը, սակայն, ըստ մասնակիցների պնդման, վերապատրաստման նյութը եղել է ծավալուն, իսկ հատկացված ժամանակը՝ ոչ բավարար մատուցվող նյութը լիովին յուրացնելու համար: Առաջարկվել է երկարաձգել դասընթացների տևողությունը, ուսումնասիրել մատուցվող նյութն առավել խորությամբ, դպրոցները համալրել անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով և անխափան ինտերնետային կապով:
- Հանրակրթական դպրոցներում պարբերաբար իրականացվում է սարքավորումային-տեխնիկական կարիքների գնահատում, թիրախային դպրոցներին տրամադրվում են անհրաժեշտ տեխնիկական միջոցներ: Այդուհանդերձ, հանրապետությունում դեռ կան դպրոցներ (հատկապես սահմանամերձ բնակավայրերում), որտեղ տեխնիկական միջոցները ծայրահեղ անբավարար են:
- Դպրոցների տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ է պահպանման ծախսերի կանոնավոր ապահովում: Ներկայումս համակարգչային տեխնիկայի սպասարկումը դպրոցներն իրենք են կազմակերպում: Սա հաճախ խնդրահարույց է՝ դպրոցների սուղ ֆինանսական միջոցների պատճառով: Դպրոցների՝ սովորողների թվով պետական ֆինանսավորման գործող համակարգը հաճախ անբավարար է նախատեսված

գործառույթները լիարժեք իրականացնելու համար, մասնավորապես՝ ֆինանսավորման ծավալը հնարավորություն չի տալիս ապահովել տեխնիկական բազայի անհրաժեշտ մակարդակ (Ի-Վի Քոնսալթինգ, 2021):

- Ենթաբաղադրիչի շրջանակում իրականացված գործողությունների և ստացված արդյունքների շարունակականության համար անհրաժեշտ է պետական շարունակական ուշադրություն:
- Դպրոցների տեխնիկական համալրվածությունն ու զարգացումը և ուսումնական գործընթացում SCS-ի լայն կիրառումը պահանջում են շարունակական նպատակային ֆինանսավորում:
- Մեր օրերում տեխնոլոգիաների արագ առաջընթացի պայմաններում տեխնիկական բազայի և էլ. ռեսուրսների թարմացման և համալրման հնարավորությունների սահմանափակությունը նվազեցնում է դպրոցներում կիրառվող SCS-ների որակական ցուցանիշը: Օրինակ՝ թեև բոլոր դպրոցները միացել են Հայաստանի դպրոցների ցանցին, փորձագիտական հարցումները և դպրոցներում իրականացված ֆոկուս-խմբերը ցույց են տալիս, որ համացանցային կապի որակը քաղաքային համայնքներում հաճախ ցածր է, իսկ մարզերում և հատկապես գյուղական համայնքներում տեղի են ունենում կապի հաճախակի խափանումներ: Սա բացասաբար է ազդում դասավանդման ընթացքում SCS-ների լայն կիրառման, էլեկտրոնային կրթական ռեսուրսներից օգտվելու, ինչպես նաև վարչական գործառույթների իրականացման վրա: Վերոնշյալ խնդիրը հաճախ պայմանավորված է դպրոցների SCS-ի աճող կիրառմամբ և SCS-ի նորանոր պահանջներով, որոնք բավարարելը ժամանակին ներդրված տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներով այսօր արդեն մարտահրավեր է:
- Հաշվի առնելով աշխարհում և Հայաստանում SCS-ի արագ փոփոխվող զարգացումները՝ անհրաժեշտ է կանոնավոր կերպով իրականացնել դպրոցների SCS-ի զարգացումների, սահմանափակումների և միտումների գնահատում: Սա կնպաստի դպրոցների SCS կարիքների արդյունավետ հասցեագրմանը:

ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ 1.4. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ՝ ԿՐԹԱԿԱՐԳԻ և ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ՆՊԱՏԱԿ

Ենթաբաղադրիչի նպատակն է բարելավել կրթության որակը կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով, ինչպես նաև ապահովել սովորողների գիտելիքների և հմտությունների բարելավումը համաձայն արդի պահանջների:

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ենթաբաղադրիչի նպատակն է աջակցել հանրակրթության՝ տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի առարկայական չափորոշիչների ու ծրագրերի վերանայմանը, ինչպես նաև վերապատրաստել ուսուցիչներին նոր չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան:

Ենթաբաղադրիչով նախատեսված էր իրականացնել հանրակրթության պետական չափորոշի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման ուսումնասիրություն, ձևավորել աշխատանքային խմբեր, որոնք պետք է մշակեն վերոնշյալ չափորոշիչները և ծրագրերը, մշակված չափորոշիչների շուրջ իրականացնել ուսուցիչների վերապատրաստումներ, ինչպես նաև դասագրքերի հրատարակիչների և հեղինակների հավանական կազմի համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿ	ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼ	2021
Կրթության որակի բարձրացում կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով: Սովորողների գիտելիքների և հմտությունների բարելավում համաձայն արդի պահանջների:		
Թիրախային		
Փաստացի	-	Կատարված է

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ	ՑՈՒՑԱՆԻՇ	ԹԻՐԱՆ 2015	ՓԱՍՏԱՅԻ, 2021 Հուլիսի 31-ի դրությամբ
Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով	Հանրակրթության մասին ազգային ռազմավարական փաստաթուղթը վերանայված է և հաստատված կառավարության կողմից Առարկաների քանակ, որոնց չափորոշիչները և ուսումնական ծրագրերը վերանայվել և հաստատվել են կառավարության կողմից	9	Կատարված է 6*

* Հայաստանում ԵՄ-ն ի նպաստ նորարարության» փորձնական ծրագիրը «STEM» առարկաների մասով համընկնում էր «Կրթության բարելավում» վարկային ծրագրով թիրախավորված առարկաներին, ուստի ծրագրի շրջանակում 9 առարկայական ոլորտների փոխարեն վերանայվել են 6 առարկայական ոլորտների չափորոշիչներ և ուսումնական ծրագրեր՝ բացառելով ԵՄ ծրագրով նախատեսված «STEM» առարկաները

Հանրակրթության մասին ազգային ռազմավարական փաստաթուղթը՝ հանրակրթության պետական չափորոշիչը վերանայվել է և հաստատվել 2021 թվականի փետրվարի 9-ին ՀՀ կառավարության կողմից:

Նախատեսված 9 առարկայական ոլորտների փոխարեն վերանայվել է 6 առարկայական ոլորտների չափորոշիչներն և ուսումնական ծրագրերը (հայոց լեզու, գրականություն, օտար լեզուներ, հասարակություն, հասարակական գիտություններ, ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն, արվեստ և տեխնոլոգիա): Բնագիտամաթամաթիկական («STEM») ուղղվածությամբ 3 առարկաների չափորոշիչներն ու ուսումնական ծրագրերը վերանայվել են «Հայաստանում ԵՄ-ն ի նպաստ նորարարության» «STEM» փորձնական ծրագրի շրջանակում:

6 ոլորտների գծով առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը վերանայվել են, ներկայացվել են հանրային քննարկման, նախարարության հաստատումից հետո հաջորդաբար իրականացվել են ուսուցիչների վերապատրաստումներ: Ս.թ.հունվար ամսից վերանայված առարկայական չափորոշիչները և ծրագրերը փորձարկվել են Երևանի, Տավուշի և

Արագածոտնի մարզերից ընտրված 20 դպրոցներում, իսկ ս.թ.սեպտեմբերից նախատեսվում է փորձարկումն իրականացնել Տավուշի մարզի բոլոր դպրոցներում, որը կներառի նաև բնագիտամաթեմատիկական առարկաները:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության հայեցակարգային դրույթները համապարփակ կերպով սահմանվել են «Հանրակրթության պետական կրթակարգ»-ում, որը 2004թ-ին ՀՀ կառավարության որոշմամբ արժանացել է հավանության: Նույն ժամանակաշրջանում ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է նաև «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը»: Կրթության բովանդակությունը սահմանող վերոնշյալ երկու փաստաթղթերը մշակվել են «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում: Այնուհետև, 2009թ.-ին ընդունվեց «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, և Կրթակարգի բազմաթիվ բաժիններ և դրույթներ ներառվեցին օրենքում, սակայն, այն բաժինները, որոնք օրենքի ձևաչափով սահմանված չէին որպես հայեցակարգային դրույթներ, մնացել էին Կրթակարգում և ենթակա էին վերանայման: Նույն սկզբունքով վերանայվեց նաև «Միջնակարգ կրթության չափորոշիչը», որի հիման վրա մշակվեց և 2010 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց «Հանրակրթության պետական չափորոշիչը»:

Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի «Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով» ենթաբաղադրիչն ուղղված է հանրակրթության բովանդակության վերանայմանն ու արդիականացմանը:

ԵՆԹԱԲԱՂԱԴՐԻՉ 1.4-Ի ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրականացրած աշխատանքները

Ենթաբաղադրիչի շրջանակներում 2015-2016թթ. իրականացվել է «Հանրակրթության պետական չափորոշիչ, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքի գնահատման ուսումնասիրությունը», որին հաջորդել է հանրակրթության պետական չափորոշիչի վերանայման գործընթացի մեկնարկը: Այդ նպատակով ձևավորվել է 12 անհատ խորհրդատուներից կազմված աշխատանքային խումբ, որի աշխատանքը համակարգել է ԿԳՄՆ-ում կազմված հանձնաժողովը:

Համակարգող հանձնաժողովի որոշմամբ «Ազգային կրթակարգի» (Հանրակրթության պետական չափորոշիչ) նախագիծը հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 2017-2022թթ.-ի ծրագրի 1.4 կետի «ժ) Արարատյան բակալավրիատի և գերազանցության ծրագրի համադրմամբ ազգային կրթակարգի վերջնական ձևավորում» ենթակետի կատարման համար:

2018 թվականին, ԾԻԳ-ի կառավարման խորհրդի վերակազմավորմամբ և ՀՀ ԿԳՄՆ նախարարությունում տեղի ունեցած կադրային փոփոխություններով պայմանավորված, այս ուղղությամբ աշխատանքները հետաձգվել են և այնուհետև փոփոխվել չափորոշիչների մշակման մոտեցումները: Արդյունքում որոշվել է վերափոփոխել միայն հանրակրթության պետական չափորոշիչը, որը հիմք կհանդիսանա առարկայական չափորոշիչների և ծրագրերի մշակման համար:

Հաշվի առնելով, որ ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանում ԵՄ-ն՝ ի նպաստ նորարարության» ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվելու էին բնագիտական առարկաների առարկայական չափորոշիչների և ծրագրերի մշակումը՝ կրկնակի աշխատանքից խուսափելու համար ՀԲ-ն առաջարկել է «Կրթության բարելավում» վարկային

ծրագրում ներառված բնագիտամաթեմատիկական առարկաները հանել վերանայվող առարկայական ծրագրերի ցանկից:

2019թ-ին 6 առարկայական ոլորտների չափորոշիչներն ու ուսումնական ծրագրերը վերանայելու նպատակով կազմավորվել է աշխատանքային 5 խումբ, որտեղ ընդգրկված են եղել 33 տեղական փորձագետներ հետևյալ ուսումնական բնագավառների համար՝

- Հայոց լեզու, գրականություն
- Օտար լեզուներ
- Հասարակություն, հասարակական գիտություններ
- Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն
- Արվեստ
- Տեխնոլոգիա

Ծրագրերի նախագծի ամփոփված տարբերակները՝ առարկայական չափորոշիչները և ծրագրերը, ներկայացվել են հանրային քննարկման: Այնուհետև, հիմնվելով մասնագիտական և հանրային քննարկումների արդյունքների վրա, աշխատանքային խմբերը լրամշակել են հանրակրթական առարկայական չափորոշիչները և վերջնական նախագծերը ներկայացրել ԿԳՄՍՆ և ԾԻԳ:

2020թ.-ի երրորդ եռամսյակից աշխատանքային խմբերը մշակել են ուսումնական նյութեր փորձարկող դպրոցների համար՝ ըստ առարկաների և փորձարկող դասարանների: Առաջին փուլով ընտրվել են 20 դպրոցներ՝ հետևյալ բնութագրիչներով. հիմնական, ավագ և միջնակարգ, քաղաքային և գյուղական, փոքր և մեծ, ազգային փոքրամասնություն ունեցող, ինչպես նաև դպրոցներ, որտեղ իրականացվում է ներառական կրթություն: Այնուհետև ընտրված 20 դպրոցների ուսուցիչների շրջանում իրականացվել են ուսուցիչների վերապատրաստումներ, որին հաջորդել է նշված դպրոցներում 6 առարկայական ոլորտների չափորոշիչների և ծրագրերի փորձարկումը: Վերջինս իրականացվել է 2021թ. հունվար ամսից: Իսկ ս.թ. սեպտեմբերից Տավուշի մարզի բոլոր դպրոցներում կփորձարկվեն բոլոր 9 առարկայական ոլորտների չափորոշիչները և ծրագրերը՝ ներառյալ բնագիտամաթեմատիկական առարկաները: 2021թ. հուլիսից հանրակրթական դպրոցների ուսուցիչների շրջանում իրականացվում են տեղեկատվական սեմինարներ ներկայացնելու վերանայված առարկայական չափորոշիչները և ծրագրերը:

Հանրակրթության պետական նոր չափորոշիչը հիմնված է կարողունակությունների (կոմպետենցիաների) վրա, որը գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգի ամբողջականությունն է: Գործող չափորոշիչը շեշտադրում է գիտելիք-կարողություն-արժեքային համակարգ շղթան: Սահմանված են 8 առանցքային կարողունակություններ, որոնցից բխում են վերջնարդյունքներն ըստ կրթական աստիճանների: Յուրաքանչյուր դասարանի համար սահմանված են չափորոշչային վերջնարդյունքներ, որոնք ուսուցչին ուղղորդելու են, թե ինչ գիտելիքներ և կարողունակություններ պետք է ձեռք բերեն աշակերտները և ինչպես իրականացնել գնահատման գործընթացը: Դասավանդման գործիքակազմում շեշտադրվում է գործնական աշխատանքներն ու ուսումնական նախագծերը: Դասավանդման հիմքում աշակերտակենտրոն ուսուցումն է, որտեղ ուսուցիչն ուղղորդում է գործընթացը:


Չափորոշիչների փորձարկման արդյունավետությունն ու խոչընդոտները

Չափորոշիչները վերանայող աշխատանքային խմբերը մշակել են ուսուցիչների վերապատրաստման մոդուլներ: Վերապատրաստման ծրագրում հատուկ ուշադրություն է դարձվել նախագծային ուսուցման և միջառարկայական հարաբերությունների թեմաներին:

Ուսուցիչներն ընդգծել են, որ իրականացված վերապատրաստումները եղել են արդյունավետ նոր մեթոդներ սովորելու, փորձի փոխանակման և գործընկերների հետ համագործակցության տեսանկյունից:

Նոր չափորոշիչներն ընտրված դպրոցներում փորձարկելու ընթացքում ուսուցիչների մեծամասնությունը որևէ խոչընդոտի չի հանդիպել: Որոշ հարցվածներ որպես խոչընդոտ են նշել վերապատրաստման դասընթացներին հատկացված սահմանափակ ժամանակը, համավարակը և դրանով պայմանավորված հեռավար ուսուցումը: Փորձարկման ավարտին փորձարկող ուսուցիչների շրջանում իրականացվել է հետազոտություն¹¹, որին մասնակցել են փորձարկվող 20 դպրոցներից 148 ուսուցիչ:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.4.1. ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՆՉ ԳՈՐԾՈՆՆԵՐ ԵՆ ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԵԿՆԱՐԿԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ




Աղբյուր՝ Ընտրված 20 դպրոցներում փորձարկում իրականացնող ուսուցիչների շրջանում ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից իրականացրած հարցում, 2021 թ.

Ուսուցիչները, աշխատանքային խմբի փորձագետներին հետադարձ կապ և կարծիք տրամադրելով, հնարավորություն են ունեցել մասնակցելու չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակման գործընթացին:

Նոր առարկայական չափորոշիչների փորձարկման արդյունքների վերաբերյալ ուսուցիչների կարծիքն ընդհանուր առմամբ դրական է: Ուսուցիչներն առարկայական չափորոշիչները և ուսումնական ծրագրի արդյունքները համարում են չափելի և արդյունավետ: Ըստ հարցված ուսուցիչների նոր չափորոշիչներն ու ուսումնական պլանները նպատակահարմար են դպրոցական ծրագրում կիրառելու համար: Նոր չափորոշչում և ծրագրերում հաշվի են առնված տարիքային խմբերին ներկայացվող բոլոր պահանջները:


¹¹ Հետազոտության հարցաշարը մշակվել է աշխատանքային խմբերում ընդգրկված միջազգային և տեղական փորձագետների կողմից, իսկ դաշտային աշխատանքներն իրականացվել են ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից: Ի-ՎԻ Քոնսալթինգը իրականացրել է հետազոտության արդյունքների վերլուծություն և ներկայացում:

ԱՐՅՈՒՍԱԿ 3.1.1. ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ



Նշում. գծապատկերում ներկայացված են միայն «Այո» պատասխանները: Աղբյուր՝ Ընտրված 20 դպրոցներում փորձարկում իրականացնող ուսուցիչների շրջանում ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից իրականացրած հարցում, 2021 թ.


ԱՐՅՈՒՍԱԿ 3.1.2. ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ



Աղբյուր՝ Ընտրված 20 դպրոցներում փորձարկում իրականացնող ուսուցիչների շրջանում ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից իրականացրած հարցում, 2021 թ.

Ուսուցիչների կարծիքով նոր չափորոշիչների և ուսումնական ծրագրերի ինտեգրման առաջին փուլում կարող են առաջանալ որոշակի խոչընդոտներ: Այնուամենայնիվ, արդյունավետ ինտեգրման բոլոր անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում (տեխնիկական միջոցների և սարքերի տրամադրում, փոփոխությունների անհրաժեշտության և արդիականության վերաբերյալ իրազեկում շահառուներին, փոփոխության աստիճանական գործընթաց և այլն) գործընթացը կընթանա սահուն և կապահովի հաջող վերջնարդյունք: Ծրագրի դրական արդյունքի վերաբերյալ մտահոգություններ հիմնականում հայտնում են միջինից բարձր տարիքային խմբի մասնագետները, ովքեր երկար տարիներ դասավանդել են ավանդական մեթոդներով:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.4.4. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՌԹՅՈՒՆԸ



Աղբյուր՝ Ընտրված 20 դպրոցներում փորձարկում իրականացնող ուսուցիչների շրջանում ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից իրականացրած հարցում, 2021 թ.

Չափորոշիչներն ու ուսումնական պլանը պետք է ինտեգրվեն դպրոցական ծրագրին, քանի որ դրանք նպաստում են աշակերտների շրջանում վերլուծական մտածողության զարգացմանը: Բացի այդ, նոր սերնդի սովորողների կրթական գործընթացը պահանջում է նորարարական մոտեցումներ:

Չնայած դասագրքերը պարունակում են և՛ տեսական նյութեր, և՛ գործնական առաջադրանքներ, վերջիններս բավարար քանակի չեն և չեն նպաստում տեսական նյութի լիարժեք ամրապնդմանը: Ուսուցիչները դասագրքերի գործնական առաջադրանքները հանձնարարում են որպես տնային աշխատանք, իսկ որպես դասարանական աշխատանք՝ օգտվում են լրացուցիչ ձեռնարկների գործնական առաջադրանքներից կամ մշակվում են գործնական առաջադրանքների սեփական օրինակներ:

Փորձնական դասերն առավել արդյունավետությամբ իրականացնելու նպատակով ուսուցիչների որոշ մասը կիրառել է SS գործիքներ՝ տեսանյութեր, «Moodle» հարթակի կիրառում, էլեկտրոնային գնահատման գործիքներ: Ուսուցիչների մյուս մասը հնարավորություն չի ունեցել փորձարկման ընթացքում կիրառել վերոնշյալ գործիքները, որի հիմնական պատճառը եղել է դպրոցներում տեխնիկական միջոցների և սարքերի բացակայությունը:

Ուսուցիչները պարբերաբար ստուգում են սովորողների գիտելիքներն ու հմտությունները, ինչը նախապայման է սովորողների կրթության արժեքն առավելագույնին հասցնելու համար: Ի լրումն, նրանք նշել են, որ կարողանում են յուրաքանչյուր տարիքային խմբի համար ստեղծել անվտանգ և ապահով կրթական միջավայր, սակայն սովորողների անհատական հետազոտական գործունեություն և նախագծային աշխատանքներ իրականացնելու համար դպրոցները բավարար չափով ռեսուրսներ չունեն:

Ծրագրի առավելությունը կայանում է նրանում, որ ուսուցիչներին տրվում է ազատ և նորարարական ու ստեղծագործական մոտեցումներով գործելու հնարավորություն: Նրանք

բարձր են գնահատում այս փաստը, որ այն մոտիվացնում է նրանց և բարձրացնում պատասխանատվության զգացումը: Նոր չափորոշիչները նաև հնարավորություն են տալիս սովորողներին ինտեգրել դասավանդման գործընթացում և զարգացնել առաջնորդության հմտությունները: Դասավանդման թեմաներն ամրագրված են, սակայն ծրագրի շրջանակներում գործնական առաջադրանքները և գնահատման մեթոդները կարող են բազմազան լինել:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Չնայած այս բաղադրիչի կարևորությանը, ըստ նախարարության, վարկային ծրագրով նախատեսված ռեսուրսները բավարար չեն եղել չափորոշիչների մշակումը, ամբողջական և մասշտաբային փորձարկումն իրականացնելու համար: Չնայած ամբողջ գործընթացը համակարգվել և ուղղորդվել է նախարարության կողմից, այնուամենայնիվ, բնագիտամաթեմատիկական առարկաների անջատումը որոշակի բարդություններ է ստեղծել միջառարկայական կապերի ապահովման ուղղությամբ:
- Նոր չափորոշիչների արդյունավետ ինտեգրման խոչընդոտներից է դպրոցների անբավարար նյութատեխնիկական բազան՝ կահավորումն ու տեխնիկական վերազինումը, մասնավորապես՝ SS գործիքների լիարժեք կիրառման և ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն ուսումնական բնագավառի դեպքում:
- Չափորոշիչների արդյունավետ ներդրման վերաբերյալ հիմնականում մտահոգություն են հայտնում միջինից բարձր տարիքային խմբի մասնագետներն, ովքեր երկար տարիներ կիրառել են ուսուցման ավանդական մեթոդներ: Ընդհանուր առմամբ, նոր չափորոշիչների և դասավանդման մեթոդների կիրառության ուղղությամբ մասնագետները լիարժեք իրազեկման և համապարփակ վերապատրաստումների կարիք ունեն:
- Անհրաժեշտ է վերանայել մանկավարժական կադրեր պատրաստող բուհերի ծրագրերը, որտեղ ներառված կլինեն նոր չափորոշիչնորով դասավանդման հմտությունների առանձնահատկությունները:
- Չափորոշիչների փորձարկման արդյունավետությունը գնահատելիս առանցքային է հաշվի առնել ժամանակի գործոնը, քանի որ այն սերտորեն փոխկապակցված է լիարժեք ինտեգրման և գործարկման տևողության հետ:

ԲԱՂԱԴՐԻՉ 2. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

ՆՊԱՏԱԿԸ

Բաղադրիչի նպատակն է բարձրացնել բարձրագույն կրթության որակը, համապատասխանությունն ու մատչելիությունը, բարելավել և արդիականացնել կրթական և ենթակառուցվածքային կարողությունները: Նշված ուղղություններով ձեռնարկված գործողությունների շարքում առանձնահատուկ է Հայաստանում Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) ձևավորումը և գործարկումը, որը բարձրագույն կրթության ոլորտում նորարարությունները խթանող քաղաքական մեխանիզմ է:

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ծրագրի բաղադրիչ 2-ով՝ «Աջակցություն Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը», նախատեսված գործողությունները կատարվել են: Վերամշակվել են Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) իրականացման ընթացակարգերը: Կազմակերպվել է ՆՄՀ դրամաշնորհների տրամադրման երեք շրջափուլ՝ առաջին (i), երկրորդ (հավելյալ) (ii) և երկրորդ (հիմնական) (iii)՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար վեց շահառու բուհերով: ՆՄՀ ընդհանուր ծրագրի շահառու բուհերի ցանկն ընդլայնելու նպատակով ՆՄՀ դրամաշնորհների տրամադրման երկրորդ (հավելյալ) (ii) փուլի ընթացքում կիրառվել է իրավասության լրացուցիչ չափանիշ, այսինքն՝ ՆՄՀ փորձնական և/կամ ՆՄՀ առաջին փուլի դրամաշնորհառու բուհ չլինելու հանգամանքը:

ՆՄՀ երկրորդ հիմնական (iii) շրջափուլի շրջանակներում 2019թ. հուլիսին դրամաշնորհային պայմանագրեր են կնքվել վեց բուհերի հետ, որոնք դրամաշնորհային ծրագրերի իրագործումը կիրականացնեն մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը:

Այսպիսով, «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում կազմակերպված երեք շրջափուլերի արդյունքում, իրականացվել են 18 դրամաշնորհային ծրագրեր (ի սկզբանե, «Կրթության բարելավում» վարկային ծրագրով որպես թիրախ ընտրված էր դրամաշնորհային 15 ծրագրերի իրականացումը), որոնցից 4 բուհ՝ Երևանի պետական համալսարանը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանն իրականացրել է 2-ական ծրագիր:

Դրամաշնորհների տրամադրման առաջին (i) և երկրորդ (հավելյալ) (ii) շրջափուլերի շահառու բուհերը հաջողությամբ իրականացրել են դրամաշնորհային ծրագրերը՝ կրթության որակի և արդյունավետության բարձրացման, կրթության համապատասխանության ապահովման և մատչելիության բարձրացման ուղղությամբ՝ միաժամանակ զարգացնելով պլանավորման, ծրագրերի մշակման և կազմման իրենց կարողությունները: Ծրագրի իրականացման ընթացքում շահառու բուհերն իրականացրել են պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքները, ներկայացրել են փուլային ֆինանսական ու ծրագրային

հաշվետվություններ: Այդ ժամանակահատվածում ԾԻԳ-ը դրամաշնորհային ծրագրեր իրականացնող 14 բուհերում պարբերաբար իրականացրել է մշտադիտարկման այցեր: Ծրագրի ավարտին շահառու բուհերը ներկայացրել են ամփոփ ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ, որոնք հաստատվել են ՆԱՀ Համակարգող խորհրդի կողմից:

Ինչ վերաբերում է Բաղադրիչի շրջանակներում կազմակերպված երկրորդ հիմնական (iii) փուլով իրականացվող դրամաշնորհային վեց ընթացիկ ծրագրերին, 2019 թվականի 4-րդ եռամսյակից մինչ ծրագրի վերջնական գնահատման հետազոտության պահին ընթանում են բուհերի կողմից իրականացվող գնումների գործընթացներն ու մշտադիտարկման աշխատանքները: Հարկ է, սակայն, նշել, որ համավարակով և պատերազմով պայմանավորված, բուհերի կողմից իրականացվող գնման գործընթացներում ծրագրի ժամանակացույցով նախատեսված ժամկետներից տեղի են ունեցել որոշակի շեղումներ:

Մասնավորապես՝ ծրագրի երկրորդ (iii) հիմնական փուլով ծրագրի ժամկետից էապես շեղվել են Երևանի պետական բժշկական համալսարանը «Ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոն» ծրագրով, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը՝ «Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն» և Վ. Բյուրուպի անվան պետական համալսարանը՝ «ՀայԼինգվոՏեք» ծրագրերով: Երևանի պետական բժշկական համալսարանն, ըստ դրամաշնորհային ծրագրի ղեկավարի ներկայացման, մինչ ծրագրի վերջնաժամկետը հիմնականում կավարտի գնումների գործընթացը, խնդրահարույց է կենտրոնի շինարարական և ներքին հարդարման աշխատանքների ավարտը՝ պայմանագրով նախատեսված ժամկետում: Հայաստանի ագրարային համալսարանն ամբողջությամբ ավարտել է կենտրոնի շինարարական և ներքին հարդարման աշխատանքները, մասամբ ավարտվել են գնումների գործընթացը, խնդրահարույց է գնումների մյուս մասի՝ մուլյաժների ձեռքբերման աշխատանքները՝ պայմանագրով սահմանված ժամկետում: Բյուրուպի անվան պետական համալսարանում մեծապես ավարտվել են կենտրոնի հիմնման և գնումների գործընթացները, խնդրահարույց է կենտրոնի գործարկման համար անհրաժեշտ ծրագրակազմի ձեռքբերումը, ինչպես նաև թվային ենթակառուցվածքներում հայերենի լիարժեք գործառույթյան հիմքերի ապահովմանն ուղղված թվային և վեբ ռեսուրսների, գնահատման և թեստավորման գործիքակազմի աշխատանքները՝ խորհրդատուների և հետազոտողների մասնակցությամբ: Պայմանագրի ժամկետները, ըստ որոշ բուհերում ծրագրերի ղեկավարների պնդման, մի քանի ամիս երկարաձգելու դեպքում, բուհերը հնարավորություն կունենան լիովին ավարտել պայմանագրերով նախատեսված բոլոր աշխատանքները:

Ներկայումս ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի միջև ընթանում են բանակցություններ՝ շահառու որոշ բուհերի պայմանագրերի վերջնաժամկետը երկարացնելու վերաբերյալ: Քննարկումների դրական հանգուցալուծման պարագայում, բուհերը հնարավորություն կստանան հատկացված լրացուցիչ ժամանակահատվածում ավարտին հասցնել պայմանագրով նախատեսված գործողությունները:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐՆ ԱՎԱՐՏԱԾ ԲՈՒՀԵՐԻ ՔԱՆԱԿԸ*

ԱՐԴՅՈՒՆՔ		
	Ավարտի ժամկետ	Կարգավիճակ
Պետություն-մասնավոր հատված-բուհ կողմերի միջև բարելավված համագործակցություն բարձրագույն կրթության ոլորտում (նվազագույնը 7 կոնսորտիում ծրագիր):	2021թ.	Իրականացված
Ծրագրերի մշակման, մշտադիտարկման, գնահատման, գնումների ուղղությամբ վերապատրաստումների միջոցով բուհերի կարողությունների բարելավում:	2021թ.	Իրականացված
ՆԱՀ շրջանակներում շուրջ 18 շահառու բուհեր (նախատեսված 15-ի փոխարեն):	2021թ.	Մասնակի կատարված, ընթացքում է*

* Նշում. դրամաշնորհային 18 ծրագրերից 14-ում ամբողջությամբ իրականացվել են նախատեսված գործողությունները, ընթացիկ 4 ծրագրերը կատարված են մասնակի, ընթացքում են:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վարկային ծրագրի առաջին փուլով բաղադրիչը սկզբնապես ուղղված էր բարձրագույն կրթության արդյունավետ և կայուն ֆինանսավորման մեխանիզմների ձևավորմանը, որի վերջնանպատակն էր մեծացնել բարձրագույն կրթության մատչելիությունը և որակը: Որպես բաղադրիչի խնդիրներ՝ սահմանված էին բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության մշակումը՝ դրանից բխող գործողությունների իրականացմամբ, ուսանողական վարկավորման համակարգի ներդրումը և ՆԱՀ-ի ձևավորումը: Ռազմավարությունը մշակվեց և հավանության արժանացավ ՀՀ կառավարության կողմից 2011 թ., որից հետո իրականացվեցին ռազմավարությունից բխող մի շարք գործողություններ, ընդ որում դրանց մի մասը կատարվեց Ծրագրի շրջանակներից դուրս՝ ԿԳՄՄՆ-ի կողմից: Մասնավորապես՝ ԿԳՄՄՆ-ի կողմից գործարկվեց ուսանողների ֆինանսավորման 2 նոր մեխանիզմ: Առաջինը ուսման վարձի՝ առաջադիմության և կարիքի վրա հիմնված փոխհատուցման համակարգն էր, որի շահառու է դարձել պետական բուհերի շուրջ 2,000 ուսանող (2015/16 ուս. տարում): Երկրորդը լավագույն ուսանողի կրթաթոշակի տրամադրման մեխանիզմի մշակումն ու գործարկումն էր (մոտ 12 մլն. ՀՀ դրամ կազմող կրթաթոշակային ֆոնդը բաշխվել է ՀՀ բուհերից ընտրված շուրջ 35 ուսանողների միջև): Բացի դրանից, ՀՀ կառավարության նախաձեռնությամբ նաև գործարկվել է ուսանողների վարկավորման փորձնական ծրագիր: Ծրագրի շրջանակում ուսանողական վարկավորման համակարգի ներդրման ուղղությունը կասեցվեց ՀՀ կառավարության որոշմամբ, և դրա ֆինանսական միջոցներն ուղղվեցին ՆԱՀ-ի ձևավորմանը: ՆԱՀ-ի հիմնական նպատակ սահմանվեց մրցակցային հիմունքներով դրամաշնորհներ հատկացնել բուհերին և աջակցել նրանց

նորարարական և զարգացման ծրագրերի իրականացմանը և կրթության որակի, համապատասխանության ու մատչելիության բարձրացմանը:

ՆՄՀ-ն հնարավորություն ընձեռեց բուհերին մշակելու և իրականացնելու նորարարական նախագծեր՝ ուսումնական ծրագրերի և մեթոդների արդիականացման, գիտահետազոտական աշխատանքների զարգացման, մասնավոր հատվածի և տնտեսության գերակա ուղղությունների հետ կապերի հաստատման և միջազգային համագործակցության գործընթացներին մասնակցության համար:

ԲԱՂԱԴՐԻՉ 2-Ի ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆՄՀ-ի ձևավորում

2011 թ. ՆՄՀ-ի ձևավորմանն աջակցելու նպատակով ընտրվեցին մեկ միջազգային և երկու տեղական խորհրդատուներ, որոնց կողմից իրականացվեց Հայաստանում ՆՄՀ-ի իրագործելիության ուսումնասիրություն: Ուսումնասիրության հիման վրա սահմանվեցին Հայաստանում ՆՄՀ-ի ձևավորման նպատակները, խնդիրներն ու գործարկման մեխանիզմները, որոնք հստակեցվեցին տարբեր շահառուների (ՀՀ ԿԳ և ֆինանսների նախարարություններ, ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտե, Գիտությունների ազգային ակադեմիա, պետական և ոչ պետական բուհեր, Հայաստանի գործատուների միություն և այլն) հետ հանդիպումների և քննարկումների ընթացքում:

Արդյունքում մշակվեց և ՀՀ կառավարության կողմից 2011 թ. դեկտեմբերին հավանության արժանացավ «Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի ձևավորման հայեցակարգը», որի հիման վրա էլ մշակվեց ՆՄՀ-ի գործարկման ղեկավար ձեռնարկը:

Դրամաշնորհների տրամադրում

2015-19 թթ. իրականացվել է բուհերին դրամաշնորհներ տրամադրելու գործընթացը: Գործընթացն ուղեկցվել է ակտիվ տեղեկատվական արշավով: Մասնավորապես՝ յուրաքանչյուր շրջափուլի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի պաշտոնական կայքէջում և ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում: Շահառու համարվող բուհերին ուղարկվել են մրցույթի վերաբերյալ իրազեկող գրություններ: ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից կազմակերպվել են սեմինարներ, որոնք նպատակ ունեն աջակցելու բուհերին՝ դրամաշնորհային ծրագրի հայտի լրացման և ներկայացման գործընթացներում:

Երեք շրջափուլերի արդյունքում դրամաշնորհային ծրագրի հայտ ներկայացվել է 28 բուհի կողմից: Դրամաշնորհային ծրագրի հայտերի մերժման պատճառներն եղել են տարբեր: Մասնավորապես՝ եղել են հայտեր, որոնց փաթեթը եղել է ոչ լիարեք, կամ դրամաշնորհային ծրագրի ուղղությունը ՆՄՀ Համակարգող խորհրդի կողմից դիտարկվել է ոչ համապատասխան տվյալ շրջափուլով հաստատված գերակա ուղղությանը և այլն:

Բուհերի ներկայացրած հայտերի գնահատման հիման վրա ՆՄՀ-ի համակարգող խորհուրդը երեք փուլով ընտրել է ֆինանսավորման համար ընդհանուր թվով 18 ծրագիր: Ընտրված

ծրագրերն իրականացնող բուհերի հետ կնքվել են դրամաշնորհային պայմանագրեր: Ընտրված ծրագրերից 7-ը կոնսորցիումային ծրագրեր են, որոնք միավորում են մի քանի կառույց (օրինակ՝ բուհեր, հետազոտական կենտրոններ, պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ): ՆԱՀ-ն որպես ֆինանսավորման պարտադիր պայման սահմանել էր բուհի կողմից ծրագրի բյուջեի առնվազն 10% համաֆինանսավորումը: Կոնսորցիումային ծրագրերի բյուջեն տատանվում է 300-600 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի սահմաններում, մինչդեռ առանձին բուհերի ծրագրերի բյուջեն կազմում է մինչև 300 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Ընտրված բուհերի համար «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ը կազմակերպել է վերապատրաստումներ՝ ծրագրերի մշակման, նախագծերի կազմման, փաստաթղթերի լրացման և գնումների կազմակերպման թեմաներով: Բուհերի ներկայացուցիչներն ընդգծում են, որ ծրագրերի առաջարկների կազմման հետ կապված տեխնիկական աջակցությունը շատ օգտակար է եղել, քանի որ շատերը փորձ չունեին նմանատիպ դրամաշնորհների դիմելու:

Տրամադրված դրամաշնորհների հիմնական ուղղություններն են (աղյուսակ 2.1.1)՝

1. Արդիականության և համապատասխանության խթանում

Բարձրագույն կրթության արդիականացմանն ուղղված ծրագրերը նրանք են, որոնք նպաստում են կրթական գործընթացներին գործատուների ներգրավմանը (կրթական ծրագրերի մշակմանը մասնակցելու, ուսումնական պրակտիկայի կազմակերպման միջոցով), աշխատաշուկայի պահանջներին ծրագրերի համապատասխանեցմանը, աշխատաշուկայի ուսումնասիրության կենտրոնների զարգացմանը, ինչը ենթադրում է կարիերայի կենտրոնների ձևավորում և այլն (12 դրամաշնորհ):

2. Արդյունավետության բարձրացում

Այս ուղղությամբ իրականացվող ծրագրերը նպատակ ունեն խթնելու հաստատությունների կառուցվածքային բարեփոխումները, բարելավելու բուհերի կառավարման և որակի ներքին ապահովման համակարգերը, կառավարման տեղեկատվական համակարգերի ձևավորումը և այլն (4 դրամաշնորհ):

3. Մատչելիության բարձրացում

Այս ուղղությամբ իրականացվող ծրագրերը հնարավորություն կտան հասարակության առավել լայն շրջանակներին ներգրավվել բարձրագույն կրթության համակարգում, մասնավորապես՝ ներառելով սոցիալ-տնտեսական ցածր կարգավիճակ ունեցող խմբերին, (հեռավար և օժանդակ ծրագրերի ներդրմամբ) և այլն (2 դրամաշնորհ):

Դրամաշնորհ ստացած բուհերը միանշանակ բարձր են գնահատում դրամաշնորհների ստացումը և հատկապես «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կատարած աշխատանքը՝ ապահովելու ծրագրերի իրականացման սահուն ընթացքը: Բոլոր ծրագրերը հաջողվել են՝ բուհերին ապահովելով որակական նոր հնարավորություններով՝ կրթության որակի և արդյունավետության բարձրացման, համապատասխանության ապահովման և բարձրագույն կրթության մատչելիության մեծացման համար: Բուհերը և ծրագրի այլ շահառուներ նշում են,

որ ծրագրային դրամաշնորհները թույլ են տալիս թիրախավորել և հասնել կոնկրետ արդյունքների՝ միաժամանակ զարգացնելով բուհերի ռազմավարական պլանավորման և ծրագրերի մշակման ու կառավարման հնարավորությունները: Որպես դրամաշնորհային ծրագրի ուղղակի արդյունք, ի լրումն կրթական գործընթացների արդիականացման և որակի բարձրացման, նշվում են միջազգային համագործակցության նոր հնարավորությունները: Ավելին, կոնսորցիումով իրականացված ծրագրերը խթանում են համագործակցությունը բուհերի ու մասնավոր հատվածի միջև և զարգացնում կապը բուհերի ու աշխատաշուկայի միջև: Այսպես, օրինակ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պարագայում համագործակցության տեսանկյունից երաժիշտների և բուհի հեղինակության համար առանցքային են անվանի երաժիշտների և գիտնականների հետ հանդիպումները, վարպետության դասերը, որոնք իրականացվում են ծրագրի շրջանակում հիմնված ինովացիոն ակուստիկ լաբորատորիայում: Հայաստանի ազգային ագրարային համալսարանը գինեգործական կրթության գիտաարտադրական կենտրոնի հիմնման արդյունքում համագործակցություն է ձեռք բերել «EVN» գինու ակադեմիայի հետ, որը նպաստել է ծրագրի կայացմանն ու զարգացմանը՝ ներդնելով իր մանկավարժական և մերչենդայզինգի միջազգային փորձը միջազգային չափանիշներին համապատասխան նորագույն սարքավորումներով հագեցած գինու լաբորատորիայի ընձեռած հնարավորությունները լիովին կիրառելու ուղղությամբ:

Հայ-ռուսական համալսարանի «Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման» կրթագիտական գերազանցության կենտրոնը ծրագրի շրջանակում ձեռք բերված լաբորատոր սարքավորումներով նույն համալսարանի Կենսաինժեներիայի, Կենսաինֆորմատիկայի և Մոլեկուլային կենսաբանության ամբիոնների, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի Մարդու գենոմիկայի և իմունոմիկայի լաբորատորիայի ու Կենսաինֆորմատիկայի գիտական խմբի գիտաշխատողների հետ համագործակցությամբ առաջին անգամ Հայաստանում իրականացրել են նոր կորոնավիրուսի 12 ամբողջական գենոմի վերծանում՝ 3-րդ սերնդի սեքվենավորման կիրառմամբ: Հայ-ռուսական համալսարանի և գերմանական Սաարլանդի համալսարանի միջև կնքված հուշագրի շրջանակում համալսարանի ուսանողները փոխանակման ծրագրով հնարավորություն են ձեռք բերել մեկնել Գերմանիա՝ ուսանելու և պրակտիկայի նպատակով: Նովոսիբիրսկի Ցիտոլոգիայի և գենետիկայի ինստիտուտի հետ համագործակցությամբ իրականացնում են ցողունային բջիջների ստացման ուղղությամբ հետազոտություններ, ստանում են պարբերական մասնագիտական խորհրդատվություն, ինստիտուտի հետ համատեղ ծրագրով դիմել են գիտության կոմիտեի կողմից հայտարարված 3 մրցույթների:

ԵՊՀ-ի Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնը համագործակցում է հայաստանյան մի շարք ընկերությունների՝ «Armenia Wine» գործարանի, «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ»-ի, «Գոլդն Գրեյպ Արմաս»-ի, «Պռոշյանի կոնյակի գործարան»-ի, «Երևանի շամպայն գինիների գործարան»-ի, «Աշտարակ-Կաթ» և «Բջնի և Նոյ» ընկերությունների հետ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիքներով և հմտություններով մասնագետներ պատրաստելու նպատակով: Համալսարանը հուշագիր է կնքել «ՆՈՐՔ» ինֆեկցիոն կլինիկական

հիվանդանոցի հետ «Կենսաբանություն» և «Վարակիչ հիվանդություններ» գիտական առարկաների շրջանակում ուսումնական համագործակցության նպատակով: Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնում իրականացվում են գիտահետազոտական աշխատանքներ՝ համագործակցելով ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան բազմաթիվ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ.

- Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարան, ԱՄՆ
- Կադիսի համալսարան, Իսպանիա
- Ֆլորիդայի համալսարան, ԱՄՆ
- Մարտին-Լյութերի համալսարան, Գերմանիա
- Սաարլանդի համալսարան, Գերմանիա և այլն:

Երևանի պետական համալսարանը, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, Երևանի Գլաժորի համալսարանը, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանը ստեղծված կրթական ենթակառուցվածքների արդյունքում վերանայում են որոշ կրթական ծրագրեր և մշակում նորերը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Ծրագրի շահառու են դարձել Հայաստանի ուսանողական ողջ համակազմի շուրջ 81%-ը (2019-2020 ու. տարվա դրությամբ Հայաստանի պետական, մասնավոր, Երևանի և մարզային, ինչպես նաև միջկառավարական համաձայնագրերի հիման վրա գործող բուհերի ընդհանուր 71,190 ուսանողից 57,400-ը): Ծրագրի շահառու 14 բուհերի, որոնք ունեն Հայաստանում ուսանողների թվով ամենալայն ընդգրկվածությունը, ընձեռվել է հնարավորություն ծրագրերի իրագործման շնորհիվ բուհերում բարձրացնել կրթության որակը, արդյունավետությունն ու մատչելիությունը:

ԱՂՅՈՒՍԱԿ 2.1.1. ՆՄՀ-Ի ԴԻԱՄԱՇՆՈՐՀՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

ԴԻԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲՈՒՀԸ	ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ* (ՀՀ ԴՐԱՄ)
Արդիականության և համապատասխանության խթանում	«Իրավագիտություն մասնագիտության արդիականացում»	Երևանի «Գլաժոր» համալսարան	Մագիստրոսական կրթական ծրագրի ներդրման, պրակտիկ հմտությունների ու կարողությունների զարգացման համար համապատասխան միջավայրի բարելավման և ուսումնական կառուցամասի կատարելագործման միջոցով իրավագիտություն մասնագիտության արդիականացում:	122,618,810
	«ԵՊՀ Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոն»	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	ՀՀ-ում կենսաբանական (մանրէաբանական) կրթության որակի բարելավում և համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին և միջազգային, այդ թվում՝ եվրոպական չափանիշներին:	246,726,000
	«ԵՊԲՀ-ում Ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի հիմնում»	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	ԵՊԲՀ-ի «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի բարելավում և զարգացում:	246,726,000
	«Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում»	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	Նյութատեխնիկական նորագույն բազայի ստեղծում և առկա գիտակրթական ներուժի զարգացում՝ հիմնված գինեգործական կրթության և գիտաարտադրական գործունեության վրա:	102,344,639
	«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	Տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով ՇՊՀ-ի հզորացում՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:	86,873,425
	«Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով»	«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ	Նորարարական գործնական ու հետազոտական հմտություններով և կարողություններով հարուստ մասնագետների պատրաստում՝ նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում:	87,859,485
	«Ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական կրթական գործընթացի արդիականացում՝ նորարարական տեխնոլոգիաների ներդրման և կրթական ծրագրերի վերամշակման միջոցով:	72,655,830

	երաժշտական կրթական գործընթացի որակի բարելավման նպատակով»			
	«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում մասնագիտական կրթության արդիականացում և բարելավում»	«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	Մասնագիտական կրթության և հետազոտական աշխատանքների արդիականացում՝ ժամանակակից գիտահետազոտական կենտրոնի ստեղծման միջոցով:	109,993,396
	«Դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիտորինգի գիտաուսումնական կենտրոն»	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում ժամանակակից գիտակրթական կենտրոն, նոր ստեղծված դեղապատրաստուկների և նրանց բաղադրիչների կառուցվածքային հետազոտությունների և արդեն շուկայում իրացվող դեղամիջոցների որակի հետազոտման ու գնահատման ուղղությամբ միջազգային չափորոշիչներին համապատասխան մասնագետների պատրաստում:	249,417,691
Արդյունավետության բարձրացում	«Տեխնոլոգիական ինովացիոն հարթակ»	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	Գիտատեխնոլոգիական զարգացմանը միտված ժամանակակից կրթագիտական միջավայր, ոլորտի խնդիրների լուծման և համագործակցության նպատակով գործարար ոլորտի գործընկերների հետ համագործակցություն:	246,726,000
	«Ճարտարապետական և Շինարարական մասնագիտությունների ուսումնական ծրագրերի արդիականացումը՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ուսումնագիտափորձարարական լաբորատորիայի ստեղծմամբ»	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	Ճարտարապետական և Շինարարական նյութագիտության, տեխնոլոգիաների ու կոնստրուկցիաների հիմնահարցերին առնչվող մասնագիտությունների կրթական ծրագրերի կատարելագործում, բուհի ուսումնագիտական գործառնությունների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը միտված արդիական ուսումնագիտափորձարարական լաբորատոր բազայի ստեղծում:	243,855,428
	«Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում կրթական ծրագրի արդիականացումը՝ նորագույն փորձասարքերով հագեցած լաբորատորիայի ներդրմամբ»	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	Նորագույն փորձասարքերով հագեցած լաբորատորիայի հիմնում՝ ուղղված տրանսպորտային ուղիների շինարարության և շահագործման կրթական ծրագրի դասավանդման և ուսումնառության կատարելագործմանը, գիտահետազոտական գործունեության զարգացմանը և առևտրայնացմանը, կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներգրավմանը և բուհի ուսումնագիտական գործառնությունների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը:	144,133,596
Մատչելիության բարձրացում	«Հեռակա ուսուցման դասընթացների կազմակերպում՝ հեռավար կրթական տեխնոլոգիաների զուգորդմամբ»	Հյուսիսային համալսարան	Կրթական ծառայությունների մատուցման տարածքային համաչափ զարգացման խթանում խոցելի խմբերի համար՝ ապահովելով որակյալ կրթություն, ներդնելով տեղեկատվական տեխնոլոգիաներ և ապահովելով կրթության շարունակականություն:	42,228,180
	«Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ»	ՀՀ պետական կառավարման ակադեմիա	Հեռավար ձևաչափով «Բիզնես կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիր՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի համատեղ դիպլոմների շնորհմամբ:	79,036,000

ԱՂՅՈՒՍԱԿ 2.1.2. ՆՄՀ-Ի ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐՈՎ ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲՈՒՎՈՐ	ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ* (ՀՀ ԴՐԱՄ)
<p>Արդիականության և համապատասխանության խթանում</p>	<p>«Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն»</p>	<p>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ</p>	<p>Անասնաբուժության ոլորտի կրթական և գիտական գործընթացների արդիականացում, ոլորտի մրցունակ մասնագետների պատրաստում, բուհ-աշխատաշուկա կապի ամրապնդում:</p>	<p>139,642,142</p>
	<p>«Լեզվական և կրթական տեխնոլոգիաների «ՀայԼինգվոՏեք» (HayLingvoTech) գերազանցության կենտրոն»</p>	<p>«Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ</p>	<p>Հայաստանում տեխնոլոգիաները լեզվահասարակագիտական կրթության և հետազոտության զարգացում, որակյալ մասնագետների պատրաստում, թվային միջավայրում և ծրագրակազմերում հայերենի լիարժեք կիրառականության զարգացում, հայերենի իմացության մակարդակների գնահատման գործիքակազմի հիմնում, կրթություն-հետազոտություն-նորարարություն-բիզնես կապի խթանում:</p>	<p>119,360,898</p>
	<p>«Ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոն»</p>	<p>«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ</p>	<p>Հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի հիմնում, որը, ներառելով գիտությունը կրթության մեջ, մաս կկազմի համալսարանական կրթությունը գերիշխող ուսուցողական ուղղվածությունից դեպի հետազոտական ուղղվածության վերափոխման գործընթացին:</p>	<p>248,744,552</p>
<p>Արդյունավետության բարձրացում</p>	<p>«Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման կրթական և գիտական գերազանցության կենտրոն»</p>	<p>Հայ-Ռուսական համալսարան</p>	<p>ՀՌՀ-ի, այլ բուհերի, կենսաբժշկական ոլորտի գիտական և տեխնոլոգիական կազմակերպությունների զարգացում, ազգային և միջազգային համագործակցություն, կրթական, գիտահետազոտական և նորարարական գործունեություն:</p>	<p>122,720,354</p>

* Չի ներառում բուհի կողմից համաֆինանսավորումը:

Դրամաշնորհի ստացման հետ կապված որոշ տեխնիկական գործընթացներ և պահանջներ, ինչպես օրինակ՝ գնումների գործընթացի տևողությունը, սարքավորումների գնման փաստաթղթաշրջանառությունը, ներկայացվող հաշվետվությունների ձևերը և ծավալը, ծրագրի իրականացման ժամկետների և նախահաշվում ծախսերի փոփոխությունների բարդ ընթացակարգերը բուհերի կողմից ընկալվում են որպես խրթին և որոշ դեպքերում՝ ոչ այնքան գործնական: Ինչ-որ չափով սա պայմանավորված է բուհերի՝ նման ծրագրերին մասնակցելու փորձի պակասով: Այսպես՝ որոշ բուհեր նշում են, որ դրամաշնորհի շրջանակներում գնումների ընթացակարգը տարբեր է իրենց ծանոթ պետական հիմնարկների համար պաշտոնապես գործող համակարգից, ինչի պատճառով իրենց մոտ դժվարություններ են առաջացել: Այնուամենայնիվ, բոլոր հարցված բուհերն ընդգծում են, որ, շնորհիվ Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ի աջակցության և ջանքերի, բոլոր տեխնիկական հարցերը լուծվել են և չեն խանգարել ծրագրի լիարժեք իրականացմանը: Ավելին, բուհերը ծրագրի շնորհիվ զարգացրել են պլանավորման, նախագծերի կազմման և դրամաշնորհային ծրագրերի մշակման իրենց կարողությունները, ինչի շնորհիվ իրենց ավելի պատրաստ են զգում մասնակցելու հետագա նմանատիպ ծրագրերին, այդ թվում միջազգային ասպարեզում:

Բուհերի մի մասը նշում է, որ գնումների արդյունքում ունեցել են որոշակի խնայողություններ, որոնք կարող էին ուղղել ծրագրի շրջանակում այլ անհրաժեշտ գործողությունների իրականացմանը: Սակայն հաշվի առնելով, որ դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով նախատեսված է առավելագույնը 24 ամիս, ապա նշված ժամանակահատվածում հնարավոր չէ անդրադառնալ նաև տնտեսված գումարների օգտագործման ուղղությամբ լրացուցիչ աշխատանքների իրականացմանը, ինչը ենթադրում է նոր գնման գործընթացների իրականացում: Բացի այդ, համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկի, դրամաշնորհային ծրագրի ընթացքում տնտեսված գումարների առկայության և դրանց օգտագործման վերաբերյալ ԲՈՒՀ-ի առաջարկները ենթակա են քննարկման և հաստատման ՆՄՀ ՀԽ-ի կողմից:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում ձևավորվել է ՆՄՀ, որը «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակում հաջողությամբ ապահովել է 14 դրամաշնորհային ծրագրերի իրականացումը, իսկ ընթացիկ 6 ծրագրերի ամբողջական իրագործումն ակնկալվում է մինչև ծրագրի ավարտը:

ՆՄՀ-ի գործարկումը և դրամաշնորհային ծրագրերի իրականացումը միանշանակ բարձր են գնահատվում բուհերի և այլ շահառուների կողմից: Մասնավորապես, ընդգծվում է ծրագրերի տեղին լինելը և բուհերում կրթական գործընթացների որակի, արդյունավետության, համապատասխանության և մատչելիության բարձրացմանը իրապես նպաստելը:

Իրականացված ծրագրերի արդյունքում Հայաստանի բարձրագույն կրթության բնագավառում արձանագրվել են հետևյալ ձեռքբերումները.

- Հիմնվել է առնվազն 16 նորարարական լաբորատորիա կամ գերազանցության կենտրոն,
- Առնվազն 15 կենտրոն հագեցվել է նյութատեխնիկական բազայով,
- Մշակվել է առնվազն 7 փաստաթղթային հենք (գործառնական ուղեցույցեր) կենտրոնների գործունեության համար,
- Մշակվել կամ արդիականացվել և ներդրվել է նվազագույնը 16 մասնագիտական ծրագիր,
- Իրականացվել է առնվազն 10 միջազգային փորձի ուսումնասիրություն՝ այցելությունների կամ հեռավար եղանակով,
- Իրականացվել է նվազագույնը 12 մասնագիտական որակի բարձրացման միջոցառում գիտամանկավարժական անձնակազմի համար այցելությունների և վերապատրաստումների միջոցով,
- Ստեղծվել են տասնյակ համագործակցային հարաբերություններ ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա մասնավոր և պետական հաստատությունների և բուհերի միջև:

Բուհերը ձեռք են բերել փորձառություն՝ մասնակցելու խոշոր դրամաշնորհային ծրագրերի, այդ թվում արտաքին ֆինանսավորման աղբյուրներից:

Բուհերը հնարավորություն են ստացել սեփական կառույցներում ձեռք բերված փորձն ընդլայնելով, դրամաշնորհային այլ ծրագրերի մասնակցությամբ բուհերի տարբեր ոլորտներում մասնագիտացող ուսանողների համար ևս հիմնել նորարարական լաբորատորիաներ և գերազանցության կենտրոններ՝ նպաստելով նրանց կրթության որակի բարելավմանը:

Բաղադրիչը խթան է ծառայել բուհերի՝ պլանավորման, նախագծերի կազմման և դրամաշնորհային ծրագրերի մշակման կարողությունների զարգացման համար: Ձեռք բերված փորձառության շնորհիվ բուհերն իրենց ավելի պատրաստ են զգում ինքնուրույն մասնակցելու արտասահմանյան դրամաշնորհային ծրագրերին:

Առաջարկվում է առաջնահերթություն տալ միջազգային համագործակցությունը խթանող և մասնավոր հատվածի հետ համագործակցություն ենթադրող ծրագրերին:

Բուհերի և այլ շահառուների տված գնահատականները թույլ են տալիս հուսալ, որ ՆՄՀ-ի դրամաշնորհները կարող են հատկապես մեծ ազդեցություն ունենալ միջազգային համագործակցության և մասնավոր հատվածի ներգրավվածության զարգացման վրա:

Առաջարկվում է դրամաշնորհներ տրամադրելու հաջորդ փուլերում առաջնահերթություն տալ միջազգային և մասնավոր հատվածի հետ համագործակցությունը խթանող ծրագրերին:

Առաջարկվում է պետական բյուջեով կատարել տարեկան հատկացումներ դրամաշնորհների տրամադրման գործընթացը շարունակական դարձնելու նպատակով:

Ըստ նախարարության, ներկայումս փոփոխվում է բուհերի ֆինանսավորման համակարգը, որը հաշվի է առնելու բուհերում գիտակրթական ենթակառուցվածքների ֆինանսավորման խնդիրները: Պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթային դրամաշնորհների իրականացնելու դեպքում առկա են որոշ կարգավորման բացեր, որոնք խոչընդոտ են ծրագրերի պատշաճ իրականացման համար: Մասնավորապես, այս դեպքերում սահմանափակվում է հիմնական միջոցների ձեռքբերումը:

ՀՀ կառավարությունը նախաձեռնել է նաև գիտության ֆինանսավորման զգալի աճ 2021 և 2022 թվականների համար, որը հնարավորություն է տալիս նաև բուհերին մասնակցել գիտության ֆինանսավորման սխեմաներին՝ գիտակրթական կարողությունների զարգացման համար:

Առաջարկվում է ստեղծել դրամաշնորհային ծրագրերը համակարգող հարթակ՝ վերջիններիս գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ներկայումս շահառու բուհերը ծրագրի շրջանակում առաջացած որևէ խնդրի լուծման, որևէ նոր նյութ կամ սարքավորում ձեռք բերելու նպատակով գնումների գործընթաց սկսելու հարցում, կամ որևէ տեղեկատվության ստացման համար ինքնուրույնաբար են ձեռնարկում համապատասխան միջոցառումներ, ինչը հանգեցնում է ռեսուրսների անարդյունավետ օգտագործմանն ու կառավարմանը: Շահառու բուհերի կողմից առաջարկվում է ստեղծել մի միասնական հարթակ կամ աշխատանքային խումբ, որը կհամակարգեր բոլոր ծրագրերը, կիրականացներ միասնական գնումներ, կապահովեր փորձի և տեղեկատվության փոխանակում, կապահովեր անարգել հաղորդակցում, այն է՝ ծրագրերի համակարգումը կտեղափոխեր ինստիտուցիոնալ մակարդակի վրա:

4. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» վարկային ծրագրով նախատեսված գործողությունները հիմնականում կիրագործվեն մինչև Ծրագրի երեկարացված ժամկետի ավարտը՝ ապահովելով սահմանված կատարողական և արդյունքի ցուցանիշների թիրախների կատարումը: Հուլիսի 31-ի դրությամբ Բաղադրիչ 1-ով կատարվել են արդյունքի 4 ցուցանիշներից 3-ը, իսկ արդյունքի միջանկյալ 12 ցուցանիշներից՝ 6-ը: Ցուցանիշներից ևս 4-ը կատարված կլինեն մինչ ծրագրի ավարտը՝ 2021թ.-ի սեպտեմբերի 30-ը: Թիրախային արդյունքի երկու ցուցանիշ հետազոտության իրականացման պահի դրությամբ արդյունավետ չէ չափել, քանի որ ծրագրով իրականացված գործողությունների ազդեցությունը, որը պետք է հանգեցնի թիրախային ցուցանիշի կատարմանը, ի հայտ է գալու միայն 1-2 տարի անց:

Բաղադրիչ 2-ի համար սահմանված արդյունքային ցուցանիշը 14 ավարտված դրամաշնորհային ծրագրերի դեպքում 100%-ով կատարված է, ընթացիկ 4 ծրագրերի համար ավարտված կլինի մինչ ծրագրի վերջնաժամկետը: Սահմանված միջանկյալ արդյունքի երեք թիրախային ցուցանիշներից երկուսը սույն ուսումնասիրության մշակման պահին ամբողջությամբ կատարված են: Ներկայումս ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի միջև ընթանում են բանակցություններ շահառու բուհերի պայմանագրերի վերջնաժամկետը երկարացնելու վերաբերյալ: Քննարկումների դրական հանգուցալուծման պարագայում բուհերը հնարավորություն կստանան հատկացված լրացուցիչ ժամանակահատվածում ավարտին հասցնել պայմանագրով նախատեսված գործողությունները, այն է՝ Բաղադրիչ 2-ի բոլոր միջանկյալ արդյունքային ցուցանիշները կլինեն կատարված:

Ազդեցություն

Հանրակրթության ոլորտում նախակրթարանների մոդելների ներդրման հաջողված փորձը նպաստել է պետության կողմից դրանց հետագա ընդլայնման համար նպատակային միջոցների հատկացմանը պետական բյուջեում: Ուսումնասիրությունները փաստում են դպրոցին երեխաների պատրաստվելու մակարդակի բարելավումը, որը նպաստելու է կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ընդլայնմանը հատկապես մարզերում:

Ավագ դպրոցների հիմնանորոգումը որակապես փոփոխել է կրթության պայմանները, որի դրական ազդեցությունը սովորողների հաճախելիության և ուսման նկատմամբ վերաբերմունքի վրա արդեն իսկ նկատելի են, և ընդլայնման միտում ունի: Հիմնանորոգված դպրոցները բարձրակարգ կրթական միջավայր են ապահովում, ոչ միայն տվյալ բնակավայրի այլև շրջակա բնակավայրերի բնակիչների համար:

Ավագ դպրոցներում լաբորատոր ենթակառուցվածքի վերազինումը, էլեկտրոնային կրթական նյութերի, գործիքների ներդրումը և դպրոցների SCS միջոցներով համալրումը նպաստելու է դասապրոցեսում գործնական աշխատանքների բաղադրիչի ավելացմանը

և սովորողների կողմից նյութի յուրացմանը: Ծրագրի կողմից իրականացված որոշ գործողություններ կարևոր ներդրում են ունեցել Հայաստանի կրթական համակարգում Կովիդ-19 համավարակով պայմանավորված մարտահրավերները հաղթահարելու տեսանկյունից, մասնավորապես, կրթական պրոցեսի հեռավար եղանակով իրականացնելուն:

Ինտեգրացված կրթական տեղեկատվական համակարգը կրթական համակարգի մշտադիտարկման և կառավարման համար կարևոր նշանակություն ունի: Այն հնարավորություն է տալիս պետական մարմիններին և բոլոր այլ շահագրգիռ կողմերին իրական ժամանակում ստանալ մանրամասն տեղեկատվություն կրթական համակարգի վերաբերյալ:

Կրթության բարելավման առաջնային գործոններն են կրթական չափորոշիչները ու ծրագրերը և ուսուցչական կազմի որակավորումը: Վերանայված առարկայական չափորոշիչների և ծրագրերի փորձարկման արդյունքները դրական են գնահատվել ուսուցիչների կողմից, սակայն դրանց ամբողջական ներդրումը և ազդեցությունը երկար ժամանակ է պահանջում:

Բարձրագույն կրթության ոլորտում Նորարարությունների մրցակցային հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհները նպաստել են բարձրագույն կրթության որակի, համապատասխանության և հասանելիության բարելավմանը: Դրանք նպաստել են նաև բուհերի և մասնավոր հատվածի միջև և միջազգային համագործակցությունների ձևավորմանը: Դրամաշնորհների իրականացման փորձառության և համապատասխան հմտությունների ձևավորումն ակնկալվում է, որ կնպաստի բուհերի հաջող մասնակցությանը տեղական, տարածաշրջանային, միջազգային դրամաշնորհային և համագործակցային ծրագրերին:

Ծրագրի արդյունավետության բարձրացման գործոն է իրականացված միջոցառումների միջև առկա փոխազդեցությունը: Օրինակ՝ ենթաբաղադրիչ 1.2-ի շրջանակում թիրախավորված ավագ դպրոցների հիմնանորոգումն ու բոլոր ավագ դպրոցներում բնագիտական առարկաների ուղղվածությամբ լաբորատորիաների հիմնումը, ենթաբաղադրիչ 1.3-ի շրջանակում առարկաների դասավանդման և ուսումնական հաստատությունների վարչարարության ընթացքում SCS կիրառման ուղղությամբ ուսուցիչների և վարչական աշխատողների վերապատրաստումները և ուսումնական գործընթացներում SCS գործիքների գործածումը, ինչպես նաև ենթաբաղադրիչ 1.4-ի շրջանակում առարկայական չափորոշիչների մշակումն ու ներդրումը միտված են նպաստելու հանրակրթության ընդհանուր որակի բարելավմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԴՊՐՈՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ ԵՎ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՈՒՄ

Աղյուսակ Հ.1. Իրականացված հարցազրույցների ցանկ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆ
ՀՀ ԿԳՄՄՆ	Ժաննա Անդրեասյան	Նախարարի տեղակալ
ԾԻԳ	Արմինե Խաչատրյան	Ենթաբաղադրիչի ղեկավար
ՀՀ մարզպետարանների աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Ալբերտ Մկրտչյան	Վարչության պետ (Արարատ)
	Սոնյա Բուդաղյան	Վարչության պետ (Արմավիր)
	Կարեն Զազյան	Վարչության պետ (Գեղարքունիք)
	Հրայր Կարապետյան	Վարչության պետ (Շիրակ)
	Մերի Գանդալյան	Վարչության պետ (Սյունիք)
	Արփիար Ղազարյան	Վարչության պետ (Վայոց Ձոր)
Նախկին կրթության ազգային ինստիտուտ	Խորեն Մարգարյան	Ֆինանսական մասով ղեկավար
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	Հեղինե Խաչատրյան	Սկզբնական կրթության ֆակուլտետի ղեկան
	Սվետլանա Մարության	Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոն

Իրականացված ֆոկուս-խումբ քննարկումներ¹

- Ֆոկուս-խմբային քննարկում շահառու նախակրթարանների 11 տնօրենների հետ՝ Կոտայքի, Շիրակի, Արմավիրի, Սյունիքի, Արարատի, Գեղարքունիքի մարզերից և Երևանից, 27.05.2021 թվական:

¹ Ֆոկուսային խմբի քննարկումներն իրականացվել են հատուկ մշակված ուղեցույցի միջոցով, որը ներկայացվել է ԾԻԳ-ին միջանկյալ հաշվետվությամբ:

- Ֆոկուս-խմբային քննարկում շահառու նախակրթարանների 12 դաստիարակների հետ՝ Կոտայքի, Շիրակի, Արմավիրի, Սյունիքի, Արարատի, Գեղարքունիքի մարզերից և Երևանից, 27.05.2021 թվական:

Տվյալների և տեղեկատվության աղբյուր փաստաթղթեր

- Մոնիտորինգ հետազոտություն «Baker Tilly»-ի կողմից
- ԿԾԿ ԾԻԳ-ի եռամսյակային ամփոփ հաշվետվությունները միկրոձրագրի շրջանակում իրականացված աշխատանքների վերաբերյալ
- ԿԾԿ ԾԻԳ-ի ամփոփ տվյալներ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում 2015-2020 թվականների ընթացքում հիմնված բոլոր 136 նախակրթարանների գործունեության, դրանցից յուրաքանչյուրում ընդգրկված երեխաների թվի, տարիքի և սեռի վերաբերյալ

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Աղյուսակ Հ.2. Իրականացված հարցազրույցների ցանկ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԱՆՁ	ՊԱՇՏՈՆ
ՀՀ ԿԳՄՍՆ	Ժաննա Անդրեասյան	Նախարարի տեղակալ
ԾԻԳ	Գրիշա Բաղդասարյան	Ենթաբաղադրիչի ղեկավար
Լաբորատոր սարքավորումների ցանկը կազմած փորձագետ	Գագիկ Գրիգորյան	Ֆիզիկա առարկայի փորձագետ
Լաբորատոր սարքավորումների ցանկը կազմած փորձագետ	Մերի Հովսեփյան	Կենսաբանություն առարկայի փորձագետ
Լաբորատոր սարքավորումների ցանկը կազմած փորձագետ	Քնարիկ Բոդյան	Քիմիա առարկայի փորձագետ
Լաբորատոր սարքավորումների ցանկը կազմած փորձագետ	Սեյրան Սուվարյան	Աշխարհագրություն առարկայի փորձագետ
Մեծամորի ա/դ	Մայիս Նիկողոսյան	Տնօրեն
Նոյեմբերյանի ա/դ	Սուսաննա Բուդաղյան	Տնօրեն
Մարտունու ա/դ	Վարդան Ավետիսյան	Տնօրեն
Արարատի ա/դ	Հովհանես Նահապետյան	Տնօրեն
Հրազդանի N 1 ա/դ	Հասմիկ Հայրապետյան	Տնօրեն
Գյումրի քաղաքի Ակադեմիական վարժարան	Արմեն Մարտիրոսյան	Տնօրեն
Ջերմուկի կրթահամալիր	Արմինե Արսենյան	Տնօրեն
Ապարանի ա/դ	Նվարդ Բարսեղյան	Տնօրեն
Գյումրու տնտեսագիտական վարժարան ՊՈԱԿ	Նառա Չախոյան	Տնօրեն
Վանաձորի բնագիտամաթեմատիկական թեքումով հատուկ դպրոց	Արմեն Ծատուրյան	Տնօրեն

Գորիսի N 4 ա/դ	Արմինե Շեգունց	Տնօրեն
Թիվ 65 ավագ դպրոց	Ռաֆայել Բարսեղյան	Տնօրեն
Թիվ 159 ավագ դպրոց	Զարինե Ղազարյան	Տնօրեն

Իրականացված քանակական հետազոտություն¹

- Քանակական հարցման ընտրանքը կազմում է բնագիտական առարկաների գծով ժամանակակից ռեսուրսներով կահավորված լաբորատորիաներով վերազինված 99 ավագ դպրոցների 30%-ը՝ 35 ավագ դպրոց: Լաբորատորիաներով վերազինված ավագ դպրոցների աշխարհագրական և քանակական բաշխվածության համամասնությամբ ընտրվել են 35 դպրոցներն ըստ վայրի և քանակի: Քանակական հարցումներն իրականացվել են ընտրված 35 ավագ դպրոցներից 101 ուսուցիչների շրջանում՝ միջինում յուրաքանչյուր դպրոցից մեկական ուսուցիչ հետևյալ բնագիտական առարկաներից՝ ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն:

Աղյուսակ Հ.3. Ընտրանքի բաշխվածությունն ըստ վերազինված ավագ դպրոցների բաշխվածության

ՄԱՐԶ	ԴՊՐՈՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ	ԸՆՏՐՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐ	ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿ
Արագածոտնի մարզ	3	3%	1	3
Արարատի մարզ	5	5%	2	5
Արմավիրի մարզ	5	5%	2	5
Գեղարքունիքի մարզ	6	6%	2	6
Լոռու մարզ	14	14%	5	14
Կոտայքի մարզ	11	11%	4	11
Շիրակի մարզ	10	10%	4	10
Սյունիքի մարզ	4	4%	1	4
Վայոց ձորի մարզ	3	3%	1	3
Տավուշի մարզ	4	4%	1	4
Երևան	34	34%	12	35
Ընդհանուր	99	100%	35	101

- Քանակական հարցման ընտրանքը կազմում է 99 լաբորատորիաներով վերազինված ավագ դպրոցների 30%-ը՝ 35 ավագ դպրոց: Յուրաքանչյուր 35 ավագ դպրոցից, պատահականության սկզբունքով հարցվել է 10 աշակերտ՝ 5-ական 10-րդ և 11-րդ դասարաններից: Ենթադրվել է, որ ուսումնառությունը շարունակելու նպատակով

¹ Քանակական հարցումներն իրականացվել են հատուկ մշակված հարցաշարերի միջոցով, որոնք ներկայացվել են ԾԻԳ-ին միջանկյալ հաշվետվությամբ:

մասնավոր պարապմունքներով ծանրաբեռնվածության պատճառով ավագ դպրոցների 12-րդ դասարանի աշակերտները ցուցաբերում են հաճախելիության ցածր մակարդակ, և հետևաբար՝ կարող են ունենալ ավագ դպրոցի վերաբերյալ ցածր տեղեկացվածություն: Ուստի՝ այս հետազոտության շրջանակում վերջիններս չեն հարցվել:

Աղյուսակ 4.4. Ընտրանքի բաշխվածությունն ըստ վերազինված ավագ դպրոցների բաշխվածության

ՄԱՐԶ	ԴՊՐՈՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ	ԸՆՏՐՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐ	ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ
Արագածոտնի մարզ	3	3%	1	10
Արարատի մարզ	5	5%	2	20
Արմավիրի մարզ	5	5%	2	20
Գեղարքունիքի մարզ	6	6%	2	20
Լոռու մարզ	14	14%	5	50
Կոտայքի մարզ	11	11%	4	40
Շիրակի մարզ	10	10%	4	40
Սյունիքի մարզ	4	4%	1	10
Վայոց ձորի մարզ	3	3%	1	10
Տավուշի մարզ	4	4%	1	10
Երևան	34	34%	12	120
Ընդհանուր	99	100%	35	350

Տվյալների և տեղեկատվության աղբյուր փաստաթղթեր

- Վերազինված դպրոցների և դասարանների վերաբերյալ առկա տվյալների և հաշվետվությունների ուսումնասիրություն:
- ՀՀ դպրոցներում ժամանակակից կրթական ռեսուրսներով դասարանների համալրվածության վերաբերյալ առկա տվյալների և հաշվետվությունների ուսումնասիրություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Աղյուսակ Հ.5. Իրականացված հարցազրույցների ցանկ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆ
ՀՀ ԿԳՄՄՆ	Ժաննա Անդրեասյան	Նախարարի տեղակալ
ԾԻԳ	Հարություն Ղարիբջանյան	Ենթաբաղադրիչի ղեկավար
ԿՏԱԿ	Արտակ Պողոսյան	Տնօրեն

Իրականացված ֆոկուս-խումբ քննարկումներ և քանակական հետազոտություններ¹

- Ֆոկուս-խմբային քննարկում «Ազենս Յունիվերսարի դե Լա Ֆրանկոֆոն» կազմակերպության կողմից վերապատրաստված 7 տեղական վերապատրաստողների հետ, 09.06.2021 թվական:
- Քանակական հետազոտություն վերապատրաստված ուսուցիչների և վարչական աշխատակիցների շրջանում. վերապատրաստված անձանց մեկ միասնական տվյալադարանի բացակայության և քվոտավորման անհնարինության պատճառով քանակական հարցման քվոտավորում ըստ հարցվողի տարիքի, աշխարհագրության, առարկայի, չի իրականացվել: Վերապատրաստման բոլոր մասնակիցներին էլ փոստի միջոցով ուղարկվել է հետազոտության հարցաշարը և մինչ դաշտային աշխատանքների վերջնաժամկետի ավարտը ստացվել է 463 պատասխան, որն ամբողջությամբ ներառվել է վերլուծության մեջ:
- Քանակական հետազոտություն Երևանից և ՀՀ մարզերից 4 առարկաների ուսուցիչների շրջանում էլեկտրոնային կրթական նյութերի վերաբերյալ: Հարցման վերաբերյալ հայտարարությունը նախապես շրջանառվել է ՏՀՏ համակարգում ուսուցիչների համար նախատեսված «մատյան» բաժնում: Այնուհետև հարցաթերթը տեղադրվել է նույն հարթակում և բաց է եղել այնքան ժամանակ, մինչև հարցումների անհրաժեշտ քանակը (350 պատասխան) լրանալը: Մինչ դաշտային աշխատանքների ավարտը ստացվել է 2,264 պատասխան, որոնք ամբողջությամբ ներառվել են վերլուծության մեջ:

Տվյալների և տեղեկատվության աղբյուր փաստաթղթեր

- ԿԾԿ ԾԻԳ-ի եռամսյակային ամփոփ հաշվետվությունները միկրոծրագրի շրջանակում իրականացված աշխատանքների վերաբերյալ
- ԿՏԱԿ-ի գործունեության ամփոփ հաշվետվություններ, 2016-2021թթ.

¹ Ֆոկուսային խմբի քննարկումներն ու քանակական հետազոտություններն իրականացվել են հատուկ մշակված ուղեցույցի և հարցաշարերի միջոցով, որոնք ներկայացվել են ԾԻԳ-ին միջանկյալ հաշվետվությամբ:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ՝ ԿՐԹԱԿԱՐԳԻ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Աղյուսակ Հ.6. Իրականացված հարցազրույցների ցանկ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆ
ՀՀ ԿԳՄՄՆ	Ժաննա Անդրեասյան	Նախարարի տեղակալ
ԾԻԳ	Լիլիթ Շավարշյան	Ենթաբաղադրիչի ղեկավար
Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն (ԿԶՆԱԿ)	Արտաշես Թորոսյան	Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Առարկայական չափորոշիչներ և ծրագրեր մշակող աշխատանքային խմբեր	Կարինե Հարությունյան	Հասարակություն, հասարակական գիտություններ
	Սերոբ Խաչատրյան	
	Թամարա Ալեքսանյան	Հայոց լեզու, գրականություն
	Մարիամ Պետրոսյան	Արվեստ
	Քրիստինե Սողիկյան	Օտար լեզու
	Էռնեստ Ավանեսով	Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն

Տվյալների և տեղեկատվության աղբյուր փաստաթղթեր

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439 N որոշում
- ԿԾԿ ԾԻԳ-ի եռամսյակային ամփոփ հաշվետվություններ
- Առարկայական ուղղվածությամբ մշակված մոդուլներ և ուսումնական նյութեր

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՅԱԿՑԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՉԱՐԳԱՑՄԱՆԸ

Աղյուսակ Հ.7. Իրականացված հարցազրույցների ցանկ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆ
ՀՀ ԿԳՄՄՆ	Ժաննա Անդրեասյան	Նախարարի տեղակալ
ԾԻԳ	Լիանա Մամյան	Բաղադրիչի ղեկավար
Վեց դրամաշնորհային ծրագրեր իրականացրած բուհերում ծրագրի ղեկավարներ	Արեգ Գրիգորյան	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
	Արամ Բայկով	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
	Կոնստանտին Ենկոյան	
	Վաչագան Մելքոնյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
	Սոնա Ծառուկյան	
	Կարեն Թոշունյան	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
	Աննա Մկրտչյան	
	Հովիկ Մելքոնյան	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ
	Ռիմա Այդինյան	Երևանի «Գլաձոր» համալսարան
	Նարինե Ավետիսյան	Երևանի պետական կոնսերվատորիա
	Սյուզաննա Սարգսյան	«Հյուսիսային համալսարան»
	Քրիստինա Ծառուրյան	«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
	Արսեն Առաքելյան	Հայ-Ռուսական համալսարան
Վարազդատ Հովհաննիսյան	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	

Իրականացված ֆոկուս-խումբ քննարկումներ¹

- Երկու ֆոկուս-խմբային քննարկում շահառու բուհերի ուսանողների մասնակցությամբ, 26.06.2021 թվական:

Տվյալների և տեղեկատվության աղբյուր փաստաթղթեր

- Նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջանակներում հատկացված դրամաշնորհների գործընթացի գնահատման հաշվետվություններ,
- Բուհերի կողմից իրականացված դրամաշնորհային ծրագրերի ամփոփ հաշվետվություններ,
- ՆԱՀ շրջանակներում հատկացված դրամաշնորհների հայտերը,
- Դրամաշնորհային ծրագրերի իրականացման մշտադիտարկման հաշվետվություններ

¹ Ֆոկուսային խմբի քննարկումներն իրականացվել են հատուկ մշակված ուղեցույցի միջոցով, որը ներկայացվել է ԾԻԳ-ին միջանկյալ հաշվետվությամբ: